Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

281

Ս. Վահրամեան

Ծաղրագրեր

(Հայրենի Զրոյցներ)

891.99
Ա-42
858
ԱՋԱՐՈՆՅԱՆ Ա.
Հ ա յ ք բ ո ր դ ը

891.99
Ա-42

Ե. ԱՋԱՐՈՆՅԱՆ

ԸՆԹԵՐՑԱՄՐՈՒՀ

ՀԱՅՔՈՒՐԳԸ

(Հայրենի Զրույցներ)

Ա 8 58
4018

1926

Հրատարակութեան եւ թարգմանութեան ամէն իրաւունք վերապահուած է բացառապէս հեղինակին բոլոր երկրներում:

HAIRENIK PRESS, BOSTON, MASS., U. S. A.



ՃԱՄԲՈՐԴԸ

ՃԱՄԲՈՐԴԸ

I

«Աշխարհէմէճ բէզարիլիմ»
ՍԱՑԱԹ-ՆՕՎԱ

Մասսի ոտքերին՝ Արարատեան դաշտի գիւղերից մէկում, քառասուն տարուց ի վեր տիրացու էր Սօղոն, միաժամանակ ժամկոչ, մեռել լուացող ու գերեզմանափոր։

Փոքրիկ մարդ էր նա, կարճահասակ ու վտիտ՝ ինչպէս բոստանի խրտուիլակ. պարանոցը միշտ մի փոքր թեք՝ դէպի ձախ, որ նրան տալիս էր աւելի հեզ, աւելի խղճուկ տեսք. երկար, ճերմակ մազերը անխնամօրէն ծեծում էին նրա ուսերը, երբ շտապ-շտապ քայլում էր, կամ եռանդով քաշքշում եկեղեցու զանգակների թելերը։ Երեխայի պէս փոքրիկ ու երկարուկ դէմք ունէր, անուշ ու թախծոտ՝ ասես միշտ լացի պատրաստ. մէրուքի փոխարէն մի փունջ նօսր ու կոշտ մազեր ծնոտն ի վեր ցցուած էին դէպի բերանը. նոյնպէս ցանցառ բեխեր հազիւ էին ծածկում նրա վերի շրթունքը. մանրիկ, կլոր աչքերը յարաշարժ էին ու վախկոտ՝ ինչպէս մշտական վտանգի առաջ։

Սօղոյի զգեստը մի հաստիկ արխալուղ էր, կապոյտ կտորից, որի երկայն փէշերը իջնում էին

մինչեւ սրունքները. ծերունու չորացած, վոքրիկ մարմինը իսպառ կորչում էր իր զգեստի մէջ, այնպէս որ հեռուից նայողը միայն չարժուն արխալուղն էր տեսնում եւ կատարին մի ծեր վոքրիկ գլուխ ցցուած: Ուշադիր հայեացքն սակայն, հեշտ կը նկատէր, որ այդ զգեստը Սօղոյի վրայ ճեւացած-կարած չէ եւ նախ քան ծերունու վտիտ ուսերից կախուելը, երկար ծառայել է ուրիշին, իր իսկական տիրոջը, անշուշտ, որեւէ հանգուցեալի: Մէջքը պինդ սղմուած էր մի հաստ բարաքով, որ սկզբում երեւի ճերմակ էր եղել եւ վերջում կեղտի երեսից հողի գոյն ստացել: Ծերունին, սովորաբար տաք եղանակներին, ոտաբոբիկ էր եւ միայն հանդիսաւոր օրերին ու ձմրան ցրտերին հագնում էր մի զոյգ հնամաշ լայն մաչիկներ, որոնք նոյնպէս ուրիշի պիտի լինէին, որովհետեւ Սօղոն հազիւ էր քաշ տայիս իր ոտքերով եւ չատ գոհ էր, երբ կարողանում էր ազատուել նրանցից:

Ու քառասուն տարուց ի վեր տիրացու Սօղոն — ինչպէս կոչում էին նրան գիւղում — եկեղեցու գրաւալի առջեւն էր:

Եւ այնպէս նման էին իրար տիրացուն ու գրաւալը. մէկն իր երկար արխալուղով, որի տակից երեւում էին միայն մերկ, ոսկրոտ սրունքները, եւ միւսը՝ իր նոյնքան երկար ու մութ գոյնի ծածկոցով, որ հազիւ բաց էր թողնում վայտէ ոտների ծայրերը: Երկսի էլ բարձրութիւնը նոյնն էր. թըւում էր, թէ այդ մարդուկն ու գրաւալը մի օր միասին են բուսած եկեղեցում, եւ եթէ յանկարծ անյայտանան, իրենց հետ կը տանին եւ՛ երգ ու ա-

ղօթք, եւ՛ խունկ ու մոմ, ու ժամասացութիւնը կը դադարի:

Տիրացու Սօղոն խօսուն գրաւալն էր:

Գրաւալը՝ համր տիրացուն:

Եղբայրները էին անբաժան:

Քառասուն տարուց ի վեր քանի՛ սերունդներ էին տեսել եկեղեցում տիրացու Սօղոյին իր մանրիկ, կաքաւուն քայլերով դասից սեղան, սեղանից՝ խորան, ապա դէպի զանգակները արտորալիս, մերթ ժամաչափիկը հագած՝ բուրվառը ձեռքին, մերթ զանճանակ չրջեցնելիս, եւ մերթ գրաւալի առաջ, քահանայի կողքին հաստ սաղմոսագրքի կամ չարականի վրայ կռացած:

Բոլոր մկրտուող մանուկների գլխին նա էր մեռոնած սուրբ ջուրն ածել. բոլոր նորապսակներին նա՛ էր առաջնորդում, սեղանի առջեւ կանգնեցնում. բոլոր հանգուցեալներին նա՛ էր վերջին լուացումը տալիս, եւ ամէն առաւօտ, երեկոյ նա՛ էր եկեղեցու զանգակները ճնկճկացնում:

Այս չէր բոլորը, տիրացու Սօղոն եկեղեցու տեսանելի ոգին էր, գիւղի կենդանի, արթուն խիղճը, աշխարհի ցաւ ու հոգսից վեր իշխող ծածուկ խորհրդի վարպետը: Նա բոլոր ընտանիքների, ծխականների վերուղիրը գիտէր, ու ամէն մէկի մասին իր խօսքն ու խրատն ունէր.

— Քա՛ւոր Ցախօ, ասում էր նա մէկին, երեխի կնունքը չատ մի ուշացրէք, Աստծուն դուր չի գայ. հայ-քրիստոնեայի ճակտին մեռոն պէտք է. «Համբարձի գաչս իմ ի լերինս», վերջացնում էր նա սաղմոսի որեւէ կտորով, որ սովորաբար քնաւ

կապ չունէր նիւթի հետ, եւ որ սակայն լսողին ազդում էր:

— Հա՛, հա՛, արդար է, պատասխանում էր Յակօն, դէ՛, ցաւի, դարդի տէր ենք, ձեռներս չը հասաւ, վարուցանքը չը թողեց, ներող կը լինես տիրացու ջա՛ն. չուտով կնունքը կ՚անենք:

— Հէ՛քօ բալի, դառնում էր նա պատահած պառաւին, թոռիդ չատ երկար նչանած մի՛ պահիր, ջուրը որ ջուր է, թէ չատ պահես իր տեղում, կը հոտի, ջահիլի ոտքին հազար չար կայ կապուած. հարսնիքը չուտ արէք, «քանզի ո՞վ իցէ մարդ, որ ոչ մեղիցի»... Այս դէպքերում Սօղոն խօսում էր չչնչիւնով, նիւթը փափուկ էր, եւ պատասխանն էլ լինում էր խօսակից պառաւի գլխի շարժումը:

— Սա՛քօ ախպէր, տնա՛չէն, օղորմած հոգի հօրդ տապանաքարը չատ ուշացաւ, Սուրբ Խաչը մօտ է ախր, հօ էս տարի էլ անքար չէք թողնի անճար հալիւորին, ախր «մարդոյ որպէս խոտոյ են աւուրք»...

—Օղորմին ծնողացդ, տիրացու ախպէր, իրաւ է, մեղք եղաւ. էս կալ ու կուտը վերջացնենք, քարը կը բերեմ, պատրաստ է:

Եւ այսպէս ամէն օր, տարին տասներկու ամիս...

Եկեղեցու զարդն էր տիրացու Սօղոն. զիլ, գալարուն ու քաղցր ձայն ունէր, երգում էր սրտով, աւիւնով եւ ամենքին փառաւորում:

— Քաղցր «բառ» ունի մեր տիրացուն, ասում էին գիւղացիք: Ճշմարիտ է, իր երգած չարական-

ներն ու մեղեդիները յաճախ այնքան նման էին իրար, որ ասես նա միշտ միեւնոյն բանն էր երգում. յետոյ թէեւ կոկորդը կլկլացնում էր, բայց ելեւէջներ չէր սիրում եւ ձայնը մնում էր միշտ բարձր, առաստաղի տակ քաշ ընկած, բայց եւ այնպէս կարողանում էր ժամաւորներին յուզել իր ձայնի զորզոջով եւ յուղարկաւոր կանանց լացացնել իր ողբաձայն «դանձերով»: Ուրախ չարականներ՝ Աստուածածնին, Ծննդեան ու Յարութեան նուիրուած երգերի մասնաւոր վարպետն էր Սօղոն. գիւղական պարերի բոլոր եղանակները խառնում էր իրար, գլուխն օրօրում եւ երկար մազերը ցնդում երգելիս: Երջանիկ յափշտակութեան ժամեր էին դրանք, եւ ամէնքը՝ աղօթաւորներ ու սրբեր, ժլատում էին փոքրիկ մարդուն:

Երգելը լաւ էր, միշտ լաւ էր...

Տիրացուի դժբախտութիւնն սկսում էր սաղմոսների ու մարգարէութիւնների ընթերցումների հետ:

Եթէ երգը հնար էր տալիս նրան անհասկանալի ու խրթին բառերի, դժուարին անունների վրայից կլկլացնելով սահել ու անցնել, կարդալու պահուն փրկութիւն չը կար: Ու տիրացուն բնաւ չէր սիրում հաստափոր ճաշոցը, ուր այնքան անըմբռնելի, անողորմ բառեր ու հոգեհան անուններ կային — Թշնամիների մի չար բանակ խեղճ Սօղոյին: Աւելով ատում էր «Նաբուգոդոնոսոր» թագաւորին, որը՝ գիտէր, հեթանոս է, եւ որ նա արտասանում էր նա-կատուն-էսօր. չէր սիրում «Փարաւոն ու Եգիպտոս», եպիսկոպոսն արտասանում էր՝ «եկիս-

պոկոս», իսկ Բեհեղզեբուղից պարզապէս սոսկում էր, լեզուն իսպառ փակւում էր, մանաւանդ՝ որ դիտէր, թէ նա սատանաների դլխաւորն է: Եւ երբ չատ էր չարչարւում այս անուան վրայ, քթի տակ մոմոում էր.

— Ցիսո՛ւս Քրիստոս, նահվա՛թ չարին:

Քառասուն տարի չարունակ սաղմոս, ճաչոց, ժամագիրք ու մաշտոց էր քաղել տիրացու Սօղոն, ու դարձեալ ամէն անգամ խճճւում էր խրթին բառերի ցանցի մէջ, ինչպէս թռչունը թակարդի թելերի մէջ:

Ու այդ ժամերին տիրացուն դառնում էր իսպառ խղճալի, ձայնը դողդողում էր, միրուքը անյուսօրէն ցնցւում էր ներքին յուղմունքից, չըրթունքները կծոտում էր, ասես արցունքը զսպելու համար երեխայի պէս:

Գիւղացիք սիրում էին նրան. սիրում էին նրա զիլ, կլկլան ձայնը, նրա զանդակների ճնկճնկոցը, սիրում էին նրա բուրվառը, որ Սօղոն չարժում էր կիսաշրջանով՝ ինչպէս սերմնացան սերմ նետելիս. սիրում էին մանաւանդ՝ նրա մանկական խոովքը ընթերցումների ժամին, երբ տիրացուն այնքան խղճալի էր ու այնպէս զուարճալի միաժամանակ. այդ փոքրիկ, ծուվիզ, վտիտ մարդուկը, որ հազիւ դրակալից բարձր էր, դարձել էր ողջ գիւղի զարդն ու բարեմիտ, քաղցր կատակների, պատմութիւնների առարկան: Հանդիսաւոր օրերին, երբ տիրացուն վերցնում էր սեղանի առջեւից դրակալը դընում էր ժողովրդի առաջ ու մոմը ձեռքին մօտենում

էր դրքին, ընդհանուր ժպիտ ու բարեացակամ չչուկ էր անցնում բոլոր չարքերով:

— Հիմա ուր որ է, տիրացուի սէլը կը մնայ ցեխի մէջ, ասում էին իրար ունկնդրող գիւղացիք:

Ու տիրացուն սկսում էր՝

«Ընթերցուա՛ծս յեսաեայ մարգարէէ՛»...

Ա.յսքանը լաւ էր — ձայնը խրոխտ, բառերը՝ յստակ. այնուհետեւ սկսւում էր չփոթը. քրտինքը կոխում էր ծերունու ճակատը, միրուքը դողդողում էր, չրթունքները կծկւում էին, բառերը փըչրւում, այլանդակւում: Ժողովրդի համակրանքն ու քաջալերիչ հայեացքներն ու չչուկը չէին փըրկում տիրացուին. քահանան կար աչ սեան տակ սպառնալից կանգնած, դիտուն, խստասիրտ տէր Սարգիսը, որ կատակ չէր սիրում. նրա զայրոյթից դողում էր տիրացուն: Քահանան ատում էր տիրացուին:

Այդ ատելութիւնը հին էր, եւ բնաւ կապ չունէր տիրացուի պաշտօնի վրիպումների ու ձախողանքների հետ. դէթ այդպէս էր թւում իրեն՝ քահանային. տէր Սարգիսը ատում էր նրա ծուռ վիզը, նրա փոքրիկ, ճպճպան աչքերը. ատում էր նրա կարճ հասակը, նրա մանրիկ քայլերը, որոնք առանձնապէս ջղայնացնում էին նրան. ատում էր ամբողջ նրա խեղճութիւնը, անգամ նրա հեզ ու հնազանդ չարժուածքը: Դժբախտ տիրացուի վրիպումները, ձախող ընթերցուածքները սոսկ պատրուակներ էին քահանայի ցասումին եւ նա նոյնիսկ վնասրում էր իր սպասաւորի թերութիւններն ու սխալանքները իր զայրոյթի զգացումը դուրս տա-

լու համար: Եւ առիթները պակաս չէին մասնաւորապէս ընթերցանութիւնների պահուն. տիրացուի իւրաքանչիւր, թէկուզ աննշան սխալի սկզբում լսւում էր քահանայի խորհրդաւոր հազը. տիրացուն զգում էր, որ փոթորիկը մօտ է, յուզւում էր ու սխալները կրկնապատկում, կակազում ու կարմրում. այդ ժամանակ քահանայի թաւ հազին միանում էր յատակին զարկուող գաւազանի թխկոցը եւ վերջապէս լսւում էր քահանայի սպառնական, ահարկու ձայնը՝

— Հը՛, քոռացիր հա՛. էլի բառերը կուլ տուեց նզովեալը. այս ձայնի վրայ տիրացուն իսպառ գլուխը կորցնում էր, եւ ընթերցուածքը դառնում էր անկապ, անհասկանալի թոթովանք ու տանջանք: Այն ժամանակ քահանան մօտենում էր զայրոյթով, ղէն էր հրում ծերունուն խստութեամբ ու ինքն էր վերջացնում ընթերցումը:

Այս բոլորը կատարւում էր սակայն շատ քնական եղանակով. աղօթաւոր բազմութիւնը սովոր էր այս տեսարանին, տիրացուն էլ վաղուց հաշտուել էր այս կացութեան հետ, հանդարտ հեռանում էր, բուրվառին մօտենում, կրակը թէժացնում, կամ վառուած մոմերի տեղ նորերը տնկում:

Եւ այսպէս էր քառասուն տարի...

Ու միանգամ — տիրացու Սօղոն այդ օրը երբեք չի մոռանայ — քահանայի զայրոյթը հասաւ իր գաղաթնակէտին:

Մեծ պասի ամենադժուարին ու երկարաչունչ աղօթքն էին կարդում՝ «Տէր Ամենակալը»:

«Տէր Ամենակալ, Աստուած Աբրահամու, Աստ-

ուած եւ...եւ...» թոթովեց տիրացուն, ու մնացածը կուլ տալով, աղաւաղելով, չտապով հասաւ վերջի հեչտ բառերին՝ «Ամենակալ Տէ՛ր, թո՛ղ ըզմեղս իմ»:

— Զահրումա՛ր, որոտաց քահանան, էդ էլաւ «Տէր Ամենակա՞լ»...

Տիրացուն զօր տուեց, մի քանի տող կարդաց, ապա կրկին առաջին զժուարութեան հանդէպ, նորէն ցատկեց դէպի «Ամենակալ Տէր, թո՛ղ զմեղս իմ», որպէս մի վիրկարար նաւահանգիստ: Քահանայի համբերութիւնը հատաւ. նա յետ-յետ քաշուեց զայրացած, եւ գաւազանը բարձրացրած, սկսեց հարուածել տիրացուի մերկ սրունքներին ամէն ձախ, ձախից՝ աջ:

— Դէ ա՛ռ քեզ Ամենակալ, դէ ա՛ռ քեզ, դէ ա՛ռ. դու ինձ համբերութիւնից հանեցիր, նզովից արմատ:

Հարուածներից խուսափելու համար ժպրախտ տիրացուն մերթ աջ ոտքն էր բարձրացնում, մերթ ձախը, նայելով թէ գաւազանը ո՛ր կողմն էր շարժւում եւ չարունակում էր կրկնել «Ամենակալ Տէ՛ր, թո՛ղ զմեղս իմ»...

Աղօթաւորների չարքերում զսպուած քրքիջ բարձրացաւ, որ վարակեց երեխաների դասը: Նոյնիսկ կանայք անկարող եղան իրենց ծիծաղը զսպել:

Քահանան անողորմ էր, հարուածները տեղում էին. Ամենակալը չէր օգնում եւ ոչ էլ տիրացուի ոտների վեր ու վարը, ու յանկարծ աջ սրունքին եբեւաց մի կարմիր բիծ, որ ձգուեց երկարացաւ դէ-

պի վար. արիւն էր. տիրացուն կռացաւ, ոտքը բըռնեց ու ասաց խղճալի ձայնով.

— Տէ՛ր հայր, ապա Աստուած չըկա՞յ...

Մոգական խօսքեր էին, որ ընկճեցին քահանային. նա յետ-յետ քաշուեց երերալով, գնաց սեանը յենուեց, գլուխը քաշ ձգեց գաւազանին ու մնաց քարացած, ժողովուրդը նոյնպէս սասանուեց:

Տիրացուն յաղթել էր տանջանքի գնով:

Այնուհետեւ տարիներ չարունակ այս անցքը պատմուում էր գիւղի սաքուներում ու հրապարակներում:

Տիրացու Սօղոն էր միայն, որ այդ մասին երբեք չէր խօսում:

II

Ամառուայ կէսն էր. չոգ ու տօթ էր:

Տիրացու Սօղոն գնացել էր պառաւ Հէքօի թաղմանը: Կինը՝ Սալբին, թոնիր-կրակը վերջացրած, նստել էր հովասուն սրահը, պաղ խոտի վրայ ու հանդարտ կարկատում էր ամուսնու հին գուլպաները: Ցխսունն անց՝ մի կին էր Սալբին, թուխ ու կոշտ դիմագծերով, մարմնեղ ու բարձրահասակ: Այս փարթամ, առնական կինն ու իր փոքրիկ ամուսինը՝ Սօղոն, անօրինակ զոյգ էին կազմում. երբ կողք կողքի քայլում էին, ամուսինը նրա մօտ թուում էր երեխայ:

— Աչես ուղտի կողքին մաղ կախես, կատակում էին հարեւանները:

Կատակը չէր յուզում Սալբիին: Նա հաւանել

էր Սօղոյին նրա սիրուն ձայնի, նրա խորը-խորը ղրքերի, եւ մանաւանդ՝ հեզ, բարի աչքերի համար: Նա հպարտ էր եղել Սօղոյով, աչք էր փակել նրա ձախողանքների, նրա անյաջող ընթերցումների, նրա անախորժ արկածների վրայ ժամում, եւ նրա վայելած ընդհանուր հրապոյրով ու սիրով ապրել: Տարիները սահել, անցել էին անխռով նրանց խաղաղ ընտանեկան կեանքի վրայով. երկու երեխաներ՝ մի տղայ ու մի աղջիկ, նրանց աղքատիկ յարկի տակ ջերմութիւն ու լոյս էին բերել: Այսպէս էր ընթացել կեանքը, մինչեւ որ հասաւ Սեւը: Գիւղի համաճարակը մի քանի օրում նրանց արդար յարկի տակ զուլումը բերեց, եւ նրանց երկու զաւակները — տասն եւ տասներկու տարեկան, իրար յետեւից մեռան, ծնողների «ձեռքը մնաց չոր գետին»:

Այդ սեւ օրուանից նրանց կեանքը հիմն ի վեր աւերուեց, էլ ժպիտ չկար. Սալբին լալիս էր, Սօղոն լուռ մխում էր:

«Էս զուլումը չէր գայ մեր գլխին, երեխաներս կենդանի կը լինէին, եթէ Սօղոն ուրիչի դռները չերթար, ցաւագար տները չմտնէր, մեռելները չլուանար», խորհել էր յաճախ Սալբին, եւ յետագարձ հայեացքով ամբողջ իր կեանքը, ամբողջ իր ընկեալը, իր ամուսնու պարապմունքը նրան թուացել էր մի սեւ երազ:

«Ուրիշ պարապմունք չկա՞ր աշխարհում. մեռել թաղելն էր գո՞րծ է. կերած հացներս դռներից, քելեխ ու ողորմութիւն, անունը՝ ժամկոչ, նախրապանից, գղերից էլ վատ»:

Գիշերը երազին տեսել էր երեխաներին, կիսամերկ, սրթսրթալիս: Եւ այսօր էլ այս բոլոր մտածումները բռնել էին նրա հոգին, չարչարում էին անճար, անվերջ կսկիծով:

— Գլխակեր եղաւ երեխաներիս, վշվշաց նա եւ արցունքը թափուեց աչքերից: Հին վէրք էր, որ բացուեց վերստին ու արնեց. իր խորը խոցուած մայրութիւնն էր մղկտում: Նա լալիս էր ու աչխատում:

Կէսօրից չատ էր անց՝ արեւը թեքուել էր դէպի մուտքը, երբ տիրացու Սօղոն Թաղումն ու հոգեհացը վերջացրած, մի կապոց ուսին, յոգնած, քրտնաթոր մտաւ բակը, բարձրացաւ սրահը, կապոցը ցած դրեց, նստեց, մաշիկները հանեց, կողքին դրեց, գլխարկը վերցրեց, ճակատի քրտինքը փէչովը սրբեց, ապա մերկ ոտները կամացուկ մեկնեց պաղ յատակին ու խորը չունչ առաւ:

Այսպէս լաւ էր:

Կինը աչքի տակով նայեց կապոցին, աւելի եւս մոայլուեց եւ առանց գլուխը բարձրացնելու, շարունակեց աչխատանքը, ասես չէր տեսնում ամուսնուն:

Ծերունին հասկացաւ կնոջ հոգեկան վիճակը:

— Ա՛հ, ի՛նչ չոգ է...տնաչէնի պառաւն էլ ժամանակ գտաւ մեռնելու, ասաց նա ինքն իրան, բայց իրօք Սալբիի ուշադրութիւնը գրաւելու համար:

Կինը չպատասխանեց ու վեր չնայեց:

— Կրակ էր թափւում երկնքից, չարունակեց ծերունին, կնոջը նայելով իր վախլուկ հայեացքով, ուր աղերսանք կար, անճարութիւն. ու ներքուստ

լռելեայն աղաչում էր ծերուկը՝ «մի՛ արա ա՛յ կնիկ, մի՛ լաց, ախը մեղք եմ էէ՛, մեղք եմ»...

Սալբին չէր լալիս, բայց քարէ արձանի պէս լուռ էր ու ճնշող:

— Շոգի ձեռքից տէրտէրը «ջուր տու քչի» ասրեց, ուսմունքի կէսը կուլ տուեց. ի՞նչ անէր, էղ չոգով օձն իր բնից դուրս չէր գայ... է՛հ, քո տունն աւերուի աղամորդի, դուն էլ հա՛ կաս, հա՛ չկաս, հող ու մոխիր... մի չաբաթ չկայ, որ օղորմածիկ պառաւն եկաւ ժամ, խոստովանուեց, հաղորդուեց. լաւ էր, պրինդ էր, մահը գիտէր հալաթ... Ու էսօր չկայ, հողի տակն է, Աստծու բանը ո՞վ կ'իմանայ...

Կինն անտարբեր կարկատում էր, դարձեալ լուռ:

«Ա՛յ կնիկ, նորէն ծածուկ մրմնջաց Սօղոյի հոգին, ա՛յ անողորմ կնի՛կ, դէ մի նայիր, մի խօսք ասա՛, էլի, ախր սիրտս պատուեց, բա մեղք չե՞մ, ոտներիս միսը կերայ մինչեւ գերեզմանի պղնձուած հողը փորեցի, ողջ ոսկորներս տնքում են...ախր մի բարի խօսքին ի՛նչ էլաւ»...

Ծածուկ մրմնջաց ծերունին իր հոգու հետ, նորից կնոջը նայեց աչքի տակով. Սալբիի չրթունքները ինչ որ չչնջացին մեղմիւ ու կծկուեցին դառնութեամբ. ծերունին գգաց, որ փոթորիկ է պայթելու, ճգնում էր կանխել քաղցրութեամբ:

— Օղորմի՛ իրան, լաւ ապրեց ու լաւ մեռաւ Հէքօն, հոգու հացն էլ լաւ էր, քեսաիր-քիւսուբ, մուրացկան, ամէնքը կչտացան... Ես էլ քեզ, ա՛յ

կնիկ, նայի՛ր, բոլորովին նոր է, խեղճ պառաւն խակի չի հաղել, օղորմի իրան...

Այս ասելով, Ծերունին կամացուկ քանդեց կապոցը ու այնտեղից դուրս քաշեց մի կանացի շորջառդեստ, կնոջ առջեւ փռեց, խոտի վրայ:

Կինն այս անգամ համբերութիւնից դուրս եկաւ. երկար ժամանակ զսպուած սրտի դառնութիւնը փոթորկի պէս պայթեց:

— Ձը պրծանք է՛լի, քո մեռելներից, ճչայ նա չնչակաուր, հեւալով ու ոտքով դէն չպրտեց շորջառդեստը.— ոտքից գլուխս մեռելի շորերի մէջ ես ու չկշտացայր էլի, դրողը տանի պառաւ Հէքօին էլ, ամէնքին էլ, էլի պատանք ես բերել, մեռելի շո՛ր. դու էլ մարդ ես, փափախ ունիս գլխիդ...ի՞նչ մարդ ես... անունդ ի՞նչ է, անո՛ւնդ, տիրացո՞ւ ես, ժամկո՞չ ես, մեռել լուացո՞ղ, դերեզմանափո՞ր, քելեխ ուտո՞ղ, դոների չուն ծեծո՞ղ...ո՞րն ես, ո՞րը... Մէկը մէկից սեւաւոր...մէկը մէկից անպատիւ... անունդ ի՞նչ է, անո՞ւնդ...

Ծերունին չուարեց. վէճ ու կռիւ նա չատ էր ունեցել կնոջ հետ, բայց այսպիսի կատաղութիւն նա երբեք չէր տեսել. Սալբիի աչքերի մէջ այնքան դառնութիւն ու ցաւ կար, խօսքերի մէջ այնքան վիրաւորանք ու թոյն. Սօղոն կծկուեց, փոքրացաւ, վիզն աւելի ծռուեց, գլուխը քաշ ընկաւ, չորացած մատները միրուքի նման մազերը ճղճղեցին, ապա նա ճակատը չփեց ու մնաց քարացած:

Լռութիւն տիրեց. Սօղոն իր քօչերին նայեց. երբեք նրանք այդպէս ահագին ու այլանդակ չէին երեւցած Սօղոյին, իրար կողքի սղմուած՝ գոյգ

հրէշների պէս նայում էին նրան ու լեղու ցոյց տալիս. նա ոտքով ծածուկ դէն հրեց քօշերը, նրանցից մէկը կործուեց, մէջքը ցցեց անամօթօրէն ու կլոունկի մեխերը ցոյց տուեց ինչպէս ժանիքներ, մինչդեռ միւսը նրա վրայ բարձրացաւ գլուխը տընկած. Սօղոն մէկ էլ հրեց ոտքով, ու նրանց բաժանեց իրարից, յետոյ ինքն իր արածից վախեցած՝ աւելի կծկուեց, աւելի խեղճացաւ, կնոջ այս անօրինակ զայրոյթը զսպելու հնարն էր մտածում ու եղկելի ձայնով թոթովեց երեխայի պէս.

—Ի՞նչ ես թնդւում ա՛յ կնիկ, աշխարհի բան է, մէկը ժամկոչ կը լինի, մէկը գղիր, մէկն արհեստաւոր, միւսը՝ հոդագործ, մի կտոր հացի ցաւ են բոլորն էլ. դէշդ է գալիս, մի հագիր էս շորը, կը տանք մի աղքատի, էլ ինչի՞ ես սիրտդ դառնացընում, ասածդ ախր լաւ չի, վալլա՛հ լաւ չի...վերեւ Աստուած...

Կինը չհանդստացաւ, խստութեամբ ընդհատեց.

— Լաւ չի՛, ապա մեր հալը լա՞ւ է... դոների չուն ենք դարձել, խալխի թերմաչը հագիր, խալխի լակը լկիր, քելեխ կեր տօներին, աչքդ ամէնքի ձեռին, ինքդ ոտքերի փոշի՛, էս կեա՞նք է. քանի՛ ասացի, ա՛յ մարդ, վա՛զ արի մեռելներից, հալալ հաց գտիր քեզ, մշակ եղիր, վարձկան, տղամարդ եղի՛ր, անուն գտի՛ր քեզ, անո՛ւն, մի հատ մարդավարի անուն:

Անո՞ւն... Այս ի՞նչ է ասում կինը, վաթսուն ութ տարեկան է Սօղոն ու անուն չունի՞... Նա ըմբոստացաւ, ու ջերմութեամբ պատասխանեց.

— Սուրբ կարապետը — մեռնեմ իր գօրութեանը — եօթն անուն ունի, ի՞նչ կայ որ:

— Եօթը չէ, մի հատ է՝ Սո՛ւրբ, Սո՛ւրբ, խեղճ մարդ:

— Ես էլ...ես էլ՝ տիրացու, ժամկոչ, ամա մա՛րդ եմ, մի հատ անուն ունիմ՝ մա՛րդ, մա՛րդ, հասկացա՞ր կնի՛կ, մա՛րդ եմ. ումի՞ց եմ պակաս, ժամ եմ ասում՝ արդար բան է. զանգն եմ քաշում՝ աղօթքի համար է. մեռել եմ թաղում՝ հոգու բան է, լի՛մ հոգու. իմ մեղքն ի՞նչ է, այ կնիկ, ախր հոգի ունիս, չէ՞ ամէնքիս դատաստան է սպասում վերեւում, ո՞ւմ հացն է մերինից հալալ...

Կինը մաղձոտ ժպիտ ունեցաւ շրթունքներին.

— Հացդ հալա՛լ է...դռների հա՛ցը...հագած շորերին նայի՛ր, փափախը Կօլոտ Յակօինն է, արխալուղը՝ Թիւիկենց Թարօին, քօշերը՝ Մուղդսի Բադալին, բախտաւոր իմ գլուխը, ես էլ մարդ ունիմ:

Սալբին անողորմ էր. նա ծուատում էր ղըժբախտ ծերունուն, ինչպէս քաղցած ցինն իր որսը:

Ծերունին պաշտպանւում էր յուսահատօրէն — այնքան խոցելի տեղեր ունէր:

— Ես չեմ գողացել այ կնիկ, ախր Աստուած ունես, աչխարհի կարգն է, հանգուցեալի շորը տիրացուին, ժամկոչին կը հասնի. ասած է՝ «Մէկը չը մեռնի, միւսը չի ապրի»:

— Աչխարհի կարգը կտրուի...աչխարհը հէնց մեր գլխին փուլ եկաւ...բաղարից մի կտոր արդար շոր էս վէրան դունից ներս չեկաւ...խեղճ ու կրակ երեխաներիս մեռելի շոր հագցրիր, սաղ-սաղ պա-

տանեցիր ու մեռելներին տուիր, ձեռքս չոր գետինը մնաց, անողո՛րմ, անխի՛ղճ, դու էլ ծնո՞ղ ես, մա՞րդ ես...

Ու Սալբին նորէն հեծկլտաց:

Վէճը հին էր, այս մեղադրանքը՝ նոր ու խորտակիչ. այսքան տարի Սօղոյի գլխովն անգամ չէր անցել այս սարսափելի միտքը, թէ ինքը որեւէ բաժին ունի զաւակների մահուան մէջ. իր կսկիծն իրան բաւական չէ՞, այս ի՞նչ ասաց անաստուած կնիկը. էն ղժոխքից ազատուելու համար էր աչխատել ողջ կեանքը, չարերից, անիրաւութիւնից փախել, զանգի ձայնով մարդկանց Աստծու տունը կանչել, աղօթք ասել, Սուրբ Գիրք էր կարդացել, հանգուցեալներին վերջին հանգիստը տուել եւ այժմ յանկարծ այս ղժոխքի կրա՛կը, որ իր հոգին վառեց. իր զաւակների՞ն է սպանել, հոգի՞ կորցրել. Սօղոյի չունչն էր բռնում, օդը խեղդում էր կուրծքը: Երկնքին նայեց հեւալով, ասես մէկին էր սպասում, հարցում ունէր... Ի՞նչպէս...իր երեխաներին մեռելի շորը տարաւ գերեզմա՞ն...անհնարին է այդ, անիրա՛ւ է այդ, անիրա՛ւ...

Իր հոգու հետ էր խօսում ծերունին եւ ճչաց յուսահատօրէն.

— Ի՞նչ ասիր, անողո՛րմ կնիկ, ինչո՞ւ ասիր, ախր ուղիղ չէ, արդար չէ ասածդ...ապա ես ինչի՞ չմեռայ, ե՛ս, չէ՞ ոտքից գլուխ մեռելի շորի մէջ եմ. ու քանի՛սին եմ թաղել..գուլումը որ եկաւ, կը գայ, Աստծու կամքն է, մենակ մե՞րը մեռան, ո՞ր տունը ցաւ չմտաւ, ո՞ւմ երեխան չմեռաւ, Աստծու բանը ո՞վ կը հասկնայ, ո՞վ, ո՞վ...

Հակառակ իր անհնարին վշտին՝ Ծերունին զըսպեց արցունքը, միայն ձայնը դողդողաց ու կոպերը թաց եղան. նա թեւով ծածուկ սրբեց աչքերը, մինչդեռ կինը հեծկլտում էր անյուսօրէն...

Օրուայ տօթը չարունակւում էր, գիւղը մընջել էր հեղձուցիչ չոգի ձեռքից. սրահի մի անկիւնում պառկած պառաւ շունը հեւում էր տապից ու երբեմն ատամները չխկացնում, բերանով ճանճերին բռնելու համար. աւելի հեռու, բակի պատի տակ, ստուերում, թուխսը ճտերը հաւաքած թեւի տակ, կտուցը բաց նոյնպէս հեւում էր, զգուշաւոր հայեացքը ալ ու ձախ դարձնելով. կտուրներից բարձր, շատ բարձր երկու անգղեր թեւատարած ճախրում էին. թուխսն այդ տեսաւ, կոկորդային ճիչ արձակեց ու թեւերն աւելի սղմեց ճագերին ծածկելու համար. փոքրիկները ճթճթացին ու սկուեցին: Առաստաղի տակ մի խոշոր ճանճ էր բզզում ցաւագինօրէն, սարդի ոստայնի մէջ խճճըուած:

Երկու պառաւները նստած էին դէմ ու դէմ ու նայում էին հեռուն:

Եւ հեռուն կապուտակ երկինքն էր, պատարկ ու անհուն...

Լռութիւն էր. լսւում էր միայն ճանճի անճար բզզոցը:

— Սիրտս մի՛ վառիր, ա՛յ կնիկ, լռութիւնն ընդհատեց Ծերունին, իմ խեղճ կեանքի վրայ անիրաւ կրակ մի՛ թափիր, մեղք եմ ախր. ողջ կեանքս հոգուս համար եմ աշխատել, երեխաներիս կակիծն ինչո՞ւ ես դնում իմ դժուար ճամբին. ո՞վ չի մեռ-

նում... Լսո՞ւմ ես էդ անճար բզզոցը, հիմա կը լռի, կը դինջանայ...սաղ աշխարհը նրա պէս է, ա՛յ, էն ճանճի, բզզում ենք, բզզում ու անցնում...

Պառու հեծկլտուքը դադարեց. նա աչքերը սրբեց, հանդստացաւ. ամուսնու բողոքն ու յուսահատ խեղճութիւնը յուզեց նրան. մեղքացաւ Ծերունուն, ափսոսեց իր ասածների համար:

— Ի՞նչ անեմ, էս գիշեր երազիս եկան, երկուսն էլ տկլոր, խեղճ, սրթսրթում էին ցրտից... ղէ՛, ես էլ ո՞ր ջուրն ընկնեմ. մայր եմ անզաւակ, չոր ծառ դարձայ, անպտուղ ծառ... Հալբաթ որ ժամ, ասմունք, զանգ, չարական սուրբ բաներ են:

Սօղոն յաղթել էր. նա քաջալերուեց ու ոգեւորուեց:

— Սուրբ բաներ են, ապա՛, կոչեց Ծերունին ջերմութեամբ, հոգու բաներ են, հոգո՛ւս. մարդս իր հոգու համար պէտք է մտածի, մնացածը փուչ է, աստուրը՝ փուչ, մահկանացու ենք չէէ՞... տիրացու եմ, Սուրբ Գիրքն եմ կարդում, չոր սըրտերն են փափկանում, մեղքերը լուացւում. գանձ եմ ասում, մեղեդի, մեռելատէրը լալիս է, սիրտը հովանում. զանգերն եմ քաշում ու նրանց արդար զընգոցով երկին ու երկիր իրար ձէն են տալիս... ապա «դռնբացէ՞քը»...

Այս դիւթական խօսքն արտասանելիս Ծերունու փոքրիկ աչքերը փայլատակեցին անսովոր կրակով, նա նստած տեղում բարձրացաւ ծնկների վրայ ու բուռն յափշտակութեամբ չարունակեց.

— Դռնբացէ՛քը, ապա՛...ախր արքայութեան

դուռն է բաց անում էս խեղճ ու կրակ Սօղոն — սաղ գեղը ծուննկի է գալիս. ախր էս բոլորը հոգու բաներ են. դէ մարդս էլ որ կայ, հոգու համար է, մնացածը ճանճի բզզոց է, ա՛յ կնիկ, ճանճի բզզոց:

Սալբին երազուն ու վչտոտ հայեացքը միշտ դէպի հեռուն, լսում էր ու գլուխն օրօրում մեղմութեամբ:

Հա, Սալբին համաձայն էր, որ իր ամուսինը ողջ կեանքը հոգու համար է վաստակել, համաձայն էր եւ ատամները սղմած՝ փչրում էր իր մայրական խորունկ վիշտը:

Դռնբացէքը հրաշք էր...

Տարին մի անգամ էր պատահում այդ հրաշքը: Սօղոն իրաւունք ունէր, նա գլխաւոր դերակատարն էր: Եւ այդ մի օրուայ համար նա պատրաստ էր ողջ կեանքը խալխի դռներում տառապել, դերեզմանն փորել, կէս կուշտ, կէս քաղցած քաշ տալ կեանքը: Դռնբացէքը միակ լուսաւոր փաստն էր տիրացուի խղճուկ կեանքի, որի առաջ խոնարհւում էր Սալբին: Եւ այժմ էլ դռնբացէքի յիշատակութեան առաջ նա խոպան հանգստացաւ, ասես յետ վերցրեց իր բոլոր մեղադրանքները, բոլոր չար, խայթող խօսքերը, եւ էլ վատ հայեացքով չէր նայում առջեւը փռուած չրջազգեստին:

Կրկին լռութիւն տիրեց:

Առաստաղի տակ ճանճի օրհասը լրացաւ. նա խպատ լռեց...չունը խոր քնեց եւ էլ չէր լսում նրա ատամների չրխկոցը. երկնքում անգղերը չարունակում էին ճախրել ու ներքեւում թուխսը նը-

բանց նայելով՝ խոպոտ ճիչեր էր արձակում ու աւելի պինդ սղմում թեւերի տակ թրթռացող ձագուկները:

Արեւը մայր մտաւ. ստուերները կախուեցին. Ծերունին ծնկները գրկած՝ խորհում էր դռնբացէքի մասին խորհում էր եւ Սալբին. ամէն բան գնացել էր, է՛ւ երիտասարդութիւն, է՛ւ վայելք, է՛ւ զաւակներ, մնացել էր միայն այս դռնբացէքը, պլպլան մի լոյս նրանց ցաւած հոգում:

Ծերունին կամաց-կամաց նստած տեղում նիրհեց, երազելով իր վառքի օրը, դռնբացէքը. Սալբին ոտքի ելաւ, երեկոյեան ճաշը պատրաստելու:

Նա նայեց քնած Ծերունուն, նայեց երկար-երկար, ու կրկին աչքերը թացացան:

Այս անգամ նա լալիս էր Սօղոյի համար, նրա սեւ օրերի, նրա դժուար ու տրորուած կեանքի համար:

III

Եկեղեցին չատ տօներ ու հանդէսներ ունի, երբ տիրացու Սօղոն փառաւորում է ժամ ու ժամաւորներին. բայց դռնբացէքը ուրիշ բան է. նա Սօղոյի աչքին բոլոր տօների թագուհին է, արքայութեան նախադուռը, երկնային մի ցոլք, որ տարին մի անգամ իջնում է երկրի վրայ որպէս Աստծու ողորմութիւն:

Այդ օրհնուած, զարմանահրաշ օրն է, որ ողջ գիւղը հասկանում է, թէ ո՞վ է տիրացու Սօղոն:

Ծագկազարդի կիրակին... դռնբացէքի երեկոն...

Լուսաւորուած ու խնկի բուրմունքով լի եկեղեցւոյ ազօթաւորները կանգնած են խիտ շարքերով. երկիւղած մի չչունչ Քրիստոսի քարքարունքներին, բարձրանում է վեր, խնկի ծխի մէջ բեկբեկւում ու մարում առաւտաղի տակ, ինչպէս ծխանքը հոգում: Պատերից քաշ ընկած պատկերները ժպտում են, ասես ուզում են շրջանակից դուրս գալ եւ դէպի սեղանը չարժուել, որ լուսաւոր ու բարի, բացել է իր գիրկը ընդունելու ամէնքին, ում որ Սօղոն կ'առաջնորդի: Հրեշտակները Քրիստոսի են օդի մէջ եւ Սօղոն լսում է նրանց թեւերի շրշիւնը, ու հոգին դող է ընկնում, երջանկութեան ու սարսափի խառնվքով: Նա խնկարկում է ձեռքի կիսաշրջան չարժումով, բուրվառի մետաղէ շղթաները զրնգում են անուշ, ծուխը դալարուն օղակներով պատում է դէմքը, մի վայրկեան նրա փոքրիկ պատկերը ամբողջապէս ծածկւում է ասես ամպերի մէջ, ապա կրկին յայտնւում, ու կրկին ծածկւում:

Մօտենում է դռնբացէքի զարդանդը:

Քար լռութիւն է իջնում. դադարում են բուրվառ, երգ ու աղօթք: Վերջին դատաստանն է սկսւում:

Եւ քահանան խաչը ձեռքին՝ ծունկի է գալիս սեղանի առաջ: Նրա հետ գետին են փռւում ամէնքը, մարդ ու կին, ծեր ու մանուկ. կանգուն է մեն-մենակ սիրացու Սօղոն. ապա նա մոմը ձեռքին՝ հանդարտ բարձրանում է սեղանի աստիճաններով. նրա

ճերմակ մազերը այսօր խնամքով սանրուած են, անգամ ցանցառ, խոշոկ մխրուքը ձիու է տոպրդէմքը յափշտակութեան մէջ, հոգին աչերից. նա չի շտապում. սեղանի աստիճաններից նայում է բազմութեանը, լոյսերին, սուրբերին, հրեշտակներին. ամէնքն իր խօսքին են սպասում. ապա նայում է ծնկաչոք քահանային, խոժոռ ու ինքնիշխան տէր Սարգսին, որ այս պահուն իր տնօրէնութեան է:

Նայում է սիրացու Սօղոն վերջին անգամ եւ ծածկւում վարագոյրի յետեւում. նրա եւ աշխարհի մէջ երկնային մի բազմութիւն կայ վարագոյրի վրայ նկարուած: Ալ կողմում արքայութիւն, ուր երանելի արդարներն են ժանում. ձախ կողմում դժոխք, ուր եռում է կուպրի կարասը ու պոչաւոր սատանաներ երկաթէ եռաժանիներով մղում են մեղաւորներին դէպի յաւիտենական կրակը. նրանցից բարձր առաքեալների դասը՝ շքեղանաձեւ. կեդրոնում Քրիստոս. աւելի վար հրեղէն սրերով հրեշտակները, որ պահպանում են արքայութեան դուռը:

Ի՞նչ է անում Սօղոն այդ վարագոյրի յետեւում, հոգիների այդ բազմութեան մէջ. ո՞ւմ հետ է խօսում, ի՞նչ է ասում, Աստուած միայն գիտէ եւ ինքը՝ սիրացուն:

Եւ ահա ներքեւից լսւում է քահանայի ձայնը կողկողագին.

«Բա՛ց մեզ Տէ՛ր... Բա՛ց մեզ Տէ՛ր... Բա՛ց մեզ Տէ՛ր ողորմութեան դուռը. թէ՛ս ողբալով ենք դիմում քեզ»:

Կանչում է քահանան յանուն իր գեհառատարած,

դժբախտ հօտի. կանչում է ողբաձայն ու ձեռքի խաչով հարուածում է առջեւի տախտակը — արքայութեան դուռը:

Հարուածում է եւ սպասում պատասխանի:

Սպասում է ե՛ւ գետնամած բազմութիւնը ճակատը հողին դրած:

Սօղոն լուռ լսում է. քահանայի ձայնից դուրս՝ իր չուրջը խորհրդաւոր խշրտուկ կայ — Սօղոյին թւում է, թէ վարագոյրի վրայ նկարուած հրեշտակապետն է, որ ցած է իջնում սեղան ու հրեղէն սրով կանգնում իր կողքը, պահպանելու արքայութեան դուռը, որի բանալին այսօր իր ձեռքին է:

Զարդանդ է երեւում Սօղոյին. նա դողում է իր բախտի մեծութիւնից. ծունկի եկած դրքի առջեւ, մոմը ձեռքին դողդողում է, եւ սեղանի պատերի վրայ անթիւ ստուերներ են խաղում անճայն ու ահարկու. Սօղոն տէրն է տիեզերքի, տէրն է մարդկային թչուառ, մեղաւոր ցեղի. եւ ամբողջ այդ խղճալի հօտը, մեղքերով բեռնաւորուած հին ու նոր սերունդները, եւ նրանք, որ ապրում են տակաւին ցաւերի բեռի տակ, եւ նրանք, որ դնացին, եւ նրանք որ գալու են, ամէն՛քը, ամէ՛նքը, մարդ, կին, ծեր, մանուկ, լացող, հեծեծող թչուառները, ամէնքը ծունկի եկած, աղերսում են Սօղոյին:

«Բա՛ց, բա՛ց, բա՛ց»...

Սօղոն յետ է դառնում դէպի սեղանը, ուր խաչուած Քրիստոսն է.

— Տէ՛ր, Տէ՛ր, ես հող ու մոխիր եմ, Տէ՛ր ահաւոր. ես ի՞նչ իմանամ. ո՞ւմ առջեւ բացեմ, ո՞ւմ առջեւ փակեմ. հոգիս ա՛ռ, հոգիս ա՛ռ...

Քահանայի խաչը կրկին չառաչում է, արքայութեան դուռն է թրխկում երեք անգամ եւ կրկին լսում է քահանայի ձայնը աղերսական.

— Բա՛ց մեզ Տէ՛ր, բա՛ց, բա՛ց... բա՛ց...

Լուռ է Սօղոն եւ տարուած է «տեզելէի» մէջ, անմարմին, եթերացած. ու խոկում է, ինքն իրան մտմտում. «Պիտի դա՞ն, ամէնքը պիտի դա՞ն իրենց մեղքի ու արդարութեան բեռը չալակած. քառասուն տարի էս օրուայ համար եմ զանգակների թելերը քաշքշել, երկրից երկինք ձէն տուել, պիտի դա՞ն. Զորթանենց Մուրոն պիտի դայ ծանր բահն ուսին. քանի՛ անգամ սրա նրա ջուրն է դողացել, արտը չորացրել, տունը քանդել:

«Մահտեսի Սադոն պիտի դայ, կուզիկ անհոդին, որ Երուսաղէմ դնաց եկաւ քեասիբ-քիւսուբին աւելի լաւ խաբելու համար. հարիւրին հարիւր տոկոս է առնում անաստուած վաշխառուն. պիտի դայ այժմ փողի տոպրակը վզից կախուած. վա՛յ քեզ, վա՛յ քեզ, վարագոյրի վրայ կուպրի կարասը, պոչաւոր սատանաները չէ՞իր տեսնում, անհոդի:

«Պիտի դա՛յ, հաստատուր Միկիտան Յակօն պիտի դա՛յ, գինու լիքը տիկը ուսին, ու չարոց դաւթարը թեւի տակ, ուր երեսուն տարի հոգին էրել է, սուտ ու ղորթ է գրել, պիտի դայ այժմ հաչիւ տալու»:

«Պիտի դայ Իշխան Աւագը, Աստծու կրակի տէրն է, գեղի գօրքան, որբերի հացը խլող, մշակ բանուորի արիւնը խմող Սարդարը:

«Պիտի դայ փչան Գէվոն, որ դատարանի դրանը

պատրաստ նստած է միշտ սուտ վկայելու համար, ով չատ փող տայ:

«Պիտի դան ամէնքը, հոգիները մոռցած անաստուածները, փրկութիւն չկայ, չկայ, վերջի՛ն դատաստանն է»...

Քահանան երրորդ անգամ հարուածում է արքայութեան դուռը. հարուածում է թափով ու կանչում է աւելի ողբաձայն, աւելի սրտաբեկ աղերսով՝

— Բա՛ց մեզ Տէ՛ր, բա՛ց, բա՛ց ողորմութեան դուռը. տե՛ս լացով ենք աղաչում Քեզ:

Այս անգամ լսւում է տիրացու Սօղոյի ձայնը. երկնքից է գալիս իր խօսքը, «տեղելքի» ահեղ անդունդներից.

— Ո՞վ են սրանք, որ բացեմ. սա Տիրոջ դուռն է, եւ արդարները միայն պիտի մտնեն այս դռնով:

Աստում է ու մտմտում է Սօղոն:

«Հապա՛. ամէն մահկանացուի տեղը չէ այս. միայն արդարները պէտք է ոտք կոխեն այս չեմքը. ախր Տիրոջ տունն է, հրեշտակներն են պահպանում, հե՞շտ բան է... Վերջին դատաստանն է, կայ չկայ, այս է, սրանից դէն՝ էլ ոչի՛նչ, ոչի՛նչ... Վերջին դատաստանն է. վա՛յ մեղաւորին, մեծատուններին, վաշխառուներին, փարիսեցիներին, չարհոգիներին, գրկողներին, վա՛յ, վա՛յ, վա՛յ...

— Գթա՛ Տէ՛ր, հեծեծում է քահանան, գթա՛, ոչ միայն արդարներին ընդունիր, ապա եւ մեղաւորներին ապաշխարութիւնով ու մեղքերի քաւութիւնով արդարացած:

Լսում է Սօղոն այս դերագոյն աղերսը, որպէս

ժամանակի անդունդներից բարձրացող մի սրտապատառ աղաղակ. մահից ու ոչնչութիւնից խուսափած մի վիթխարի սիրտ է, որ մեն-մենակ հառաչում է անապատի մէջ.

«Գթութի՛ւն, գթութի՛ւն»...

Ու Սօղոն մրմնջում է.

«Ամէ՞նքը...հապա ջժոխքն ո՞ւմ համար է. կուպրի կարասը, պոչաւոր սատանաները, յաւիտենական կրակը ո՞ւմ համար են. Տէ՛ր, ես մեղաւոր եմ, Դո՛ւ ասա, Տէ՛ր, Տէ՛ր, ես հոգ ու մոխիր»:

Եւ Սօղոն կրկին կռանում է գրքի վրայ.

«Սա դուռն է երկնքի եւ հովիտ տրտմութեան»...

Իր սեփական ձայնից վախում է Սօղոն. թւում է, թէ ինքը չէ պատասխանողը, այլ մի ուրիշն իր թիկունքից, իր հոգուց, իր չրթունքներով. գիրքը ցած է թողնում ու քիչ է մնում, որ բարձրաձայն ճչայ.

«Չէ՛, չէ՛, դուռը չեմ բացի ամէնքի առաջ. կանչի՛ր որքան կ'ուզես, լա՛ց ու աղաչի՛ր, քանի կարող ես, տէրտէր, ծեծիր դուռը օր ու գիշեր»...

Քահանան ընդհատում է նրա խոհերը ու վերսին լսւում է ներքեւից.

«Չէ՞ մենք Աստուածորդւոյ մաքուր արիւնով ենք գնուած, բա՛ց, բա՛ց»...

«Աստծոյ որդւոյ արի՛ւնը, հապա, ամէնքի՞ համար էր, մեղաւոր, արդար միեւնո՞յն է... Կրակն է վառում չորն ու կանաչը, հապա արդարութի՞ւնը»...

Սօղոն կարդում է՝

«Ահաւոր Աստուծոյ փողն է գոչում ահագին ձայնով, եկէ՛ք, ժառանգեցէ՛ք»...

Երկնքի դռները են չառաչում, տրտմութեան հովիտն է մրրկուած, տիեզերքի վերջին փոթորիկն է, հիմքերն են դրնդում: Սօղոն սոսկում է իր կարգացածից, դողում է, առամներն իրար են զարկւում, չունչն է բռնւում:

— Ահա ես եւ իմ մանկունքը, արիւնով գընուած, լոյսն ենք ուզում, փրկութի՛ւնը... կոչում է քահանան վարից:

«Լո՛յսը, փրկութի՛ւնը ամէնքի՛ն, մրմնջում է Սօղոն. հա՛, հա՛, ամէնքին, ախր արիւնը արդարի համար չի թափուած, այլ մեղաւորի. արդարը արեան պէտք չունի, Թո՛ղ բացուին քո ողորմութեան դռները Տէ՛ր, Թո՛ղ ներս մտնի «անապական արիւնով գնուած ժողովուրդը». Թո՛ղ ներս մտնեն ամէնքը Տէ՛ր, ես հող ու մոխիր եմ քո ոտների տակ, ամենից վերջը՝ Թող ես էլ մտնեմ — ժամկոչ եմ չէ՛, ու բեռս այնպէս ծանր է — արցունք եմ չափակել Տէ՛ր, աշխարհի արցո՛ւնքը»...

Ծերունու աչքերից թափւում են արցունքները, ապա նա վեր է կենում, երեսալով հասնում է վարդապետին, Թափով յետ է քաշում, բացւում է սեղանը լուսապարզուած՝ ինչպէս իր հոգին աշխարհի առաջ:

— Ողորմութեան քո դուռը բաց մեզ Տէր, լսւում է ցնծութեան երգը...

Քահանան ոտքի է ելնում. ժողովուրդը նոյնպէս. ճակատները բարձրանում են հողից, աղօթքի շշնջիւնը վերսկսւում. Սօղոն իջնում է աստիճան-

ներով, նա գունատ է, աչքերը խոր ընկած, շրթունքներն իրար սղմած՝ ասես տեսած գաղտնիքը պինդ պահելու համար, իջնում է ու անցնում խորան, հանում է չապիկը եւ գալիս, իր սեան տակը կանգնում քարացած:

Ժամաւորները դուրս են գնում իրար յետեւից ու պլխիկոր. ամէն մէկը մտածում է իր մեղքերի, իր արած-գործածի մասին, եւ մի մութ անհանգստութիւն դիշերուայ պէս ծանր՝ Թառում է սըրտերի վրայ. գնում են, ծածկւում տներում, մինչեւ վաղորդայնը գայ, լոյսը բացուի, ամէնօրեայ ժխորը կեանքի, ե՛ւ կիրքը կատաղի, ե՛ւ տենդը ախտաւոր, ե՛ւ ցաւը անքուն, ե՛ւ ամէնքի վրայ պատրանքը գունատ:

Սօղոն չի չտապում. նա մենակ է եկեղեցում. մենակ սրբերի ու հրեշտակների ու իր հոգու հետ. մենակ է արար-աշխարհում. իր վաղն էլ նոյնն է, ինչ որ երէկը, ուսին բեռ չունի արցունքից դուրս. ու լացը գալիս է, ինքն էլ չի խմանում, Թէ ինչո՞ւ. նստում է սեան տակը, կիսախաւար եկեղեցում, ու երկար երկար արտասւում:

Կ'ուզէր այսօր, այս ժամին խակ մեռնել:

«Մէկ չէ՞, էսօր կամ վաղը, կամ եկող տարի, մրմնջում է նա, բզզոց է դուրսը, բզզոց է էս փուչ աշխարհը»:

Այնպէս կ'ուզէր այլեւս դուրս չգալ փողոց, աշխարհը չտեսնել, ախտի ու տանջանքի բզզոցը չլսել, տրտմութեան հովիտը Թողնել...

Եկեղեցին խոպան մընում է. ու խաւարը կամաց-կամաց լցւում է ջուխներով, անորոշ, խոր-

հրդաւոր ձեւերով, որոնք բարձրանում են, իջնում, գալարւում են օդի մէջ: Զարզանդ է պատում Սօղոյին, բայց եւ երջանիկ է այդ սարսափի մէջ, խորհուրդն է ապրում գերբնական:

«Ներա՛նք են, ներա՛նք են», չչնչում է նա իր հոգուն, եւ Սօղոյի հոգին նոյնպէս թրթռում է եւ ճախրում անհունի մէջ:

«Ներա՛նք են, ներա՛նք են, ի՞նչ են խօսում, ի՞նչ են ուզում, քանի՞սն են»... Սօղոն փակում է աչքերը, մնում երեսն ի վար գետնատարած ու լռում է. ապա նորէն նայում է անուշ զարզանդով, նոյնն են, խաւարը չչնչում է Սօղոյի ականջին, սուրբերը դուրս են ընկել շրջանակներից եւ քայլում են սեղանին, հրեշտակները թրթռում են բարձրում ու նրանց թեւերի շրշիւնը զարկում է Սօղոյի ճակատին. աչքեր կան այս այն անկիւնում, որոնք փայլատակում են սասանեցուցիչ բոցով. Սօղոն փորձում է աղօթել, ի զուր, դողդողում է ամբողջ մարմնով, առամներն իրար են զարկւում, մազերն են դիզանում գլխին. նա թափով ոտքի է ելնում, յետ-յետ գնում դէպի դուռը, երեսը ծածկած երկու ձեռներով ու դուրս է փախչում գլխաբաց, խուխու մազերը գարնանային երեկոյի հովին տուած, վազում է խաւար փողոցներով, խելագարի պէս:

— Տեզելֆից է գալիս անճար հալիւորը, տեսա՞ր քուրիկ, չչնչում են իրար ուշացած պառաւները ու երեսները խաչակնքում:

IV

Օրերն անցան օրերի յետեւից, որպէս կարաւանը մրջիւնների, որոնցից ամէն մէկը մի բան է

տանում. բեռ ու բեռնակիր փոքր են, աննշմար, բայց փուչիների ու աւազի մէջ մի գիծ է բացւում, կեանքի անծայր ճամբան:

Սօղոյի օրերի միաձեւ չարանը գնում էր հանդարտ, մինչեւ որ հասաւ օտարականը:

Ո՞վ կ'ասի, թէ ո՞ւմ բախտը ուր է դարբնւում եւ որի՞ ձեռքով:

Աշնանային մի երեկոյ՝ Սօղոն ըստ սովորութեան քաշքշում էր զանգակների թելերը, աղօթաւորներին կանչելով:

Եկեղեցու դրանը մի անծանօթ մարդ յայտնուեց. նա միջահասակ էր, անորոշ դէմքով, թաւ մազ ու միրուքով, երեսունը հազիւ անց մի երիտասարդ: Նա երեւի շատ էր քայլել. մէջքին մաղախ ունէր, փուչոտ էր ու յոգնած:

Մարդը մօտեցաւ դրանը, ներս նայեց անհամարձակ ու մնաց կանգնած՝ ասես հրաւէրի սպասելով:

Սօղոն առանց զանգակների թելերը բաց թողնելու, ուշադրութեամբ նայեց օտարականին եւ իմանալուրի նրա փարթամ ու փառայեղ միրուքին, որ հակառակ փուչուն ու կեղտին, վայելչօրէն ծածկում էր ամբողջ կուրծքը:

— Ո՞վ ես, ի՞նչ մարդ ես, ա՛խպէր, հարցրեց Սօղոն:

— Ճամբորդ եմ, ղարիբ, ասաց անծանօթը:

«Երեւի լեռնական է», խորհեց Սօղոն, որովհետեւ օտարականի պատասխանը, հակառակ իր յոգնածութեան, շատ բարձրաձայն էր:

— Ո՞րտեղից ես գալիս:

— Ա՛յ, էն կողմերից. օտարականը ձեռքը մեկնեց դէպի Բարթողեան լեռնաշղթան:

— Էդ կողմերը լէն են, տնաշէն, ասա՛ ո՞ր տեղացի ես:

— Ռչտունցի եմ:

— Հասկացայ, «վըռըչիկ» ես, լրացրեց Սօղոն ժպտալով. անունդ ի՞նչ է:

— Յուսօ, քեզ ծառայ, ժա՛մկոչ ախպէր:

— Ժամկոչ չեմ, տիրացու եմ, դեղի տիրացուն, դպիրը, բացատրեց Սօղոն ու իսկոյն յիշեց կնոջ խօսքերը՝ «անունդ ի՞նչ է, անունդ»... Ու խորհեց որ Սալբին իրաւունք ունի, բայց ուշ է, ուշ է:

— Բարի ես եկել, Յո՛ւսօ ախպէր, վերջացրեց իր հարց ու փորձը ու թողեց դանդակների թելերը:

Ղարիբ, ճամբորդ շատ էին անցնում մանաւանդ վերջին ժամանակները, սա էլ նրանցից մէկը. եկեղեցին նրանց առաջին կայանն էր:

Ու տիրացուն առաջացաւ դէպի սեղան կանթեղներն ու մոմերը վառելու. սակայն հազիւ մի քանի քայլ արած՝ նա յետ դարձաւ յանկարծ ու կրկին մօտեցաւ օտարականին. «ծպտուած քահանայ չէ», մտածում էր Սօղոն, սոսկական մարդը այդպիսի մխրուք չի պահի: Հոգեւորականի շատ էր նման անծանօթը:

— Ժամ ասել գիտե՞ս, հարցրեց Սօղոն ժպտալով, տէրտէր չլինե՞ս:

— Չէ՛, ախպէր, տէրտէր չեմ, քիչ-միչ ժամ կ'ասեմ:

— Էհ, լաւ է, արի, արի, էս երեկոյ մի բան կ'ասես, պարկդ տար խորանը դիր:

Օտարականը հետեւեց Սօղոյին, խորանը մտաւ, ուսի պարկը վար դրեց, փոշիները թափ տուեց ու եկաւ կանգնեց սեան տակը, Սօղոյի կողքին:

Քահանան եկաւ. ժամաւորները նոյնպէս լցուեցին եկեղեցի. չաբաթ երեկոյ էր: Սօղոն կանգնած օտարականի կողքին ինքն իրան խորհում էր, թէ դուցէ հէնց Աստուած հասցրեց այս մարդուն, ինքը ծեր է, գործը շատ. ժամի սպասաւորութիւնը, մոմեր վառել, աւլել, զանգ քաշել, թաղում, նրան կը թողնի, ինքը կը պահի աստուածքը. լաւ օգնական կը լինի իրան:

— Երկա՞ր կը մնաս էս տեղ, կամացուկ հարցրեց Սօղոն:

— Չգիտեմ, մի մարդ որ մէջքին պարկ ունի ու ձեռքին գաւազան, Աստուած գիտէ:

— Մնա՛, չէն գեղ է, հայ քրիստոնեայ, մի կտոր հաց կ'ուտես:

Քահանան ժամն օրհնեց:

— «Լոյս զուարթ»ը կարո՞ղ ես երգել:

— Կարող եմ, եղաւ պատասխանը:

— Զայնդ ի՞նչպէս է:

— Չգիտեմ, ձայն է էլի:

Թո՛ղ երգի տեսնենք, մտմտաց Սօղոն ինքն իրան, ու չտապեց աչ դասը, քահանային յայտնեց եղելութիւնը, ու յետ եկաւ:

— «Լոյս զուարթ»ն ասա՛, ախպէր, չչնչաց նա ու դնաց դէպի բուրվառը, կրակը բորբոքեց:

Օտարականն սկսեց «Լոյս զուարթ»ը:

Առաջի մի քանի անհամարձակ, վախկուկ հընչիւններից յետոյ — որոնք յատուկ էին զարիբութեան ու յոգնածութեան — օտարականի ձայնը կամաց-կամաց կենդանացաւ ու թափ առաւ:

Երգիչ էր նա ու աննման երգիչ:

Երկնային մեղեդու պէս նրա երգը զալարւում էր ու դողդողում մի վայելչութեամբ ու յոյզով, որ հմայեց ամէնքին. աղօթաւորների շարքերում նախ տիրեց մի քար ու բերանաբաց լռութիւն, ապա մի խուլ չշուկ բարձրացաւ. իւրաքանչիւրը հարեւանին էր յայտնում իր զարմանքն ու հիացումը:

Օտարականը մէջքը սեանը տուած ու գլուխը յետ ձգած, հայեացքը վեր՝ երգում էր յափշտակութեամբ. նրա հզօր երիտասարդ ձայնի հնչիւնները մերթ փոթորկի պէս յորդում էին եկեղեցին, մերթ իջնում քաղցրանում էին որպէս աղբիւրի կարկաչ, մերթ դողդողում որպէս ծառերի մէջ լացող հովը, եւ հանգչում զեփիւռի թրթռուն սոյլերով:

— Ո՞վ է, ո՞վ է, հարցնում էին իրար չորս կողմից. առաջին շարքերից ոմանք մօտեցան դասին, Սօղոյի ուսը թօթուեցին լմանալու համար, թէ ո՞վ է այս հրաշք երգիչը:

— Անցորդ է, ղարիբ... վրուընչիկ է, աւելացրեց Սօղոն ժպտով, որի մէջ թեթեւ հեգնութիւն կար:

Եւ բերնէ-բերան անցաւ եկեղեցում «վրուընչիկը»: Պառաւ կանայք, չարսաւաւոր հարսներ նոյնպէս իրար էին անցել եւ իրար ուսի, գլխի վրայից աշխատում էին տեսնել այս անօրինակ

«վրուընչիկին»: Բոլոր հայեացքները դարձել էին դէպի ձախ դասը, որտեղից բարձրանում էին դիւթական հնչիւնները: Փահանան նոյնպէս յափշտակուած էր օտարականի երգով ու մի քանի անգամ, հակառակ իր սովորութեան դարձաւ ու նայում էր երգչին:

Սօղոն կանգնած տեղում իսպառ փոքրացել էր:

Սկզբում նա անուշադիր էր, նոյնիսկ մի փոքր հպարտ, որ այս անծանօթին ինքն է առաջնորդել, երեւան հանել. հետզհետէ սակայն աճող ընդհանուր յուզմունքի ու հիացմունքի մէջ, նա նախ չուարեց, ապա կծկուեց իր ներքին խռովքից: Նա նման էր այն երեխային, որ ջրի թմբի վրայ խաղալով, կամաց-կամաց քանդել է պատուարը, եւ յորձանքը տանում է ամէն ինչ: Արդար, աննախանձ ծերունին, որ աշխարհի չար ու բարին բզզոց էր համարել միշտ, այժմ ինքն իր մէջ եռում էր, նզովում իր հարցասիրութիւնը, որի չնորհիւ այս վրուընչիկը այժմ տէր է եկեղեցուն, տէր է բոլոր հոգիներին: Ինչ որ մի բան էր քանդւում, քառասուն տարուց ի վեր կառուցուող չէնքը:

«Ի՞նչ գործ ունէիր, անխե՛լք ծերուկ, մտածում էր նա, ինչի՞դ էր պէտք, թէ ո՞վ է, ո՞ւր է գնում, ժամ ասել գիտէ՞... Ո՞ր տեղից եկաւ էս վրուընչիկը»...

Եւ Սօղոն կամացուկ կռացաւ օտարականի ուսին.

— Կարճ կապի՛ր, ասաց, ասմունք չատ կայ:

Օտարականը չհասկացա՞ւ արդեօք, թէ չլսելու տուեց. միայն թէ նրա երգը աւելի եւս զնգզնգաց,

ձայնը քանի գնաց, աւելի հզօր ու աւելի յուզիչ դարձաւ:

Սօղոն թափով ու ջղայնօրէն պոկուեց իր տեղից, մօտեցաւ գրակալի վրայ կախուած մեծ կանթեղին, պատրոյգն էր չտկում. ապա գրքերը յարդարեց սեղանին, անցաւ խորան առանց պատճառի ու կանգ առաւ, նայում էր օտարականի պարկին. այդ պարկը...ճամբաների փոշին, խորհրդաւոր ու պատառոտուն, ինչպէս կեանքը անցորդի. մի վայրկեան մի վայրագ ու չար ցանկութիւն ծագեց իր սրտում, հարուածել, կոխկռտել պարկը. ոտքը բարձրացրեց ու յետ թռաւ օձից խայթուածի պէս. ինքն իր մտածումից ամաչելով ու գրեթէ սարսափած դուրս թռաւ, գնաց իր տեղը գրաւեց. մնացած ժամերգութիւնը Սօղոյի համար անցաւ ինչպէս մի վատ երազ, որից կ'ուզէր չուտ ազատուել:

Ժամասացութիւնը վերջացաւ, բայց Սօղոյի տանջանքը չարունակուեց դուրսը:

— Զայնդ անպատ, ա՛խպէր, օրհնուի՛ս դու, էդ ո՞ր տեղից եկար, կոչում էին չորս կողմից օտարականին, որ պարկն ուսին, չուարած ու ամաչկոտ, կանգնած էր եկեղեցու բակում. ամէն ոք նրան իր տունն էր հրաւիրում դիշերելու:

Ու վերջչիկ Ցուսօն մնաց դիւղում, որպէս երկրորդ տիրացու, սպասաւոր եկեղեցու:

Եւ առաջին անգամ իր կեանքում Սօղոն տուն էր դառնում եկեղեցուց եւ հոգին լաւ չէր, չար էր:

Գնում էր ու ինքն իրան չէնչում՝

— Ո՞ր չհանդամից եկաւ էդ վերջչիկը:

Խորունկ տրտմութիւն էր համակել նրան. իր պարտութեան ծոցից մի չար բոյս էր բարձրանում հոգում, նախանձը, եւ զայրանում էր, որ վերջչիկն է պատճառ այդ ահագին թշուառութեան:

— Գուցէ թողնի, հեռանայ — օտարական է. մէկ չէ՞ նրա համար այստեղ կամ ուրիշ տեղ:

Չէ, վերջչիկ Ցուսօն չհեռացաւ, մնաց ու հաստատուեց դիւղում:

Եւ ծերուկ Սօղոյի աստղը թեքուեց անդարձ: Շարական ու մեղեդի, սաղմոս ու ճաշոց իրար յետեւից անցան վերջչիկ Ցուսօին. դժբախտ ծերունին սկզբում փորձեց իր դիրքերը պահել. նա բոլոր ոյժով ձայնը կլկլացրեց, ծեր աչքերի յետին թափով մարզարէներն ու առաքեալները կարդաց, ի զո՛ւր, նրա ձայնի մէջ ճեղք կար, ինչպէս հինցած, ճաքած աման, տառերը խոյս էին տալիս աչքերի տակից, ինչպէս քանդուած բնից խաժամուժ փախչող մրջիւններ. հին դժար-դժար բառերն ու անունները հրէշների պէս խեղդում էին նրան, մանաւանդ՝ երբ Ցուսօի հետ փոխ էր առում: Հեղեղ էր այս երիտասարդ ուժեղ կեանքը, որ սրբում տանում էր ամէն ինչ: Սօղոն իր եղծուած, պառաւած ձայնով, իր թուլացած աչքերով անկարող էր այլեւս դիմադրել: Ծերունուն մնաց իր բուրվառը, ժամի աւելը, դանդն ու գերեզմանափորի բահը, բոլորն ինչ կարծում էր պիտի փոխանցի նորեկին: Նա այժմ եկեղեցում ստուեր էր միայն, աւելի փոքրացած, աւելի խղճուկ ու կորացած մի մութ բեռի տակ: Եկեղեցու խնկի ծխի մէջ, կիսախաւարում նա հազիւ էր նշմարւում որպէս ստուեր եւ

ձայնն էլ չէր լսում. ժողովուրդը կամաց կամաց մոռանում էր նրան, Սօղոն կարծես էլ չկար....

Յուսօի դէմ չէր պայքարում այլեւս. ըստ երեւոյթին հնազանդ էր իր ճակատագրին, բայց ներքին սարսափելի պայքար ունէր հոգում բուն դրած չարը խեղդելու համար:

«Ձէ՞ կեանքը բզզոց է, հա՛լիւոր, էս ի՞նչ է... մրմնջում էր նա մենութեան մէջ, փչրի՛ր էս ամանը Տէ՛ր, քառասուն տարի ես էն անբիծ, մաքուր եմ պահել քեզ համար, փչրի՛ր, թո՛ղ սատանան բուն չդնի նրա մէջ»:

Լալիս էր ծերունին եկեղեցու մենութեան մէջ, լալիս էր, կուրծքը ծեծում, փրկութիւն աղերսում սուրբերից. ի զո՛ւր. սատանան պինդ էր նստած իր հոգում, տանջում, չարչարում էր նրան. կեանքի ու փառքի հին ծարաւը այրում, փոթորկում էր նրա ներսը:

«Բզզոց է աշխարհը, ցնդած հա՛լիւոր... սո՞ւտ էիր ասում մինչեւ հիմա...կեղծաւո՛ր, ստախօ՛ս... Տէ՛ր, Տէ՛ր, ես հող ու մոխիր, թիկունքիս արցունք էր միայն, արդար բեռ, էս նոր սեւ բեռը, չարութիւնով լիքը իմ խեղճ ուսերին, չատ է ծանր, ազատիր ինձ սրանից. ես ինչպէ՞ս ներկայանամ քեզ, Տէ՛ր, Տէ՛ր, փչրիր էս ամանը, թող ազատուի հոգիս»...

Աղօթքով հանգստացած՝ նա տուն էր դառնում, թուում էր թէ իսպառ ազատուել է սատանայի բեռից, հին օրերի արդար ու հանդիսատ խիղճն ունի. թուում էր, մինչեւ յաջորդ օր, երբ նորից ճակատ առ ճակատ հանդիպում էր Յուսօին...ու նորից

կատաղութիւնը, նախանձը, չարութիւնը եռում էր իր հոգում. գերմարդկային ճիգ էր անում չճչալու համար: Երբեմն խորհում էր համոզել Յուսօին, որ թողնի գնայ:

— Գնա՛, գնա՛, Յուսօ, հեռացիր մեր գիւղից, մեղք եմ, հոգիս կորչում է, գթա՛, ու թո՛ղ ինձ... Տե՛ս, անողորմ, ախր ծեր եմ, մէկ ոտքս գերեզմանում, քայլում եմ, ու մէկը յետեւիցս ցրում է քայլերս, ժամանակս կարճ է, գնա՛...

Շրթունքներն էր կծոտում, մնում էր եկեղեցում մեն-մենակ, երբ ամէնքը հեռանում էին, կըրկին աղօթում էր, լալիս, կուրծքը ծեծում ու վիրաւոր հոգւով տուն դառնում:

Եւ տանը՝ իր յարկի տակ նա հանգիստ չունէր: Կինը՝ Սալբին, նորից վշվշում էր, հին վէրքը բացուել էր լայն ու խորը. հին վէճը վերսկսուել էր. հին երեստուանքն ու խայթոցները:

— Անունդ ի՞նչ է, անունդ, տնաշէնի մարդ, ասում էր Սօղոյին, քառասուն տարի մէջք կոտրեցիր, ոսկոր մաշեցիր, դռներին չուն թակեցիր, վերջդ էլ էս է... սարի վըրըշիկը եկաւ ժամի ասմունքը ձեռքիցդ առաւ. չարական, սաղմոս, ողջ գնացին, հացդ էլ հետը, դու էլ մա՛րդ ես... էլ ասող, հարցնողն ո՛վ, կաս, թէ չկաս, հէ՛յ զուլում աշխարհ:

Ծերունին էլ չէր պաշտպանւում. սակայն երբ կինը չատ էր վշվշում, չատ էր իր հոգին ծուատում, նա կամացուկ, մեղաւորի պէս ասում էր.

— Բզզոց է ամէն ինչ, կնի՛կ, քո ասածն էլ բզզոց է, վրըշիկն էլ, գեղն էլ ու ողջ աշխարհը.

դռնբացէքը կայ, բաւական է. ամէն մարդ մի ճրագ կ'ունենայ, էն էլ իմն է...

— Ջուրը ջրաղացը տարաւ, չախչա՞խն եա փնտռում, խե՛ղճ մարդ:

Չախչա՞խ... Չէ՛, դռնբացէքը չախչախ չի, նա ողջ ջրաղացն է Սօղոյի համար, ջուր ու ջրտուն, նաւ ու չարխ, քար ու ալիւր, բոլո՛րը, բոլո՛րը այնտեղ է: Սօղոն եղունգներով ու ատամներով է կախուել դռնբացէքից. քառասուն տարի նրա համար է մեռելի չոր հագել, դռնէ դուռ ընկել, ջանդ քաչել, ժամ աւլել. քառասուն տարի նրա համար է կրել քահանայի խստութիւնները, ծածուկ, ներքուստ լացել, դուրսը՝ աչխարհին ժպտացել, Սալբիի տրտունջն ու չար խօսքերը տարել...

Դռնբացէ՛քը...քառասուն տարի չինած իր հոգու տաճարը, ուր ինքը մենակ է իր Աստծու հետ:

— Դռնբացէ՞քը... խե՛ղճ մարդ, էն էլ վըռըշիկին կը հասնի, կը տեսնես:

— Ի՞նչ, ի՞նչ...

— Ասում եմ, դռնբացէքն էլ քո ձեռքից կ'երթայ, կրկնեց Սալբին չոր ու հանդարտ:

Սօղոն նախ փորձեց հեգնօրէն ծիծաղել, լսածը կատակի տալ, բայց ծիծաղի փոխարէն նրա դէմքը այլանդակօրէն ծամածռուեց. նա զգաց, ինչպէս մէկը մի դանակ կոխեց իր սիրտը, ու հանեց. արիւնը ժայթքում էր. նա ձեռքը տարաւ ու կուրծքը սղմեց անհնարին ցաւը մեղմելու համար:

Այս սարսափելի միտքը երբեմն անցել էր նրա գլխով, բայց Սօղոն այն վանել էր զգուշութեամբ

եւ իր հոգու դուռը պինդ-պինդ փակել այդ սպանիչ մտածումի առաջ, ինչպէս դիչերը փակում է իր խրճիթի դուռը աչխարհի չարի առաջ: Այս ի՞նչ ասաց կինը. մի՞թէ հնարաւոր է այդ. ախր էս վէրան աչխարհի խաւարի մէջ քայլելու համար ամէն մարդ մի լոյսի պէտք ունի, մի սլսլալան լապտերի. ո՞ւմ ձեռքը կը զօրի իր ճրագը մարելու. ախր իր կեանքի վերջին ծանր բեռ ունի ուսին, այս նզովուած բեռը, որ վըռըշիկը դրեց, ցած պիտի դնի, ցրիւ պիտի տայ Աստծու ոտքերի առաջ դռնբացէքի երեկոյին, երբ ինքը մեն-մենակ է՝ երես առ երես՝ Աստծու հետ: Ի՛րն է, ի՛րն է դռնբացէքը. ո՞վ կարող է խլել, ժամը կը փլի ախր. կասկածի օձը խեղդում էր նրան. Սօղոն հիւանդացաւ:

— Ջմեռնեմ մինչեւ դռնբացէք. մրմնջում էր նա:

Եւ չմեռաւ...

V

Այն տարին Զատիկն ուշանում էր:

Մաղկազարդին արդէն վառ գարուն էր. բնութիւնը լայնօրէն բացել էր իր բարի ու բեղուն կուրծքը արեւի տաք համբոյրի համար: Օդը գաղջ էր ու դուրեկան: Դաչտերն ազատուել էին ձիւնի ծածկոցից. Մասիսն էր միայն ու Բարթողեան լեռնաչղթան, որ տակաւին ճերմակ էին, բայց եւ նրանց ստորոտները մինչեւ ծնկները սեւին էին տալիս առաւօտեան նուրբ մշուշի մէջ: Մարտ ամսի հողմերը դեռ լռսպառ չէին դադարած, սակայն նրանց հեւքը դոլ էր ու նրանց հպումը լիզում, սըր-

բում էր սառուց ու ձիւն ամէն տեղ, ուր հասնում էր: Արեւի առաջին ցոլքերի հետ սեւ դաշտերից բարձրանում էր Թանձր գոլորշին, որ մի վայրկեան ամպանման ծալքերով օրօրւում էր եթերում, խաղում հովերի հետ, փայփլում ցոլքերի հետ ու ցրիւ գալիս ինչպէս յեղյեղուկ ու անձեւ մտածումն:

Աչնանացան արտերը ծլել էին ու ծածկուել կանաչ աղուամազով, որ աչք էր հրապուրում. արօրն էր գործում սեւ հողի մէջ եւ բացուած մուգ, թաց ցեղերից բարձրացող բուրմունքը մայրական կըրծքի անուշութիւնն ունէր: Այգիներում ծառերը ողջ ծաղկել էին երփներանգ ու ակնախտիղ. խնճորենին էր միայն ուշացել եւ մատաղ կոյսի ստինքների պէս ցցել էր իր ուռճացած, դողդոջուն կոկոնները, որոնց ծայրին կարմիր պտուկն էր Թրթռում ու ժպտում արեւին: Եւ չող ու մեղու լիզում էին բուրաւէտ ծաղիկները:

Խաղողի որթերը ձիւնի գերեզմանից դուրս ընկած՝ էտոցի յուզմունքից լացող ոստիկների վրայ մանրիկ, աղուամազ թերթիկներ էին չարել, որոնց տակ հանգչող կեանքը եռում էր երկունքի դողդոջով:

Ուղղաձիգ ու հպարտ սօսիները, մատաղ հարսի պէս դալար նազանքով օրօրւում էին հովերի առաջ դիւթիչ ու խոհուն, ու նրանց չարժումը կեանք՝ եւ չչուկն իմաստ ունէր: Առուների վրայ կախուած ուռենին տերեւակալել էր ու սաղարթով ծածկուել եւ նրա կանաչ վարսերը խաղում էին ջրերի հետ:

Կռունկները կղղում էին դաշտերում, երբեմն նրանց Թուխ երամը փռւում էր կանաչների մէջ, ու

կրկին կղղում ու սլանում ժպտուն երկնքով: Արաւիլները կռկռացնում էին կաղամախի կատարին, սարեակները ձայն էին տալիս իրար տարփանքի սուլոցով, ծիտերը պայքարի էին դուրս եկել ծիծեռնակների դէմ ապահով ճեղքը տիրելու նոր բոյնի համար. դաշտերում երդ էր լսւում նորից, աղջկերանց լէլէն զրնգան եւ հոտաղների հօրօվէլը գալարուն:

Մթնոլորտի մէջ համատարած մի խտղանք կար, որից ժպիտ էր ծաղկում:

Գարուն էր, Արարատեան դաշտի պերճ ու տարւոտ գարունը:

Ու բնութեան այս համատարած վարթամ զեղումի, ցոլքի եւ ժպտի օրերին Զարչարանքի չաբաթն էր մօտենում:

Զարչարանք ու զերադոյն յոյս է՛ւ Սօղոի համար:

Վաղը՝ կիրակի առաւօտ, Ծաղկազարդն էր, եւ երեկոյեան... դռնբացէ՛քը. հիւանդութիւնը դրա համար յաղթեց:

«Իմ Աստծուն մէկ էլ տեսնեմ, հրեշտակների ձայնը լսեմ, արքայութեան դուռը մէկ էլ բռնեմ, հոգիս թեթեւանայ, յետոյ... էհ, քո կամքը լինի Տէ՛ր...», մրմնջում էր նա, երբ չաբաթ ճաշից վերջ քայլում էր դէպի դաշտ ուռենու ոստեր բերելու վաղուայ հանդէսին ժամը զարդարելու համար ինչպէս ամէն տարի:

Ցուսօն ի զուր էր փորձել նրան ընկերանալ այս աշխատանքի համար. հոգու բան էր, Սօղոն չէր զիջել. քառասուն տարուց ի վեր իր թիկունքով էր ե-

կեղեցի մտել օրհնուած ուռենին. Սօղոն քաղեց դալար ճիւղերը, մի հատ խուրձ կապեց ու նստեց վըրան:

Յոգնած էր. նայում էր հեռուն ու թուում էր նրան թէ այսպիսի դարուն նա երբեք չէր տեսել:

Դաշտը ծիծիփում էր արեւի չողերի տակ, ծառերը ծօսափում էին, թռչունները երգում. Սօղոմի հոգին հանդստանում էր: Տեղ կար ամէնքին, ու այնքան բարի էր բոլորն ինչ տեսնում էր չորս կողմում: կաւկածի օձը մեռնում էր սրտում: Արեւը տաքացնում էր նրա ծեր մարմինը, սիրտը ջերմացնում, կեանքի մի յետին թաւի էր խաղում երակներում եւ նրա հետ վաղուայ յոյսը փթթում, որպէս դարնան ծաղիկ. դռնբացէքն ի՛րն էր, ինչպէս այս ուռիների խուրձը. վերկացաւ չալակեց կանաչ խուրձը եւ խաղաղ հոգւով քայլեց դէպի դիւղ: Եւ սակայն դարձեալ դիշերը անհանդիստ քնեց, թաւալ տուեց անկողնում եւ լուսաբացին շատ վաղ՝ վերկացաւ եկեղեցի գնաց:

Ծաղկազարդն անցաւ... եւ նորէն հոգում մութ կասկած զարթեց:

Երեկոյեան դռնբացէքն էր...

Սօղոն ժամն աւիլել էր, խոիր ու թաղիք յարդարել, մոմերը չարել Ջահերին ու մոմկալներին, կանթեղներին ձէթ ածել, պատրոյգները շտկել եւ երեկոյեան դէմ եկեղեցու բակի կաղամախի տակ նստած, ականջ էր դնում արագիլների կռկռոցին: Եկեղեցու ձեղունի տակ դրսից երկու ծիծեռնակներ բոյն էին կարկատում. քանի՛ տարի է, Սօղոն տեսնում է նրանց արագիլների հետ, գնում են, գալիս,

բոյնը կարկատում, ձագեր հանում:

Ու նորէն մի անհուն տրտմութիւն համակել էր իր հոգին, «բոյն են չինում, ձագեր հանում, մեծացնում, թռցնում, ու չուում են գնում, նորից գալիս, նորից բոյն, նորից ձագեր, յետո՞յ... ի՞նչ «յետոյ» անճար հալիւոր, աշխարհի բան է... դու հոգուդ համար ես աշխատել, ապա ձագերդ ո՞ւր են... անունդ ի՞նչ է, օրհնա՞նք, թէ՞ անէծք է քո անունը. ջուրը ջրաղացն է տարել, չախչախն ես փնտռում. դռնբացէքը չախչա՞խ է... ապա ո՞րն է ջրաղացը»:

Սօղոմ խոհերը խռովայոյզ էին ու տրտում. խաբե՞լ էր ինքն իրան, թէ «հոգու բանը» բաւական է կեանքին. ձագերդ ո՞ւր են... անունդ ի՞նչ է... էս անիծած վըռըշիկը ո՞ր ջհանդամից լոյս ընկաւ, անցորդ էր ախր, ինչո՞ւ մնաց. իսկ դո՞ւ, դու անցորդ չե՞ս, կեղծաւոր, վարիսեցի՛՛»:

Դատողութիւնը խառնւում էր, դլխում չփոթ էր իրար հերքող, իրար մտրակող մտածումների: Հոգին չարչարւում էր թակարդի մէջ ընկած թըռչունի պէս. չարչարւում էր ահագին ատելութիւնից եւ Աստծու սարսափից որ բռնել էր նրա ողջ էութիւնը:

Ո՞րտեղից այս նզովուած զգացումը. «Թող երդի, ի՛նձ ի՛նչ, մի ոտքս դերեզման, ճակատս հողին, աշխարհը բզզոց», մրմնջում էր նա, կ'ուզէր ատամները թաղել սեւական մխերի մէջ՝ հոգու տանջանքը չորթելու համար, կ'ուզէր չիկացած երկաթ խըրել այնտեղ, ուր նստած էր նզոված նախանձի զգացումը, կ'ուզէր ... եւ դարձեալ չրթունքները կրկնեցին թոյնով.

— Ո՞ր ջհանդամից եկաւ էս անիծուած վըռըշիկը...

Աղջեւը կանգնած էր ինքը՝ վըռըշիկ Յուսօն:

— Սօղո ախպէր, ուշ է ախը, գանդ քաշելու ժամանակ է:

Ծերունին ցնցուեց ու գայրացաւ.

— Ո՛ւշ է, ո՛ւշ է, ի՞նչն է ուշ, քառասուն տարի ժամ եմ ասում, դո՞ւ պիտի ինձ չուտն ու ուշը ասես, վըռըշի՛կ...

Ասաց, ու ինքն էլ ամաչեց իր խօսքից, մանաւանդ, այդ «վըռըշիկ» արհամարհոտ խօսքից, որ նա երբեք այդքան թոյնով չէր արտասանել Յուսօի երեսին:

Վերջինս մնաց կարկամուած ու վիրաւոր:

Սօղոն փորձեց ուղղել իր սխալը.

— Մեղք եղաւ, Յուսօ, որդի, մեղք եղաւ. բերնիցս թռաւ: Իրաւ որ ուշ է, դէ, ծեր եմ, ուշս կորցրել եմ... Ասաց ու առաջացաւ, գանգերի թելերը ձեռք առաւ, սկսեց եռանդոտ ու թափով քաշքշել:

Յուսօն մոմերն ու կանթեղներն էր վառում:

Պղինձը զնգզնգաց, դողդոջ ու մելամաղձիկ ձայները փուում, ծաւալւում էին դիւղի ու դաշտերի վրայ, իր ծեր, չորացած մատների վերջին ոյժով Սօղոն քաշքշում էր թելերը, զարթնող, տարփոտ կեանքն օրօրում վաղուայ համար. արագիլները լըռեցին, ծիծեռնակները բոյն մտան, գանգակների ճնկճնկոցն էր միայն, որ թրթռում էր, տարածւում երկունքից յոգնած բնութեան վրայ:

Սօղոն քաշքշում էր գանգերը ու միաժամանակ հրահանգներ տալիս Յուսօին դռնբացէքի մասին.

— Յո՛ւսօ, ո՛րդի, էն մեծ խաչը դիր դրակալի մօտ, որ տէրտէրը վերցնի դռնբացէքի համար. պըղտիկ տօնացոյցն էլ դի՛ր սեղանի ձախ կողմը, որ ես վերցնեմ, սեղան ելնեմ:

— Շատ լաւ, Սօղո ախպէր, եւ Յուսօն ճչդութեամբ կատարեց Սօղոի հրահանգը:

Սօղոն չարունակեց նոյն առհարկի փաղաքշական եղանակով.

— Յո՛ւսօ, մա՛տաղ, էն պղտիկ մոմկալն էլ դիր աստիճանների մօտ, որ վառեմ ձեռքս առնեմ սեղան բարձրանալիս:

— Շա՛տ աղէկ, Սօ՛ղո ախպէր, եղաւ պատասխանը եւ մոմն ու մոմկալը դրուեցին Սօղոի դռնբացէքի ճամբին:

— Յուսո՛, տղաս, դու էսօր ձախ սեան տակ կանգնի, երբ ես վեր ելնեմ սեղան, էս կողմը մարդ չի մնայ:

— Շատ լաւ, Սօղո ախպէր:

— Երբ վերջում ես վարագոյրը քաշեմ ու սեղանը բացեմ, դու ներքեւից իսկոյն սկսիր՝ «Զօղորմութեան քո ղժուն բա՛ց մեզ Տէ՛ր...»

— Հա՛, չատ լաւ, գիտեմ, Սօղո ա՛խպէր:

Եւ այս հանդարտ, սրտապարար կարգադրութիւններից յետոյ, յանկարծ Սօղոի հոգու անդունդներից հրաբուխի պէս բարձրացաւ նոյն նզովեալ հարցը.

«Ո՞ր տեղից էկաւ էս անիծուած վըռըշիկը, ո՞ր տեղից վարարած ջուրը, որ ջրաղացն է տանում». Հարցրեց ինքն իրան, ծածուկ, ահով ու դողով, ու ինքն էլ պատասխանեց՝

«Ջհանդամի տակից» ու բարձրաձայն աւելացրեց դարձեալ քաղցրութեամբ.

— Ցո՛ւսօ, որդի, լաւ է, դէ դնա չապիկ հագիր:

Ինքն էլ չտապեց դէպի խորանը:

Քահանան եկաւ. ժամաւորները լցուեցին եկեղեցի, ժամերգութիւնն սկսուեց:

Սօղոն բուրվառը ձեռքին խնկարկում էր, բայց մի վայրկեան աչք չէր հեռացնում քահանայից, ուշի ուշով հետեւում էր նրա շարժ ու ձեւին, գուշակելու համար, թէ արդեօք փոխուած չէ՞ տրամադրութիւնը. հսկում էր յօնքերին, նրա աչքերին, գիտէր, որ երբ յօնքերի երկու թանձր կամարներն իրար մխանան ճակատի տակ եւ աչքերը ծուռ նայեն, ուրեմն քահանան ծածուկ, անագորոյն զայրոյթ ունի. նայում էր Սօղոն ու մտածումներով տարուած՝ խռովայոյզ խնկարկելիս, ոտին իր չապիկն ընկաւ, թրպրտաց, երկու քայլ արեց ու սաստիկ չփոթուած կանգ առաւ. քահանան չը նկատեց, լաւ էր, որ չը նկատեց, բայց Սօղոն իր չփոթի մէջ շարականի փոխարէն ճաշոցը դրեց դրակալին, ու յանկարծ զգալով իր սխալը, յետ խլեց գիրքը, ուշակորոյս վազեց դասի հակառակ ծայրը՝ շարականը փնտռելով, մինչդեռ այն իր առջեւն էր, սեղանի վրայ.

— Հը՛, քոռանաս, հա՛, փուչ կենդանի, ծուռ խո՞տ ես կերել էսօր, ի՞նչ է, լսուեց քահանայի խիստ ձայնը, շարականը բեր, ի՞նչ ես մկան պէս վազ վազ անում:

Ծերունին խոպոպ գլուխը կորցրեց, չրթունքները դողդողացին երեխայի պէս, խղճուկ միրուքը

ցատկրտեց վեր վեր ծնօտի ջղաձգումներից, դէմքը ստացաւ եղկելի արտայայտութիւն, ուր այլ եւս խմաստ չը կար, այլ անհուն անճարութիւն.

Սօղոն այնպէ՛ս թշուառ էր...

Ժամաւորները կամացուկ քրքմնջացին ու նեղսրտմօրէն ժպտում էին դժբաղդ ծերուկի խռովքի ու ձախլիկ չարժումների վրայ. գթութիւն չը կար...

Ցուսօն հակառակ կողմից վազեց, պէտք եղած գիրքը բերեց գրակալին դրեց. իչխողն էր նա, բռնել էր ամէնքին իր երգով, իր ընթերցումներով, իր հրաշագեղ ձայնով, իր փառաւոր միրուքով, բռնել էր ժամաւորների ուշքն ու միտքը, նրանց հոգին:

Մենակ էր Սօղոն, մենակ ու լքուած:

Մնացել էր դռնքաջքը... Սօղոն կամացուկ մօտեցաւ ու վառեց աստիճանների վերը դրուած մոմը, որ իրեն դէպի սեղան, դէպի արքայութիւն պիտի առաջնորդէր գուցէ վերջին անգամ, վառեց, ու հայեացքը կրկին չեչտակի մեխեց քահանային ու Ցուսօին:

Դաւադրութիւն չը կա՞յ արդեօք:

Ինչո՞ւ է այդպէս ժպտուն Ցուսոն, ինչո՞ւ է ալ ձեռքով չարունակ շփում միրուքը, ասես մի կարեւոր բան անելու վրայ է:

Քահանայի յօնքերը շատ մօտ են իրար, քիչ է մնում երկու կամարները հանգոյց կազմեն ճակատի տակ: Սակայն քիչ յետոյ Ցուսոն թողեց միրուքը, քահանան էլ չկեց յօնքերը, երեւի մոռացած ազօքք էր փնտռում, յիշողութեան զօր էր տալիս:

«Չէ, սխալուել եմ», խորհեց Սօղոն, ու յան-

կարծ նկատեց, որ Յուսոն ե՛ւ երգում է, ե՛ւ աչք չի հեռացնում աստիճանների վրայ վառուող մոմից. պիտի վերցնի՞ անիրաւը. ասող լինի, թէ ինչո՞ւ վառեցիր, ցնդուած հալիւոր. ժամանակ չը կա՞ր, ի՞նչ է. մոմի կէսը վառուել է արդէն եւ պատրոյգը կռացել է, բոցը ծոմռուել. ահա Յուսոն երգելով հանդերձ, հանդարտ մօտեցաւ, մոմի ծայրը կտրեց, ու կրկին եկաւ իր տեղը կանգնեց. Սօղոն նորից սխալուել էր...

«Դարձեալ մեղք արի հոգուս, ներիր Տէ՛ր, ներիր, բոլոր մտածումներս քեզ համար են» աղօթում էր Սօղոն:

Աղօթեց ու հանգստացաւ. չէ՛, դաւադրութիւնը չը կար. այժմ նա վստահ է, որ ինքը պիտի բարձրանայ սեղան:

Եւ ահա քահանան խաչը վերցրեց, հանդիսաւոր կերպով չարժուեց դէպի դասի կեդրոնը, սեղանի առջեւ ծունկ չոքելու համար. Յուսոն նրա յետեւից. Սօղոն ձախ կողմից չարժուեց դէպի սեղանի աստիճանները, մի ոտք բարձրացաւ, երեսը խաչակնքեց ու ձեռքը մեկնում էր դէպի մոմկալը, երբ լսուեց քահանայի ձայնը,

— Յուսօ, տղա, սեղան բարձրացիր, Սօղո՛ այստեղ արի:

Յետոյ էլի բաներ ասաց քահանան, բայց Սօղոն էլ չէր լսում... լսածը վերջին դատաստանի ահաւոր վճիռ էր իր համար: Սօղոն կամացուկ վար իջաւ սեղանի առաջին աստիճանից, մինչդեռ հակառակ կողմից վրդովչիկ Յուսոն բարձրացաւ ու ծածկուեց վարագոյրի յետեւը:

Սօղոն քարացած ու անմտօրէն նայում էր վարագոյրի եզրին, որտեղից ներս մտաւ Յուսոն, յետոյ չուրջը նայեց չուարած, բուրվառը վերցրեց եւ միանգամայն անտեղի՝ սկսեց խանդով խնկարկել տարածութեան մէջ: Ի զուր էր ձեռքի նշանով կանչում քահանան, Սօղոն մեխուած իր տեղում շարունակում էր անմիտ խնկարկութիւնը:

Քահանան ծունկի եկաւ, աղօթաւորները նոյնպէս, կանգնած մնաց միմիայն Սօղոն. նա այժմ էլ մենակ էր, խստաւ մենակ համայն աշխարհում. կանգնած էր մէջքը սեղանին տուած՝ երեսը դէպի ծնկաչոք ժողովուրդը, ու խնկարկում էր, պալանպալան ծուխ արձակում: Քահանան մի քանի անգամ նայեց Սօղոի անօրինակ չարժումներին, յօնքերը կիտեց, բայց դարձեալ զսպեց ինքը զինքը ու խաչով հարուածեց առջեւի տախտակին, մէկ, երկու, երեք...

Սօղոի շրթունքները չարժւում էին. նա մտովի համարում էր հարուածները՝ մէկ, երկու, երեք եւ զարմացաւ, որ չը չարունակուեց, ասես այդ հարուածները դռնբացէքի համար չէին, այլ ինչ որ դերբնական թրխկոց, որ պիտի չարունակուէր անհամար ու անվախճան:

«Ջուրը չախչախն էլ տարաւ... էլ ոչինչ չը մնաց... անունդ ի՞նչ է... անուններս վրդովչիկ է... սարի վրդովչիկ.... մէկը չը մեռնի, միւսը չի ապրի... բզզոց է աշխարհը — սուտ է, կեղծաւոր քեաֆթառ... մի հատիկ լոյս էր ախր... ապա ճամբան ի՞նչպէս գնամ, մոմը վառուեց, վերջացաւ, մութ է...»

Սօղոն զառանցում էր, միայն շրթունքներն էին շարժւում եւ ականջներում մի անհուն խշրտուկ, յետոյ մի խուլ ու վիթխարի զրնգոց, ... զանգեր են խփում, ո՛չ այս եկեղեցու, այլ ուրիշ տեղ, հեռո՛ւ, հեռո՛ւ, աշխարհից դուրս, ուր կանգնած է Սօղոն մեն-մենակ, կանգնած է իր սեփական սիրտն իր ձեռքին, լերկ ու արիւնոտ սիրտը, տաք ու թրթռուն, ու նա ցոյց է տալիս տիեզերքին՝ — այս ի՞նչ արիք, այս ի՞նչ արիք, մարդ եմ չէ՞... մարդ եմ ախր .... ցաւ ունիմ, բեռ ունիմ....

Եւ ասես պատասխանի վոխարէն այս գերագոյն հարցումին՝ լսւում է քահանայի ձայնը.

«Բա՛ց մեզ Տէ՛ր, զդուռն ողորմութեան»... Լըսում է Սօղոն այս կանչը, ցնցւում է հին օրերի պէս, ականջների խշրտուկը դառնում է ահագին որոտ, զանգակների ձայնը տիեզերքի աւերի դրնդիւն, կատաղի հողմ է փչում, ահաւոր փող է մռնչում, լեռներն են մէջքերը ծռում ծեծուած չների պէս, որպէսզի մրրկուած հոդինների խաժամուժն անցնի. դժոխքն է բացել իր լայնաւիեղկ դռները եւ երկնքի արքայութեան մուտքն է զոցուել անխորտակելի նիդերով:

Աշխարհի կատարածն է, վերջին դատաստանը. տիեզերքը դողում է սարսափից.

«Բա՛ց մեզ, Տէ՛ր»...

Եւ յանկարծ ի պատասխան լսւում է մի սրտապատառ աղաղակ, որ վոխւում է ցասումի ու հեկեկոցի մի խառնամանակ.

— Ո՞վ էք դուք, որ բացեմ... Սա Տիրոջ դուռն է, չեմ բացի, չեմ բացի ... քառասուն տարի բա-

նալին իմ ձեռքին է... չեմ բացի, թո՛ղ յաւիտեան վակ մնայ... գնացէք, գնացէք հուրը յաւիտենական.

Սօղոն է...

Քահանայ, ժողովուրդ չուարած՝ իրար անցան, ամէնքը քարացած՝ նայում են վոքրիկ ծերունուն, որ մէջքը սեղանին տուած՝ դէմքը այլակերպ, աչքերը բնից դուրս ընկած, մազերը խոիւ, բառաչում է, անկապ խօսքեր է արտասանում անդնդային ձայնով.

— Ձը խելագարուեց արդեօ՞ք... Սօղոն գըժուեց, գժուեց... Ընդհանուր չընչին է անցնում ապշած չարքերով — աղօթքը լռեց. ժամասացութիւնը խանգարուեց. կանանց դասից լացի ու վշտի ձայներ լսուեցին, տղամարդիկ ոտքի ելան խռնուեցին դէպի դասը, ուր Սօղոն էր, չ'իմանալով ի՛նչ անել. քահանան բարձրացրեց խաչը ու անմտօրէն կրկնեց մի քանի անգամ,

«Յիսուս Քրիստոս, Յիսուս Քրիստո՛ս»....

Սօղոն ոչինչ չէր տեսնում, ոչինչ չէր լսում, մռնչում էր անկապ բառեր, ու յանկարծ բուրվառը թափով նետեց դէպի վեր, որ օձապտոյտ գալարներով ու կրակ ու ծուխ ժայթքելով, ընկաւ գետին ղընգալով, մի վայրկեան Սօղոի պատկերը կորաւ ծխի ամպի մէջ, ապա կանգնած տեղը երերաց եւ ուշաթափ փռուեց յատակին...

. . . . . .
. . . . . .
. . . . . .

58

Ուշ գիշեր էր. Սօղոի տանը ձիթէ ճրագը մեղմիւ պլպլում էր. պատերի վրայ խաղում էին խոհուն ստուերներ անցնող կարաւանի պէս, որ չը գիտես, ո՞ր տեղից եկաւ եւ ո՞ւր է գնում: Սալքին կուացել էր մեռնող ամուսնու ճակատին ու կամացուկ հեծկլտում էր.

— Բզզոց է, կնի՛կ... քո լացն էլ բզզոց... աչքարհը ողջ բզզոց, մրմնջում էր Սօղոն, պղտոր աչքերը չուրջը դարձնելով. անունս էիր հարցնում, խեղճ կնի՛կ... անո՞ւնս ... հա՛, անունս ճամբորդ է... եկայ ու գնում եմ ... յոգնած եմ ... բա՛ց ... բա՛ց... բա՛ց...

1925

ՂԷՂՕՒ ԱՐՏԸ

ՂԷՂՕԻ ԱՐՏԸ

ՆՈՒԷՐ ՀԱՑ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ

I

Արարատեան դաշտի գիւղերից մէկի վաղորդեան ամրան տաք, լուսաշող երեկոյին մի ծերունի էր անցնում՝ առջեւից քշելով մի բարձած էշ:

Ծերունին բարձրահասակ էր, ջլուտ, չոր մարմնակազմով. ալեխառն մէրուքը, որ ծածկում էր նրա ամբողջ կուրծքը՝ այնքան թաւ էր ու փարթամ, որ ասես այդ մարմնի ամբողջ հիւթը ծառայում էր յատկապէս այս մէրուքի եւ նոյնքան թաւ բեխերի խուրձը սնուցանելու: Եքեղ մէրուքի այս չուքին մխանում էին նրա թանձր յօնքերը, որոնք երկու կտոր ճերմակ ամպի պէս հովանի էին անում ղէմքին: Յօնքերի ստուերի տակ նրա զոյգ մանր ու խորը աչքերը հապիւ հազ պէծին էին տալիս: Նա հագած էր գինուորի մի հնամաշ ու կարկատած վերարկու, որ, ըստ երեւոյթին, տարիներից ի վեր նրա ուսից ցած չէր իջնում, եւ տարուայ բոլոր եղանակներին միակ ծածկոցն էր. ոտներին ունէր գինուորի մի զոյգ թանձր ու կարկատուն կօշիկներ, որ նա զգուշաբութեամբ էր քաշ տալիս աղուրի տաք հողերի միջից. գլխին՝ ոչխարի մորթու մի բրդաթող վափախ, որ էլ ձեւ չունէր:

Նա քայլում էր ծանր ու յամր՝ թևիևօրվն յենուելով ձեռքի երկար գաւազանին: Երեւի հեռուից էդ էր գալիս: Ճամբաների չէկ փոշին ծածկում էր նրա գլուխն ու միրուքը: Դէմքը արեւատ էր ու յոգնած: Նա մերթ ընդ մերթ յետ էր ձգում գլխարկը քրտնաթոր ճակատը սրբելու համար:

Վերջալոյսի շեշտակի շողերը տակաւին այրում էին. մթնոլորտը բարկ էր ու դեռնից բարձրացած փոշին ծաւալւում էր երկնքի տակ անշարժ ու լայնատարած սփռոցի պէս: Խրճիթների ցեխէ պատերն ասես թրծուած էին արեւի ջերմութիւնից ինչպէս մի վթխարի փուռի մէջ եւ նրանց գորշ, միապաղաղ գոյնը ինչ որ չոր, անյոյս ձանձրոյթի տեսք էր տալիս նրանց: Պատերի ստուերները երկարում էին, եւ տեղ-տեղ դռների առաջ կանայք ու երեխաները նստոտած էին դեռնին մի փոքր զով առնելու համար: Նրանց կողքին ահագին գամփռները պառկած էին շոգից հեւալով եւ աչքերնին կիսախուփ:

— Գէվօ ապէրն է, Գէվօ ապէրը,— շշընջում էին այս ու այն դրան նստած կանայք, հէնց որ երեւում էր Բիբլիական Նահապետի տեսքով այս պարթեւահասակ ծերունին, որ դանդաղօրէն քայլում էր իր իշուկի յետեւից՝ ճամբորդական երկար ցուպին յենուելով եւ աջ ու ձախ բարեւում էր հարեւաններին, ամէն մէկին մի խօսք, մի հարցում ուղղելով:

—Բարի աջողում, Սօնա քուրիկ. երեխան լա՞ւ է:

— Հազար բարի, Գէվօ ապէր. փառք Աստծու լաւ է:

Ծերունին ժպտում էր իր անուշ, բարի ժպիտով:

— Բոստանը ջրեցի՞ք, Սանամ քուրիկ,— պատնում էր նա մի այլ տարէց կնոջ:

— Տղերքը ջրի վրայ են, Գէվօ ապէր:

— Դէհ լաւ է, լաւ է,— ասում է Գէվօն ու անցնում:

Իշուկը՝ տան մօտիկութիւնն զգալով՝ իր քայլերն արագացրեց: Ծերունին ստիպուած էր շտապել:

— Հանդա՛րտ, հանդա՛րտ, ա՛յ հայվան, կը հասնենք էլի,— ասաց նա կարեկցաբար:

Ի դո՛ւր. քանի մօտենում էին, կենդանին նոյնքան աւելի էր շտապում. ոտնգերը լայն բացած ու փնչացնելով, տնքալով, հեւալով շտապում էր վայրկեան առաջ տեղ հասնել եւ իր քիկունքն ազատել ծանր բեռից: Եւ իր ճիգերի մէջ կենդանու պոչը ցցւում էր նետի պէս, պարանոցը ձգւում ջղայնօրէն, գլուխը քաշ ընկնում մինչեւ գետին ու ականջները անյուսօրէն ու արագ-արագ ծեծում էին քունքերը գլխի փութկոտ երերումների հետ համաչափ, մինչդեռ ահագին բեռի տակ գալարուղ ոտներն իրար էին խառնւում եւ փոշու ամպեր բարձրացնում: Կենդանին իրաւ խղճալի էր:

— Գէվօ՛ ամի, իշիդ զօռը չատ է. ոնց է վզդում. — բոյին նայես չես ասի:

Ծօսողը գոչեր Հայրօն էր:

— Ջինս մալ է, Հայրօ՛, յետեւից չեմ հասնում անիրաւ հայվանի:

Գիւղամիջում մի խումբ մանուկներ՝ բռնած երկու հաւի չուրջը՝ ահագին քրքիջ էին բարձրացրել: Հաւերը միաժամանակ կուլ էին տուել ոսկի

տերեւի մի չիւը երկու ծայրերից, ու եկել էին դէմ առ դէմ կանգ առել առանց իրար դիջել կամենալու, նայում էին իրար յիմարաբար: Տեսարանը ա՛յնքան հետաքրքիր էր ու ծիծաղելի, որ չորս կողմից կանայք ու աղջկերք նոյնպէս հաւաքուեցին նայելու: Հաւերին գաղեցին,— ընդհանուր խնդում էր:

Գէվօի իշուկը հէնց այդ ամբոխի մէջ մտաւ: Նրա ցցուած պոչը, ահագին, թշուառ գլուխը, փնչոցն ու հեւ ի հեւ վազելը մանուկների ուշադրութիւնը գրաւեց: Նրանք քրքջացին, հա՛յ, հո՛ւյ արին ու մի քանի քար նետեցին դէպի իշուկը:

Ծերունին խոժոռուեց ու սաստեց նրանց: Մանուկներն ասես դրան էին սպասում: Նրանք էլը թողին ու դարձան տիրոջը եւ ամէնքը մէկէն սկսեցին ծերունու չեռւից յանդով կանչել.

— Ղէ–ղո՛, Ղէ–ղո՛, Ղէ–ղո՛...

Կայծակ էր, որ ճայթեց ծերունու գլխին,— աշխարհը վրաւ ասես յանկարծական երկրաշարժից:

Նա կանգ առաւ քարացած իր տեղում, յօնքերը կիտեց, մռայլուեց ու չուրջը նայեց՝ կարծես ճըշտելու համար, թէ իրե՞ն են ասում «Ղէ–ղո»: Եւ, երբ համոզուեց, ճակատն անյուսօրէն քաշ ընկաւ իր ցուպի վրայ ու մնաց անշարժ, ասես ամաչելով նայել արեւին, երկնքին, աշխարհին. մինչդեռ մանուկները չեռւից աւելի եւս մօտեցած՝ դեռ չարունակում էին կանչել այդ ծաղրական մականունը «Ղէ–ղո, Ղէ–ղո», որ մի օր անիրաւ գիւղը դուեհիկ ու բութ անտարբերութեամբ կպցրել էր նրա ճակատին, որպէս իր աղքատութեան ու խեղճութեան կնիք:

Երեխաների ճիչ ու աղմուկի վրայ քնած շները վեր թռան տեղերից եւ հուպալով ծերունու վրայ վազեցին, որ, յանկարծ քնից սթափուածի պէս, գլուխը բարձրացրեց, մահակը քաշեց թաթով եւ առաջին պատահած շան թիկունքին խփեց: Հարուածը սարսափելի էր: Իր սրտի բոլոր դառնութիւնն ու ցասումն էր այդ մի հատիկ հարուածի մէջ: Շունը վար ընկաւ, ապա վերկացաւ եւ կաղկանձելով փախաւ դէպի առջեւի դուռը: Միւս շները ցրիւ եկան: Երեխաները լռեցին սասանուած: Շան կաղկանձիւնը դեռ երկար լսւում էր բակի խորքից: Դրան չէմքին երեւաց մի կանացի գլուխ, մի զայրացած ձեռքի չանչ բարձրացաւ եւ ծերունին լսեց պարզ ու յստակ իր հասցէին ուղղուած նախատական խօսքերը՝

— Թաղեմ բօյդ, Ղէ–ղո՛...

Դարձեալ Ղէ–ղո՛... Արեւն լիքա՛ւ, լիքա՛ւ, ստուերները կախուեցին — օրը վերջանում էր — ու ի՛նչ վատ էր վերջանում այս օրը — ճամբաների տանջանք արեւի կիպիչ շոլերի տակ: Քանի՛ դուռ էր ծեծել իր փոքրիկ վաճառքը անելու համար եւ յետոյ՝ այս օրավերջին՝ այս Ղէ–ղո՛ն:

— Նահլաթ քեզ չար սատանայ,— մռմռաց ծերունին ատամների արանքից ու առաջ անցաւ: Իրունին չուկը չկար: Նա իր ճամբան գիտէր: Արդէն հասել էր ու կանգ առել տիրոջ դրանը, հեւալով ու փնչալով, յետին ոտները չոռած, առաջիններն պողպողացնելով ծանր բեռի տակ:

Հասաւ եւ ծերունին:

— Ա՛լմաստ, Զարդա՛ր,— ձայն տուեց նա:

Դռնից արտօրանքով դուրս եկաւ մոայլ դէմքով մի տարէքոտ կին, թուխ ու կարճահասակ, խեխե-ւօրէն գիրուկ, բայց արագաշարժ ու ջլուտ:

— Եկա՞ր, Գէորգ Ջան,— ասաց կինը քնքշու-քեամբ:

— Եկայ, կնիկ,— եղաւ պատասխանը,— արի մէկ էս բեռը անասունի մէջքից ցած բերենք. խեղճ հայվանը հալից ընկաւ:

Դրան չէմքին յայտնուեց եւ տասնեօթ-տասն-ուէթ տարեկան մի աղջիկ՝ Զարդարը՝ չոր ու բարձ-րահասակ, որպէս իր հայրը ու թուխ դէմքով, ջը-լուտ, առնական չարժ ու ձեւով, որպէս իր մայրը:

— Հա՛յրիկ Ջան,— բացականչեց աղջիկը բա-բեւի փոխարէն:

— Զարդա՛ր Ջան, բալաս, էշը քշի ներս, մի բան գցիր վրան, քրտնած է, ու խոտ տուր:

Աղջիկը էշը ներս արեց: Ներսում աղջիկը էշն էր խնամում, մայրը ծերունու վերարկուի փոշին թափ տալիս:

Յետոյ Զարդարը եկաւ հօր կօշիկները քաշելու:

— Ի՛նչ ծանր են, հայրիկ:

— Քաշիր, բալաս, քաշիր, ծանր են ապա, «մեղքի բեռ» են անսիրտ խալխի դռներում:

Սովորաբար զուարճախօս, կատակարան ծե-րունին, որ անգամ ծանր յոգնութեան ժամերին պի-տէր խնդալ եւ իւրայիններին խնդացնել, այսօր մոայլ էր:

Մայր ու աղջիկ իրար նայեցին: Երեկոյեան հացը անխօս անցաւ:

II

Այն երեկոյ ծերունի Գէվօն շատ երկար նստեց բակի դրան քարի վրայ, չիբուխը վառեց ու ծուխը պալան-պալան արձակեց:

Մխում էր ու նայում հեռուն, ապառելով որեւէ հարեւանի: Ասելիք ունէր, գանգատ՝ գիւղից, աշ-խարհից,—սիրտը լցուած էր: Դաշտից զարձողներն չտապում էին. նրան ոչ ոք չէր ժառեռում:

Ծաւարն խոպատ իջաւ. գիշեր էր ու գեռ նա մե-նակ նստած էր ու խորհում էր իր բաղդի վրայ, իր կեանքի վրայ:

Աղքատ մարդ էր: Հօրից հող, անշարժ կա-ուածք չէր ժառանգել: Մշակութիւն էր անում, վարձկան էր սրա նրա դրանը կամ որեւէ ունեւորի բոստանն էր պահում, հասցնում ու իր բաժին բերքը լեռնային գիւղերում փոխանակում էր ցորենով, իր ընտանիքի հացը հայթայթում:

Աղէկ գէշ ապրում էր, չէր տրտնջում:

Իսկական անունը Գէորգ էր, նոյնիսկ Գէորգ ա-պէր, որ գիւղացիք դարձրին Գէվօ, քանի որ նրան բնաւ չյուզից, քանի որ Սարգիսը՝ Սաքօ էր, եւ Մխիթարը՝ Մխօ. գիւղի սովորութիւն էր:

Սակայն, ծերունին մի օր վրդովմունքով հա-կացաւ, որ իր յետեւից իրեն Գէվօ չեն կոչում, այլ Ղէ-զօ. ծաղրական ու ստորացուցիչ մի մականուն, ինչպէս ճչում էին այսօր մանուկները:

Գիտէր այդ, բայց երեսին ոչ ոք չէր ասել. ա-մէնքը նրան պիտում էին որպէս Գէվօ ապօր: Ճշմա-րիտ է, այդ Գէվօն այնքան առհասարակ, այնպէս քա-րիտ է, այդ Գէվօն այնքան առհասարակ, այնպէս քա-փանցիկ էր, որ տակից երեւում էր Ղէ-զօն, բայց

վերջապէս արտաքին վայելչութեան գոզ կար: Եւ այսօր աներես երեխաները այդ գոզը յետ քաշեցին:

— Շան ձագեր, չան ձագեր,— մոմոռում էր Ծերունին ատամների տակից,— ձեր ծնողները նզովուին:

Գիւղի չարութիւնը, բնութեան պէս սառն ու անողոք, դաժանօրէն ծանրանում է միշտ թոյլերի վրայ: Ունեւորի ու չունեւորի, հզօրների ու թոյլերի, կարողների ու անճարների աստիճանական էջքի մէջ գիւղը մականունների բաշխումն էլ կատարում է ըստ նիւթական կարողութեան: Աւազանը չի փրկի. աղքատի, անճարի անունը պիտի ծամածռուի, այլանդակուի եւ իջնի մինչեւ գետին, մինչեւ հող ու մոխիր:

Անհող, աղքատ, մշակ Ծերունին Գէվո չէր կարող մնալ: Դա շատ էր: Եւ գիւղը անուանեց նրան ...Ղէ-ղօ:

Գիւղի այս դաժան արհամարհանքի դէմ միշտ ըմբոստ, սակաւախօս, մռայլ Ալմաստը նոյնպէս վիրաւորանքի իր բաժինն ունեցաւ: Ասում էին, որ համաճարակների պահուն նա՛ է «վատ ցաւը գիւղ բերում, չար Ալմօն», եւ ատում էին խեղճին:

— Անաստուածներ, անաստուածներ,— մրմնջում էր Ծերունին:

Զարդարն իսկ, իր միակ աղջիկը, որ Զարդօ կոչուեց, յաճախ էր չափւում իր ընկերուհիների հետ այս անարդական Ղէ-ղօի համար, նոյնպէս անմասն չէր գիւղի ընդհանուր արհամարհանքից: «Որճ, կռուարար աղջիկ է»,— ասում էին հարեւանները:

Անգամ Ծերունու իշուկը, որ գրեթէ նրա ընտանիքի չորրորդ անդամն էր, ազատ չէր գիւղի ծաղր ու ծանակից, երբ անցնում էր գիւղամիջով: Վատ մարմնով, մաշուած կողերով, ահագին գլխով խեղճ անասունը իրաւ որ անօրինակ էր: Էշերը սովորաբար տրտում են լինում, բայց այս իշուկի տրտմութիւնը իմացական մի բան ունէր կարծես, որ ծանրանում էր Ծերունի Գէվօի բաղդի վրայ: Եւ յետոյ, նա շատ քիչ էր զոռում, այն էլ թանձր, խորը հեկեկոցի պէս, որ երբեք չէր վերջացնում ու կէսին յանկարծակի կտրում էր ու ձայնը փորը ձգում: Ծերունին աչքի լոյսի պէս սիրում էր իր իշուկը, միայն դժբախտ էր նրա այդ կիսատ, անօրինակ զոռոցից:

Ու ամէն անգամ, երբ կենդանին սկսում էր իր անասնական հեկեկոցը, տէրը կողքից կանչում էր.

— Հը՛, հը՛, թափըդ կտրուի, դէհ քչի մինչեւ վերջը էլ՛, ի՞նչ ես խեղդւում, անտէր:

Եւ իսկոյն յետոյ խղճահարուելով՝ աւելացնում էր.

— Եանի դուն էլ մի օր չտեսար, խեղճ հա՛յվան, ո՞րտեղից զոռաս...

Այսպէս էր Ծերունին ու իր ընտանիքը: Ու հին պայքար կար այդ ընտանիքի եւ գիւղի միջեւ, խուլ, քօղարկուած, լուռ պայքար, որի արտաքին ձեւը այդ թշուառ անունն էր, Ղէ-ղօ՛, իսկ բուն իմաստը աղքատի բարձրաւիզ հպարտութիւնն էր չընչաքաղցող անգիտակից հեգնանքի առաջ: Ու տառապողը այդ անիրաւ պայքարից դարձեալ Ծերունի Գէվօն էր. գիւղն անյոյզ էր ու անողոք:

Ու նորից յիշեց այսօրուայ անցքը:

Ցաւից ու վիրաւորանքից սիրտն էր պայթում: Ջիրուխը պալան-պալան ծուխ էր արձակում, ու ծերունին պատի տակ կծկուած խօսում էր ինքն իր հոգու հետ, գանգատ ունէր. դիչերուայ քար լռութեան ու խաւարի մէջ խօսք ունէր ասելու, ցաւի ու տանջանքի ծանր խօսք: Եւ մարդ չկար, ամայի փողոցից ոչ ոք չէր անցնում. հովն էր չշնչում, խաւարը գալարւում պատերի տակ, չներն էին հաչում խելայեղօրէն, մի բու էր հեծկլտում ու մի ուշացած սայլ ճռնչում հեռու դաշտերում:

Մենակ էր փողոցում, ու չուրջն ամայի, եւ իր հոգու առջեւն էր փռում սեփական կեանքը, ինչպէս տրտում մանուկ, որ իր ցաւն է լալիս մօր գրկում: Եւ փոխ առ փոխ ցաւոմից՝ ցաւի, եւ ցաւից ցաւումի անցնելով, նա սեփական կեանքն էր քրքրում, ինչպէս սուր նշտարակով հին վէրքը խառնես:

Ու գլխում մրրիկ էր ցաւի ու վիրաւորանքի.

Դուրս չգա՞լ վաղն իսկ գիւղամէջ,— խորհում էր նա, ծառանալ ողջ գիւղի դէմ, տարիներից ի վեր հոգում մթերուած ամբողջ տանջանքն ու ցաւումը ճչալ ու պահանջել, որ այլ եւս ոչ ոք չհամարձակուի իրեն Ղէղօ կոչել:

Խորհում էր... ու անմիջապէս աչքին ներկայանում էին հեգնող, բութ ու չար դէմքերը, ժըպտուն, նենգաւոր շրթունքները: Լսում էր ամբոխի յիմարական քրքիջը եւ քրքիջի միջից հարիւրաւոր բերաններից ժայթքող վիթխարի՝ Ղէ-ղօ՜ն... Եւ այդ ոռնացող, անհիրա ամբոխի դէմ ինքը մեն-մենակ կանգնած, մենակ ու աղքատ, աղքատ ու ան-

հոգ, հոգ ու մոխի՛ր... Ու կծկւում էր իր քմբին, աւելի փոքրանում, ատամները ճռռոցով իրար վրայ էր սղմում հին ցաւը փչրելու համար:

— Օձն իր չապիկը չի փոխի, Ղէ-ղո,— վշտըշում էր ծերունին, դու քո անարգանքից չես ազատուի: Մկրտութեանդ աւազանն է պղծուած, ճակատիդ մեռոնը: Զուր ես թրպրտում բնիդ առջեւ. նըզովքը հօրիդդ է քեզ բաժին մնացել — հոգ չունե՛ս, հո՛ղ, ու ինքդ հոգ ու մոխի՛ր ու հողը քո գլխին...

Ու «Ղէղօն» նրան թւում էր իրանից դուրս մի էակ, մի անօրինակ, մի անճոռնի հրէշ, որ աշխարհի չարութիւնը կապել էր իր բաղդին, կապել էր իր ոտքին, դրել էր իր արդար ճամբին. ո՞ր կողմը դառնում էր այդ հրէշը իր առջեւն էր — իր քըշտուտութի՛ւնը...

Ու գգում էր, որ Ղէղօն անուն չի: Նա իր խեղճութեան, իր աղքատութեան ամենօրեայ երեսըտանքն է: Ղէղօն իր ծանր, թանձր կարկատած կօշիկներն են, որ անծայր, փոշոտ ճամբաներին կատղած չան պէս իր ոտներն են կրծոտում տարիներից ի վեր ու մինչեւ մահ պիտի կրծեն: Ղէղօն՝ իր տասն տեղից կարկատած, գզգզուած վերարկուն է, որ, ո՞վ գիտէ, ե՞րբ, ո՞ւր, ո՞ր սպանուած ձիուրի վրայից է հանել վաճառորդը: Ղէղօն իր այս ցածրիկ, մրոտ, ողորմելի խրճիթն է, ուր ձմրանը բոլոր ցուրտ հողմերն են խաղում, սառնամանիքներն են ճարճատում ու աչնան ու գարնան անձրեւներին առաստաղից սեւ կաթիլներն են ծորում սեւ հոգսերի պէս: Ղէղօն իր թչուառ, տանջուած իչուկն է, կողերը սղմած, պոչը ցցուած ահագին բեռի տակ,

կիսաքաղց ու տրտում կենդանին, որ գոռալն իսկ մոռացել է: Ղէղօն իր ամբողջ սեւ գոյութիւնն է, իր կեանքը, իր ընտանիքը:

Ծաւարն իջաւ, իջաւ արար-աշխարհ պատեց: Ուշացած յետին սայլերը բարիքով բարձած, ճռըն-չալով գիւղ հասան ու այս, այն դրան կանգնեցին:

— Ջո դրանը միայն էշն է կանգնում. Ղէղօ ես, ապա ի՛նչ,— նորից վշվշաց ծերունին:

Գիշերն առաջացաւ. աստղերը թարթում էին երկնքից: Ծերունին տակաւին իր տեղում էր, չիբուխը ձեռքից բաց էր թողել, գլուխը յետ ձգած պատին, քարացած՝ որպէս արձան, հայեացքը տա-րածութեան մէջ, նայում էր տիեզերքին, սփոփանք էր փնտռում, ամբողջ իր էարքաշ, անարգուած գո-յութեան մութ առեղծուածի լուծումը, պատասխա-նը:

Հեռու, փողոցի ծայրին մարդկային մի ստուեր երեւաց, որ մօտեցաւ ու անցնում էր Գէվօի առջե-ւից: Ծերունին ճանաչեց — Զալոնց Սաքօն էր, կամ Բեղլու Սաքօն, ինչպէս կոչում էին նրան գիւ-ղում իր թաւ ու խրոխտ բեխերի համար: Միջահա-սակ մարդ էր, գլխին թաշկինակ կապած, ոտքերը քչտած մինչեւ ծնկները ու բոբիկ եւ ուսին բահ: Ըստ երեւոյթին, ջուր անելուց էր գալիս: Գէվօին թուաց, թէ նա անցնում է չտեսնելու տալով իրեն, ուստի ինքը ձայն տուեց իր տեղից:

— Բարի իրիկուն, հարեւան Սաքո՛, Ասածու բարեւին ի՞նչ եղաւ, տնաշէն, որ անցնում ես քե-րանդ փակ, ինչպէս փոխինդ լցրած:

— Բարի իրիկուն, վա՛հ, դո՞ւ ես, Գէվօ ապէր,

չտեսայ. յոգնած եմ, ողջ օրը ջրի վրայ էի... Գի-տես էլի, հազար ցաւ ու դարդի տէր ենք... Մեր քեասիբութիւնը պիտի քաշենք:

Վերջին խօսքերը Սաքօի շրթունքին մի տեսակ նազանք էին,— նա ոչ միայն աղքատ չէր, այլ գիւղի հարուստ զօրքաններից մէկն էր: «Ասածու կրակի տէրն է»,— ասում էին նրա համար գիւղացիք:

— Ա՛րի, հարեւան Սաքօ, արի մի չիբուխ քա-շենք,— ասաց Գէվօն ընտանեբար եւ սկսեց չիբու-խը պատրաստել: Սաքօն մօտեցաւ նստեց, մինչդեռ կայծաքարը Գէվօի ձեռքում ցոլքեր էր արձակում՝ վայրկենական փայլով լուսաւորելով նրանց դէմքե-րը: Ջիբուխը վառուեց, Գէվօն երկու ուժեղ կում արեց, ապա հարեւանին պարզեց:

— Եկար էլի, լաւ, որ գոնէ մէկն եկաւ... ա-րար աշխարհ անապատ է,— խօսողը Գէվօն էր:

Սաքօն լսում էր զարմացած. կատակասէր ծե-րունուն նա երբեք այսպէս տեսած չէր: Գէվօն այս-օր տարօրինակ էր երեւում նրան:

— Հը՞, ի՞նչ կայ, քէֆդ խարաբ է երեւում,— ասաց Սաքօն ձեռքով ծերունու ուսին տալով. ո՞վ է իշիդ թօշ ասել:

Կատակը տեղին չէր: Գէվօն չեչտակի նայեց նրան, ու յանկարծ հարցրեց յուզմունքով.

— Իմ անունն ի՞նչ է, հարեւան Սաքօ:

— Վահ, էդ էլ խօ՞սք է... Գէվօ ապէր.

— Հա, Գէվօ ապէ՛ր, գեղի իշխան Սաքօ, ապա էս քամբախ գեղը տէր չունի՞... օրը ցերեկով չան լակոտները կայնեն երեսիս Ղէ-ղօ՛ պօռա՞ն... էլ

ոչ պատիւ ծերութեան, ո՛չ պատկառանք մազ ու մխրուքին:

— Վա՛հ քո տունը չինուի... Ես էլ ասեմ թէ ինչի՞ է քէֆդ խարաբ: Գէվօ ապէր, երեխաների ձեռքի՞ց ես տրտում...

— Երեխաները մեծերից են լսել... ախր հայ քրիստոնեան աւազանից է դուրս գալիս, մեռոնած ջրից, մի սուրբ անունով, ապա Ղէղօ էլ անուն լինի՞... Աստուած չի վերցնի ախըր... էս գեղը տէր չունի, էս գեղը հոգի չունի...

— Սիրտդ լէն պահիր, Գէվո՛ ապէր, մարդու պատիւը անունին չի կապուած:

— Անունը պատիւին է կապուած, Սաքո՛ ախպէր: Ախր Ղէ-ղօ եմ, քանի որ պատիւ չունիմ, քանի աղքատ եմ, դռների մշակ: Էս գեղը հոգի չունի, կռապաշտ է. թէ չէ որ հոգի ունենար, ես էլ մի կտոր հողի տէր կը լինէի. քեզ պէս խալխի մշակը չէի լինի... անհոգի է գեղը, ասում եմ, կռապաշտ:

Նրա ձայնը դողում էր յուզմունքից: Սաքօն նրա համար ողջ գիւղն էր, ողջ աշխարհը, եւ նա ցասումով թափում էր կրակէ խօսքերը:

Սաքօն փոշմանել էր այս ղրոյցի համար: Գէվօի խօսքերը ասես հէնց իրեն էին վերաբերում եւ ո՛չ գիւղին: Ահից էր փնտռում օձիքը թափ տալ, հեռանալ:

— Գէվո՛ ապէր, դէ դու իմաստուն մարդ ես... աշխարհ ես տեսած, չար ու բարի տեսած — դէ գիտես, որ աշխարհի կարգն է, ունեւոր էլ կը լինի, չունեւոր էլ... Բաղդի բան է. աշխարհը գիտես,

չարխի ֆալագ է, մի օր չարխը իմ կողմն է, մեւս օրը քո կողմը կը դառնայ...

— Չի՛ դառնայ, յանկարծ լսուեց մի ձայն հեռուից:

Երկասով էլ միաժամանակ ձայնի կողմը նայեցին: Մէկը գալիս էր մութ փողոցով օրօրուելով ու խօսում էր ինքն իրան.

— Չի՛ դառնայ ասում եմ...Հը՛, գէշն ու գառը ղրոյցի են նստած... աստուորի բանը էսպէս է, էսպէս էլ կ'երթայ... Ադամորդին էլած չէլած մէկ հաչիւ է... Մէկը գէշ է, մէկը գառ... մէկը մէկին պիտի ուտի՛... Թէ խելո՛ք ես, խարաբ տուր, թէ ո՞րը կ'ուտի, հէ, հէ, հէ:

Ու խօսողը նստած երկու գիւղացիների առջեւ կանգնած քրքջում էր:

Բնօն էր, գեղի պահապանը, որ խպատ հարբած՝ նոր էր դուրս եկել մխիթան Յակօի գինետունից:

— Հա, էն ի՞նչ ասացիր, չարունակեց Բնօն իր ահագին մահակին յենուած. «չարխը կը դառնա՞յ» ...Հէ, հէ, հէ... չի դառնայ չարխը... Հըլա որ ձեր թաղումն է դառնում... մինչեւ որ...մինչեւ որ Բեղլու Սաքօ, իչխան Սաքօ, չարխը քոնն է, քչի՛, քչի՛... Աստուորի բանն է, ադամորդին էլած չէլած...

— Բերնիդ ծակը կորցրել ես, զայրոյթով ընդհատեց Սաքօն ու ոտքի ելաւ, գեղի պահապանն ես ու հարբած. կեցիր էդուց քո հախիցը կը դամ: Նա՛ բահը առաւ ու հեռացաւ:

— Բարի գիշեր, Գէվօ ապէր,— լսուեց Սաքօի ձայնը խաւարի մէջից:

Բնօն երկար, երկար խնդաց յետեւից:

— Բնօն էլ էլած չէլած մէկ հաչիւ է, բանիդ կաց,— դուն էլ, ցնդա՛ծ հալիւոր, էլած չէլած մէկ հաչիւ ես: Աստուորի բանն է էսպէս... Գնա՛ քնիր... գնա՛ քնիր... ես գեղը կը պահեմ... էհ, պահեմ, չպահեմ, չեն ազատուի, աստուորի վերջը փուչ է. բոլորի ճամբան մէկ է...

Հարբեցողը քրքջալով առաջ անցաւ, հեռուից լսւում էր նրա մահակի ձայնը եւ անկապ բացականչութիւնները:

Գէվօն նորից մնաց մեն-մենակ իր թմբին, ինքն ու իր չիբուխը, որ հանգել էր վաղուց. ու մեղմիւ չչնչում էր.—

«Մէկն աստուորից դուրս, մէկը աստուորի տէրը. սրանց մէջ դու տեղ չունես, Ղէ-ղօ».

— Ալմաստ, այ Ալմաստ, քնա՞ծ ես,— կանչեց ծերունին

— Հրամմէ, Գէորգ ջան, քնած չեմ, լսուեց կնոջ ձայնը ներսից:

«Գէո՛րգ, Գէո՛րգ, խեղճ կին, դու մենակ ես ողջ գիւղի դէմ»,— մրմնջաց ծերունին.

— Զարդարը քնա՞ւ,— նորից հարցրեց Գէվօն:

— Չէ, նա էլ նստած է, կար է անում:

— Ներսը տօթ կը լինի, այ կնիկ, դուրսը գովացաւ:

Մենակութիւնը ճնշում էր ծերունուն: Մայր ու աղջիկ դուրս եկան, ծերունու երկու կողմում տեղ

բռնեցին եւ նրանց գլուխները կռացան ծերունու ուսերին:

— Հայրի՛կ ջան, հայրի՛կ,— չչնչում էր աղջիկը անհուն քնքշութեամբ հօր պարանոցին փարելով, մինչդեռ Ալմաստը լռելեայն սրբում էր արցունքները:

Մայր ու աղջիկ լսել էին Գէվօի զրոյցը Սաքօի հետ... Գիտէին նրա վիշտը:

Աստղերը թարթում էին վերից: Երկինքը յօրանջում էր անհունօրէն: Գիշերուայ հովը սլսլում, նրանք աւելի եւ աւելի սղմուում էին իրար եւ երեք քոյր հոգիներն ի մի էին ձուլուում չար աշխարհի դէմ: Հեռուն լսւում էր Բնօի ձայնը.

— Աստուորի վերջը փուչ է... աղամօրդին էլած չէլած մէկ հաչիւ է...

III

Ամբողջ այդ ամառն ու աշունը Գէվօն ապրում էր ներքին, ծածուկ խռովքի մէջ: Գիւղամիջի անցքը խորտակել էր նրան: «Ղէ-ղօ» գիշեր ցերեկ պրնգում էր ականջին, ու երբեք այդ աստիճան ուժգնօրէն չէր զգացել գիւղի բութ, անտարբեր ու խորը չարութիւնը եւ իր անհուն խեղճութիւնը:

Հողի վիշտն էր մաշում նրան, կրծում իր հոգին:

Հասաւ ձմեռը,— ձիւնը լաւ էր. դաշտերի միապաղաղ ճերմակ ամայութիւնը իր տակ թաղեց նաեւ Գէվօի վիշտը: Ցեղոյ գիւղը սաքուններն իջաւ. իսկ սաքուն ամէնքի համար էր.— Գէվօն էլ այնտեղ իր տեղն ունէր, մի փոքր վար միւսներից, բայց վեր-

ջապէս ծեր մարդ էր, մի անկիւն ունէր. խօսող, խնդացող, խորհող ամբոխի մէջ մի չունչ էլ նա էր: Վերեւում բուխարու կրակի մի կողմում բազմում էր Սարդարը, միւս կողմում **Բեղլու Սաքօն**, յետոյ Բօղիկենց Քեալաչը, նրա դէմ առ դէմ Դաղբաչոնց Թունին, ու այսպէս պատուով ու կարգով, մինչեւ Գէվօ ապէրը: Եւ իր այս խոնարհ տեղից երբեմն Գէվօն բարձրանում էր ամէնքից, ճնչում ամէնքին իր իմաստութեամբ: Ոչ ոք կարող էր նրա պէս պատմութիւններ անել սրամիտ ու հետաքրքիր, հինուց մնացած աւանդական զրոյցներ, հերոսական առասպելներ՝ մերթ յուզիչ, մերթ սարսռալի ու միշտ հրապուրիչ:

Ամբոխը գլուխը քաշ լսում էր լուռ:

Գէվօն հպարտ էր ու երջանիկ: Նա նայում էր չուրջը կարծես ասել կամենալով.

«Ղէ–ղօ հաա՛... ղէ ձայն տուէք էէ՞... կռապաչտներ»...

Ձմեռը լաւ էր:

Գարունը հասաւ: Մայր երկիրը վերստին իր բեղուն կուրծքը բացեց եւ բուրմունք արձակեց: Ստեղծագործող, վիթխարի տնքոց էր արեւի տակ: Գիւղը նորից եռաց ու դաշտ գնաց: Գէվօն անմահն էր. նա մերժուած խորթ զաւակն էր... Ու դաշտերից, արտերից, արօտներից հողի վիշտն էր բարձրանում մշուշի պէս ու նրա խղճուկ սրտի վրայ նստում:

Եւ այդ օրերին, երբ էշն առաջն արած ծերունի Գէվօն անցնում էր դաշտերով, երբեմն կանգ էր առնում, նայում գիւղացիների աշխատանքներին,

դութանի խորը ակօսներին, եղն ու դոմէչի ճկուղ ամոլներին, հոգին թունդ էր ելնում, չեղում էր ճամբան, մօտենում, բարեւ տալիս, քայլում էլ դութանաւորի յետեւից, ձայնակցում էր հօտաղների երգերին ու հրահանգ տալիս նրանց մաճկալի փոխարէն:

— Ա՛յ տղա, չէկը քշի, չէ՛կը, կարմրին զօր տուր, տօ՛օ,— կանչում էր Գէվօն, ասես դութանի տէրն ու ղեկավարը ինքը լինէր:

— Աստա՛, Գէվօ՛ ապէր, աստա՛, էս տղերքին չը–նորք սովորեցրու,—կոչում էր մաճկալը ժպտալով:

Ծերունին ոգեւորւում էր:

— Ա՛յ տղերք, հօրօվէլը գլեցէք, անասուններըը խաղ կը սիրեն.— կանչում էր նա, ու ինքն առաջինը սկսում հօրօվէլը.

— Մէկ մաճն ինձ տուր, ախպէր,— դառնում էր նա մաճկալին:

Եւ ծերունին՝ մաճը բռնած ուժեղ ձեռքերով՝ կանչն ու հրահանգները կրկնապատկում էր, թափ տալիս հօտաղներին, ամոլներին, ակօսը բացում հրճուանքով անձնատուր մի անուշ երազի, մի սիրուն պատրանքի:

Թողնում էր մաճը յաղթական ու քրտնաթոր, կռանում էր, մի բուռը խոնաւ հող վերցնում, հոտոտում, արեւին ցոյց տալիս:

— Ի՛նչ հող է, բրինձ, բրինձ... մարդ ուզում է ուտի:

Ու նորից էշն առաջն արած՝ անցնում էր դաշտերով, լիքը կրծքով չնչելով արտերի ու մարգերի բուրմունքը ու հարբածի պէս ինքն իրան խօսում.

— Վա՛խ Աստուած, վա՛խ, վա՛խ, մի կաթոր հող էլիր՛...

Ամառը երբ հասած արտերի ոսկէ ծովն էր ծփծփում ու հունձն էր սկսւում, ծերունի Գէվօի ծածուկ վիշտը դառնում էր անասելի տանջանք: Բնութեան ազատ պարգեւի այդ բաշխումի օրերին, պրկանքի դպացումը որպէս մի դաժան անիրաւութիւն մտրակում էր նրա հոգին: Երբ արար-աշխարհ լիանում է այդ ոսկու ծովից, ի՞նչպէս է, որ ինքը՝ ողջ կեանքը օտարի դռներից է չորթել իր հացը անարդական Ղէղօ-ն ճակատին, խորհում էր նա արտերի միջով անցնելիս իր թշուառ իշուկի յետեւից:

Ու հնձուորներին տեսնելիս՝ վերատին աշխատանքի համայքը քաշում էր նրան, հնձուած ցորենի բուրմունքն էր հոտոտում որսը վինտուող ծեր առիւծի պէս, պատրանքին փարում, ու ասես երազի մէջ, թողնում իր ճամբան ու էշը, մօտենում հնձուորներին:

— Բարի աջողում, մէջքերիդ զօրութիւն,— կոչում էր նա:

— Հաղար բարի, Գէվօ ապէր,— լինում էր պատասխանը:

— Հը՛, հունձը լաւ է, Աստծու աչքը վրան:

— Փառք Աստծոյ, լաւ է:

— Զարկէ՛ք, զարկէ՛ք տղե՛րք ջան,— կանչում էր Գէվօն, թեւերդ լէն բաց արա ա՛յ տղա, նշանածիդ ո՞նց պիտի գրկես:

Ընդհանուր քրքիջ:

— Սրա՛ն նայիր, սրան, տօ՛ տղայ,— դառնում էր նա մէւսին, մէջդ ինչ ես օրօրում: Քեզ աղջիկ տուողին ինչ ասեմ. մէկ մանգաղդ ինձ տուր:

Գէվօն առնում էր մանգաղը, շարքի առաջն ընկնում, մարգը ղէմ անում, հնձում թափով քանի մի խուրձ:

— Ա՛յ թէ ոնց կը հնձեն,— կոչում էր նա դադար տալով:

Հնձուորները ժպտում էին:

— Գէվօ ապէր, մէջդ պինդ է, դեռ զրինգ ես:

— Ձեր ջահիլութիւնն իմը սլսոի լինէր, որ տեսնէիք հունձը:

Ու նորից գաւազանը վերցնում, հեռանում էր ծերունին. բնութեան ծով բարիքի միջից անցնում էր սրտաբեկ ու անմասն իր իշուկի հետ, ու թւում էր, թէ արտ անդաստան, դաշտ ու քարեր, հօտաղ ու հնձուոր ողջ խօսքերը մէկ արած՝ իր յետեւից Ղէ-ղօ են կանչում:

Պատրանքը ցրւում էր ու անյոյս անճարութիւնը նորից խեղդում էր իր հոգին:

— Մարդ լինես հողածին ու մեռնես հողին կապօ՛տ — վախ Աստուած, մրմնջում էր նա:

— Հը՛, ի՞նչ կ'ասես հա՛յվան,— դառնում էր նա իշուկին,— դաշտերը տեսա՞ր, ինձ ու քեզ բան չի հասնի...

Եւ իշուկը, տրտում, փոքրիկ իշուկը քայլում էր տկտկալէն փոշիների միջից եւ իր խոշոր, մռայլ դէմքի ցնցումներով ասես համաձայնում էր տիրոջ հետ, որ իրենք բաժին չունեն այս անիրաւ աշխարհի առատ սեղանից:

Այդպէսի օրերը ծերունին տուն էր դառնում

էր նա մէւսին, մէջդ ինչ ես օրօրում: Քեզ աղջիկ տուողին ինչ ասեմ. մէկ մանգաղդ ինձ տուր:

Գէվօն առնում էր մանգաղը, շարքի առաջն ընկնում, մարգը ղէմ անում, հնձում թափով քանի մի խուրձ:

— Ա՛յ թէ ոնց կը հնձեն,— կոչում էր նա դադար տալով:

Հնձուորները ժպտում էին:

— Գէվօ ապէր, մէջդ պինդ է, դեռ զրինգ ես:

— Ձեր ջահիլութիւնն իմը սլսոի լինէր, որ տեսնէիք հունձը:

Ու նորից գաւազանը վերցնում, հեռանում էր ծերունին. բնութեան ծով բարիքի միջից անցնում էր սրտաբեկ ու անմասն իր իշուկի հետ, ու թւում էր, թէ արտ անդաստան, դաշտ ու քարեր, հօտաղ ու հնձուոր ողջ խօսքերը մէկ արած՝ իր յետեւից Ղէ-ղօ են կանչում:

Պատրանքը ցրւում էր ու անյոյս անճարութիւնը նորից խեղդում էր իր հոգին:

— Մարդ լինես հողածին ու մեռնես հողին կապօ՛տ — վախ Աստուած, մրմնջում էր նա:

— Հը՛, ի՞նչ կ'ասես հա՛յվան,— դառնում էր նա իշուկին,— դաշտերը տեսա՞ր, ինձ ու քեզ բան չի հասնի...

Եւ իշուկը, տրտում, փոքրիկ իշուկը քայլում էր տկտկալէն փոշիների միջից եւ իր խոշոր, մռայլ դէմքի ցնցումներով ասես համաձայնում էր տիրոջ հետ, որ իրենք բաժին չունեն այս անիրաւ աշխարհի առատ սեղանից:

Այդպէսի օրերը ծերունին տուն էր դառնում

սրտաբեկ ու գվախիկոր: Զիբուխը լցնում էր, վառում, ծխում էր, ծխում անընդհատ ու լուռ: Անպատասխան էր թողնում կնոջ ու աղջկայ հարցումները եւ, եթէ նստած էր ղրանը, դրսում անցորդներին խօսք չէր ուղղում ու բարևի էլ չէր սպասում:

Աչխարհից ծածուկ խորունկ վիշտ ունէր Գէվոն, հողի վիշտը: Անիրաւ գիւղը հասկանալ չէր ուզում այդ:

—Ի՞նչ արժէ մի կտոր հող տալ մի չունեւորի, —վշտանում էր նա, ու հոգին լի էր դառնութեամբ գիւղի դէմ:

Ու մխքը գործում էր թափով:

Դժուարին առեղծուած էր. լուծում պէտք էր:

Ո՞ւր ճարել մի կտոր հող, ի՞նչպէս ճարել,— մտմտում էր ծերունին.

Հո՛ղ, ա՛րտ, քանի ուժ կայ բազուկներում, քանի լոյս կայ աչքերում:

Անհնարին է այսպէս մեռնել, գերեզմանի վրայ ի՞նչ կը գրեն.—

«Անհող մեռե՞լ, Ղէ–ղո՞...»

Չէ, անկարելի է այսպէս մեռնել, ա՛րտ, ա՛րտ:

Իր վոլոր էութիւնն այժմ դառնում էր այդ մի հատիկ բառի չուրջը: Ու դաշտերը պրպտեց, անմշակ, լքուած տափերը դիտեց: Իր հոգին աղերսում էր երկրից մի անկիւն, ուր կարողանար իր ծեր ճակատի քրտինքը թափել:

Եւ մի օր գարնանը, հեռաւոր դաշտերում, քարքարոտ բլրների ստորոտներում, գիւղի երկու մեծ առուների միացման տեղում երեք հոգի երեւացին՝ ծերուկ Գէվոն, իր կինն ու աղջիկը. սըրտում իշուկն էլ մի կողմում արածելիս: Ամայի, եռանկիւնի մի տափ էր այն, ուր փուշ ու տատասկ էր բուսնում եւ վառելիքի ծառայող վայրի մացառներ միայն: Աղաչատ, անպէտք հող էր: Բայց հնար էր այդ հողը քաղցրացնել, եթէ երկու առուների եզրերը փակող բարձր թմբերի տիղմով բարեխառնուէր:

Դաժան, անյոյս աշխատանք, որ գիւղում ոչ ոք չէր յանձն առել, եւ տափը մնացել էր լքուած, անմշակ: Ահա այստեղ էր Գէվոն վճռել իր արտը ստեղծել: Մի ամբողջ տարի տեւեց այդ աշխատանքը: Գիւղացիք դիտում էին հեգնական կամ թերահաւատ ժպտով: Զար կատակների, ծաղրի նիւթ էր «Ղէ–ղօի արտը»: Ամէն մի գժուարին գործ այդ տարի կոչւում էր «Ղէ–ղօի արտ»: Ում սայլն էր կոտրւում, կամ կովը մոլորւում, ում կինն աղջիկ էր բերում, կամ արտը կարկուտը ծեծում, ասում էին՝ եղաւ «Ղէ–ղօի արտ»:

Ծերունին սակայն չյուսահատուեց: Իր կնոջ ու աղջկայ հետ ամայի, չոր տափի փուշ ու տատասկը քաղեց, քարերը հաւաքեց, մէջքով առուների եզրի տղմոտ հողը կրեց, փռեց տափի երեսը, դար ու թումբերը հարթեց, փոսերը լցրեց ու բացեց մի հարթ, եռանկիւնի հրապարակ, փորփրած, փխրուն հողով:

Ծերունու եւ իւրայինների ծնկները մաշուեցին, եղունգները փշուր փշուր եղան, մատները փչերը կրծոտեցին եւ կրունկները՝ տատասկները: Ու այդ դնով նա չորթեց բնութիւնից «իր արտը», ու կանգնեց գլխին, խորունկ չունչ առաւ:

Հրա՛չք էր...

Եւ այդ հրաչքն իսկ զինաթափ չարեց գիւղին: «Ղէ–ղօլ արտը» այնքան փոքր էր, այնպէս ծիծաղե–լի, հազիւ կէս օրավար. եւ յետո՞յ՝ ո՞վ գիտէ, բան կը բուսնի՞ այնտեղ: Փողոցներում, հրապարակնե–րում, դաշտերում վէճ ու գրոյցի նիւթ էր Ղէղօլ արտը — կը բուսնի՞, թէ չի բուսնի:

— Տակը աղի հող է,— ասում էին ոմանք — ո–չինչ չի բուսնի, աղը կը կտրի:

—Կը բուսնի, ինչպէս չէ՛,— ասում էին ու–րիշները հեգնօրէն,— ցորեն ցանի, տատասկ կը ստանայ, գարի ցանի՝ վուշ:

Ինդում ու հեգնանք այդ թշուառ արտի շուրջը:

Խուլ եղաւ Գէվօն, չլսեց չարախնդաց գուշա–կութիւնները, արտը ցանեց, իր սեփական արտը. առաջին անգամ իր կեանքում սերմ ձգեց:

— Այս մէկը երկնքի թռչուններին, Տէ՛ր:

Ու Գէվօն երկիւղածութեամբ առաջին բուռն ցորենը ցանեց երկնքի երեսին:

— Այս մէկն էլ չունեւորներին, մուրացիկնե–րին, կարիք–կուրթաթներին:

Ու Գէվօն ձգեց երկրորդ բուռը ոսկեգոյն հա–տիկների:

— Այս մէկն էլ... ինչ ասեմ, Տէր՛...դարձեալ ՔԵզ, ՔԵ՛զ, ՔԵ՛զ... ցաւից, չոռից ու մէկ էլ էն գուլումից — գուլումը կարկուտն էր, որի անունը խուսափում էր արտասանել — հա՛, էն գուլումից ազատ պահես:

Ու նա ձգեց երրորդ բուռը:

— Օրհնեա՛լ է Աստուած,— ասաց եւ չարժուն

սեւ ցեղի մէջ աչ ու ճախ չաղ տալով չէկ ցորենը առատ բուսներով:

Ցանեց ու գնաց:

Սպասումի օրեր էին — դժնդակ սպասումի:

— Կը բուսնի՞, թէ՞ չի բուսնի...

Գիւղը եռում էր, բոլոր կտուրների տակ փըս–փսուկ՝

«Կը բուսնի՞, թէ՞ չի բուսնի...»

Եւ որքան շատ էին նրանք, որոնք կը սպուրէ–լին, եթէ բուսնէր, եթէ «Ղէ–ղօլ արտը» կանաչէր:

Ամբոխները չեն սիրում, որ փոչինների մէջ սո–ղացողը ոտքի ելնի, բարձրանայ:

Զարութիւնն ու չհամութիւնը եռացող կաթսա–յի պէս ֆչֆչում էր չորս կողմում հոգիների մէջ: Գէվօն աղօթում էր ու սպասում հսկումի օրերով ու գիշերներով:

Եւ «Ղէ–ղօլ արտը», հեռու դաշտերում, աչ–նան անուշ արեւի տակ, իր գաղջ ծոցում գուրգու–րում էր հատիկները ու ժպտում արեւին ու երկն–քին:

IV

Տասն օր համբերեց ծերունի Գէվօն, որ արտը բուսնի:

Տասն առաւօտ, առանց գիտակցելու մի մութ ուժից մղուած, քայլերն ուղղեց դէպի դաշտ, իր արտի ճամբան բռնեց եւ ամէն անգամ կէս ճամբին յետ դարձաւ:

— Թո՛ղ բուանի, թող բուանի,— մրմնջում էին չրթունքները:

Եւ տասն օրն անցաւ:

Ուշ աշնան մի լուսաշող, պայծառ օր Գէվլօն դաշտ դուրս եկաւ, դէպ իր արտը գնաց: Երկինքը ջինջ էր ու արեւի ճառագայթները խոնջանքի նշանքով լեցուն. մթնոլորտը համակ փաղաքշանք էր. ուշացած ծաղիկների պէս արեւի ամէն մի ցոլքը մելամաղձոտ դուրդուրանք էր այն օրը:

Ջուղ կռունկների մի մեծ երամ՝ ետանկիւնի կազմած՝ անցնում էր շատ բարձրից. նրանց անուշ կղղոցը հանգստաւէտ մի բարութիւն ունէր, որ հանդարտ ծաւալւում էր թեթեւ մշուշի մէջ հեւացող դաշտերի վրայ:

Գէվլօն գիւղից դուրս եկաւ հոգին կասկածով լի, ալեկոծ ու խռովքոտ, եւ այժմ դաշտերի այս մեղմանուշ անդորրութիւնը, որպէս անձայն օրօր, նրա էութիւնն էր գգւում:

Բնութեան ստեղծագործող երգն էր զրնգում իր հոգում. «Աստուած կա՞յ, չէ՛, ինչպէս չբուսնի... ապա իմ արուն քրտինքը, աչքիս լո՞յսը: Աստուած կայ ախր, ինչպէս չբուսնի, ինչպէս չը բուսնի, երբ ամէնքի արտը բուսած է»:

Վերջին խօսքերը նա բարձրաձայն ճչաց:

— Վա՛հ, վա՛հ, էս ի՞նչ է հալիւռը, բանդ խաբաթ է:

Գէվլօն նայեց. եկողը Բնօն էր.

— Բարի աչողում, Գէ՛վլօ ապէր, հը՞, հարդ լաւ չի երեւում, ի՞նչ ես քեզ քեզ խօսում...

— Բարով էկար, Բնօ, էնպէս խօսում եմ էլի, գնամ մէկ արտը տեսնեմ:

— Ա՞րտը...

— Հա, արտը, իմ արտը, ի՞նչ կայ որ,— ասաց Գէվլօն մի առանձին հաճոյքով՝ շեշտելով «իմ արտը»:

— Ֆո՞ արտը:

— Հա, էլի, իմ արտը ասացի, տասն օր առաջ ցանեցի, գնամ տեսնեմ:

— Հա, գնաս, տեսնես, բուսա՞ւ...

— Հա, գնամ, տեսնեմ, բուսա՞ւ...

— Էհ՛, որ բուսաւ, դրանից ի՞նչ, Գէ՛վլօ ապէր.

— Ի՞նչպէս թէ ի՞նչ... մենք էլ մարդ ենք, ընչաստէր ենք, վարիախ ունի՞նք գլխներիս, թէ ոչ:

— Փարիա՞խ...

— Հա՛, փարիախ:

— Է, առանց արտի փարիախ չկա՞ր գլխիդ.

— Չէ:

— Վա՛յ քո խելքին, հա՛լիւռը... մէկ ոտքը գերեզման, մէկը ժամի ղրան ու արտ է ցանում... տօ, Ղէղօ մնա՛, Ղէ-ղօ՛... Տես, ես Բնօ եմ... Ղէղօ, Բնօ, թէ Սաքօ թէ Թադաւոր՝ մէկ դռնով պիտի անցնեն:

— Էլի քցել ես:

— Վալլա՛հ չեմ խմած, նոր եմ գնում, ա՛յ էն տեղ ժամու հաց կայ, քելեխ,— նա ցոյց տուեց հարեւան դիւղը — էնտեղ եմ գնում: Իմ արտն էլ էնտեղ է, դինին չատ կը լինի... Հա՛լիւռը, աչխարհն ինչպէս բռնես՝ էնպէս կ'երթայ, հաւատա՛ ինձ, թէ դողնաս՝ դողնալով, թէ թալնես՝ թալնելով, թէ

խաբես՝ խաբելով, թէ խմես՝ խմելով: Մարդ կայ կը ղողնայ, մարդ կայ կը թալնի, մարդ կայ՝ կը խաբի, Բնօն էլ կը խմի... Ամիր, Գէ՛վօ ապէր, խմիր ու Ղէ–ղօ մնա՛... Ամիր՝ աստուրի տէրը կը լինես:

— Է՛, դու, որ խմում ես, աստուրի տէ՞րն ես:

— Հա՛, Գէվօ ապէր, քանի չեմ խմած, քեզ պէս տլուզ եմ, ջէբս դատարկ, ձեռքս դատարկ, փորս դատարկ: Հէնց որ խմեմ եւ կարմիր ձին հեծնեմ, աստուրի տէրն եմ՝ էս դաշտերը իմը, էս արտերն իմը, էն գեղը իմը, էս գուլում Մասիս սարն էլ իմը: Իպէս է, հալիւոր. աշխարհն ի՞նչպէս բռնես, էնպէս կ՝երթայ...

— Գինու աստուրը քե՛զ, իմ արտն ինձ, Բնօ. դու քո ճամբէն գնա՛, ես ի՛մը:

Նրանց ճամբաները բաժանուեցին:

—Գնա՛, Գէվօ ապէր, գնա, վալլահ քո արտն էլ էլած չէլած մէկ հաչիւ է,— կանչում էր Բնօն հեռուից:

Գէվօն կանգնած նայում էր նրա յետեւից: Հարբեցողը սուլում էր ու գնում դաշտերով դէպի հարեւան գիւղը, որ ծխում էր քիչ հեռու...

Մինչ այդ Գէվօն հասաւ ու իր արտի մարգին կանգնեց ... Տեսարանը զերազանցում էր իր բոլոր երազները. արտը ծլել էր ու կանաչ ծածկոցով պատել հարթութիւնը:

Ծերունին նայում էր համայուած՝ երջանկութեան յորդումից. կուրծքը վեր ու վար էր անում պայթելու չափ. արտից բարձրացող գաղջ բուրաւէտ օդն էր շնչում եւ խոնաւ բուրմունքից հարբած

պէս էր. ու հոգին բարի էր արտի, հողի բարութեամբ լեցուն: Կ՝ուզէր մի բան ասել, մի շատ լաւ բան աշխարհին, արեւին, թռչուններին, լեռներին, առջեւը ցցուած վիթխարի Մասիսին, մի շատ վսեմ բան, որ ժայռերն իսկ ժպտան այս հալիւոր հսկայի հետ:

Ու բարձրացաւ, կանգնեց մի քարի վրայ, ինքն էլ չիմանալով ինչո՞ւ, քանի ոյժ կար կրծքում բարձր կանչեց՝

«Ղէ–ղո՛, Ղէ–ղո՛, Ղէ–ղո՛...»

Արձագանգը կրկնեց՝ «Ղո՛, ղո՛, ղո՛...» ու մեռաւ ձորերում:

Ու թուաց ծերունուն, թէ իրօք «Ղէ–ղօ»ն մեռաւ, անդարձ մեռաւ:

— Աստուած հոգին լուսաւորի,— ասաց ծերունին բարձրաձայն ու յանկարծ սկսեց քահ, քահ, ծիծաղել,— ապա մէկէն ծիծաղը լացի ու հեծկլտանքի փոխուեց:

Վար իջաւ քարից:

— Գժուեցի՞ր, հալիւոր, հաւաքի՛ր քեզ, արտդ կայ ախր, հրաչքը, դաւակիդ արտը, Զարդարիդ արտը,— խօսում էր նա ինքն իրան:

Կանգնած նայում էր արտին, ինչպէս սիրահարը իր բուռն զգացմունքի յախուռն պոռթկումի ժամին կը նայէր իր սիրած էակին: Ու կ՝ուզէր դուրդուրել, գրկել, համբուրել այս կանաչաւէտ հողը ու լուծուել նրա հետ: Արտի անհուն պեղումից նա ծունկի եկաւ, գլխարկը հանեց, կողքը դրեց, երեսն ու միրուքը քսեց սառը կանաչներին, հոտոտում էր ու համբուրում,— անյագօրէն բառեր էր

ասում, որ ո՛չ աղօթք էին, ո՛չ օրհնութիւն, այլ ինչ որ տենդոտ, սիրազեղ զառանցանք, որ գնալով, գնալով փոխուեց հեկեկոցի: Նա նորից լացեց: Տարիներից ի վեր կուտակուած ցաւի, վիրաւորանքի, խեղճութեան արցունքն էր, որ հեղեղի պէս քանդում էր իր պատուարները ու դուրս թափւում՝ սրբելով հին անարգանքը:

Ու լաւ էին, լաւ էին այդ արցունքները:

Գէվօն վերկացաւ, աչքերը սրբեց, դէմքարկը ծածկեց ու հանդարտ ու երջանիկ, քայլերն ուղղեց դէպի գիւղ:

Եւ գնում էր, որպէս գիւղի տէրը, հպարտ ու ինքնիշխան:

— Թաղե՛մ քո հարբեցող գլուխը,— ասաց նա, —աստուորի տէ՞րն է...

Ծօսքը ինօին էր ուղղուած:

Քայլում էր ու ոտքերը թեթեւ էին, չարժումները առոյգ. երիտասարդական մի նոր աւիւն էր խաղում երակներում. ասելու, խօսելու, խնդալու մի անհուն տենչ բռնել էր նրա համակ էութիւնը:

Հասաւ գիւղ: Ու առաջին անգամ իր կեանքում փոխանակ ուղղակի տուն գնալու ներս մտաւ գիւղամիջում տնկուած Կոլոտ Ցակօի գինետունը:

— Բարի աջողում, Ցա՛կօ ախպէր,— կանչեց նա սրտալի:

Տկճորի վրայ նստած կոլոտ, հաստլիկ, կարմրերիկ մարդուկը չարժուեց, լիքը այտերը կծկուեցին վայն ժպիտի համար:

— Հայ դու հազար բարի, Գէվօ ապէր, ո՞ր խաչից ես, ո՞ր քամին քշեց քեզ մեր կողմերը:

— Սուրբ Ցակորի քամին, Ցակօ ախպէր, սուրբ Ցակորի քամին... Արտս կանաչել է... մէկ ջահիլութեանը, մէկ ահելութեանը,— կոչեց Ծերունին ու ձեռքի տակ ընկած առաջին դաւաթը մղեց դէպի կոլոտ Ցակոն:

— Լից էս անտէրը, լիքը լից,— ասաց:

Գաւաթը լցուեց թունդ օղիով. Գէվօն ձեռք առաւ ու մի թափով խմեց. դէմքը ծամածռեց անտուոր մարդու պէս, յօնքերը կիտեց, թեւով չրթունքները սրբեց ու դատարկ գաւաթը սեղանին զարկեց:

— Հը, անտէր մնաս. քո յօրինողին... Լի՛ց, մէկ էլ լի՛ց: Թոբայ եմ արել անտէրը, ամա լի՛ց:

Գաւաթը նորից լցուեց ու վերստին դատարկուեց: Ծերունու գլուխը տաքացաւ,— աչքերը կարմրեցին ու վառուեցին բուռն կրակով:

— Դէհ, գրի՛ր, չան տղայ Ցակօ, գրի՛ր էն քո անտէր դաւթարի մէջ, գրիր... մինչեւ... հա՛, մինչեւ Ղէ-ղօլ արտը հասնի: Ղէղո՞... չա՛ն տղա, էլի՞ Ղէղօ... Ձէ, չէ Ղէղօն մեռա՛ւ, մեռա՛ւ... հի, հի, հի... էս նրա հոդու համար եմ խմում: Լի՛ց, լի՛ց, էս անտէրը...

Ծերունին նորէն դէմ արեց գաւաթը. գաւաթը նորից լցուեց:

—Հա՛, սուրբ Ցակորը գիտե՞ս...

Կոլոտ Ցակոն պատասխանի փոխարէն լայնաբերան ժպտաց:

— Ի՞նչ ես մոութդ ծռմռում, հա՛յվան, սուրբ Ցակորը չգիտե՞ս...

— Գիտեմ, ապա, գիտեմ, Գէվօ ապէր, մեր

Մասխի սուրբ Ցակոբը,— խօսեց այս անգամ Կոլոտ Ցակոն մի չտ ժպտալով:

— Հա՛, Մասխի սուրբ Ցակոբը, լաւ ասիր, խաչը վկայ, լաւ ասիր, արի՛ մի պաչեմ քեզ:

Ու Ծերունին իր երկայն, չոր բազուկների մէջ առաւ գինեվաճառ մարդուկին:

— Հա՛, սուրբ Ցակոբը երազիս եկաւ ու ասաց. «Փորիր, Գէվօ, փո՛րիր էս տեղը, իմ դործը էյաղողուեց, քոնը կը յաջողուի»... Ու փորեցի. պէ, յաջողուեց... Խմե՛նք Ցակո, խմե՛նք իմ արտի կենացը, իմ Զարդարի արտի կենացը:

Ցակոն մի բաժակ ձեռք առաւ:

— Շնորհաւոր լինի արտդ, Գէվօ ապէր, մէկին հարիւր, մէկին հազար տայ:

— Բերան չէ, հօ, տաճար է, տաճար, կոչեց Գէվօն:

Բաժակները զարկուեցին, ու դատարկուեցին:

— Հա՛, սուրբ Ցակոբի բանը չէլաւ, իմն էլաւ: Գիտե՛ս էլի, խեղճ հալիւորը ուզում էր բարձրանալ Մասխի գլխին՝ Նոյի տապանը տեսնել... Հա՛, ցերեկը բարձրանում էր, գիշերը քնում ու առաւօտը նորից սարի տակն էր. հրեշտակը ցած էր բերում առաջուայ տեղը,— դէ՛ էս անիրաւ սարի գլուխը աղամօրդու ոտք չպիտի կպչի... Աստծուց հրաման չկայ... Ու էսպէս հալիւորի բանը գլուխ չէկաւ, իմ բանը գլուխ էկաւ, հի, հի, հի, հի...

Ներս մտաւ գինեվաճառը գղիր Հայրօն, իր փոքրիկ լծի միրուքը ցցած, մորթէ ահագին վիսխոը մինչեւ աչքերը քաշած ու մահակը ձեռքին:

— Վահ, Գէվօ ապէր... դո՞ւ էստեղ,— բացականչեց նա:

— Սուրբ Ցակոբի նաղլն էի անում, Հա՛յրօ: Լէց, Ցակո, լէց Հայրօի թասը. խմե՛նք սուրբ Ցակոբի կենացը: Հայրօ, երազիս եկաւ սուրբը... արտս բուսաւ...

Հայրօն հասկացաւ. լուռ խմեց իր դաւաթը կասկածելի ժպտով ծերունուն նայելով:

— Քանի՞ օրավար է արտդ, Գէվօ՛ ապէր,— ասաց նա:

Հարցը չար էր: Նա լաւ գիտէր, որ Գէվօի արտը հազիւ կէս օրավար է: Հարուածն այնքան զգալի էր, որ հակառակ իր հարբած վիճակին, ծերունին ցնցուեց ու ծառացաւ:

— Գղիր Հայրօ,— ճչաց նա,— արտս սրտիս չափ մեծ է, իսկ սիրտս... հա, սիրտս հարիւր օրավար է, հարիւր օրավա՛ր...

Երեկոյ էր արդէն, երբ Կոլոտ Ցակոն իր դաւթարում նշանակում էր Գէվօի խմածն ու չխմածը, իսկ ծերունին՝ օրօրուելով փողոցներում՝ տուն էր գնում: Անցորդները կանգնում, զարմանքով նայում էին Գէվօին. մինչեւ այդ նրան ոչ ոք հարբած չէր տեսել:

Գէվօն գնում էր ու ինքն իրան խօսում.

— Սուրբ Ցակոբին ուխտ արեցի... Ղէզօն մե՛ռաւ... Հոգու համար խմեցինք... Աստուած հոգին լուսաւորի, հի, հի, հի... Սիրտս հարիւր օրավար է... գղիր Հա՛յրօ...

— Վահ, վահ, էս ինչ չուտ... ես քեզ չհասայ, դու ինձ հասար, հալիւոր... հի, հի, հի...

Բնօն էր. քելեխ ուտելուց էր գալիս՝ հարբած ու ձեռքին պինդ սղմած մի կաւէ աման գինով լի:

— Ֆո հալին վայել ճամբան գտար, Գէվո ապէր... Համի՛ր, համի՛ր... կորեկի արտը ինչքան բարձր լինի, չի կարող լորին ծածկել բազէի աչքից: ...Համիր, համիր... Գայլի ու գառան հէքիաթը ո՛չ սկիզբ ունի, ոչ վերջ: Համիր, համիր... մի՛շտ համիր. գայլ ու գառ, լոր ու բազէ, էլած չէլած մէկ հաչիւ է... ցորեն չը լինի՝ կորեկ կը լինի, կորեկ չլինի՝ քար կրծիր ու համիր...

Գէվօն կանգնած նախ նայում էր անտարբեր, ապա կամաց կամաց, ասես լմբռնելով Բնօի խօսքերի բուն իմաստը, կաս-կարմիր կտրեց ու բարձրաձայն ճչաց.

— Ցիմա՛ր, անասուն... ապա ա՛րտս, ապա փափա՞խը տղամարդի...

— Ֆո արտը, հի, հի, հի, քանի՞ օրավար է...

Դարձեալ այս չար հարցը, որ նշտրակի պէս ծերունիի սիրտն էր մխում... Ու նա ճչաց ցասումով:

— Սրտի՛ս չափ, սրտի՛ս չափ, հայվան...

Եւ ասես մտրակի հարուածից զգաստացած, ծերունին թողեց Բնօին ու երերուն քայլուածքով տուն գնաց: Դրան առջեւ տրամադրութիւնը նորից բարձրացաւ:

— Զարդար Ջան,—կանչեց նա ուրախաձայն,—լէ լէ ասա, քո արտի լէ լէ...

Եւ առանց սպասելու աղջկայ պատասխանին, ինքն սկսեց ծեր խռպոտ ձայնով մրմռալ քթի տակ. «Լէ լէ, Ջան լէ լէ, Ջան լէ լէ...»

Ալմաստը յուզմունքից խնդաց ու լացեց միաժամանակ:

V

Դարձեալ ամառ էր, Արարատեան դաշտի կախարդիչ ամառը, երբ արեւի բարկ շողերը վերից եւ սեւ, քեղուն հողը վարից ոսկի են ժայթքում, դաշտերն ասես լողում են ոսկու մէջ եւ մթնոլորտը ոսկու շողերով է ծփծփում:

Արարատեան դաշտի ոսկէ ամա՛ռը... Ու կրակ է այդ ամառը, մի վիթխարի բոցավառ հնոց, որի մէջ աշխատանքը տնքում է ու ժպտում, եռում է ու հեւում արեւի բոցերը խմելով:

Դարձեալ հունձ էր, Արարատեան աշխարհի հրա՛շք հունձը...

Երկնքից արեւի ցոլքերի հետ կրակ էր մաղւում. ու քրտնաթոր հնձուորները՝ երակների մէջ կրակ, ճակատները հողագոյն, չարան չարան շարժում էին մանգաղները:

Տա՛ք էր, տա՛ք...

Հնձուորների առաւօտուն սկսած երգերը ճաշին մօտ մեռնում էին կամ դառնում թաւ տնքոց: Երգը մնում էր ճպուռներին ու ծղրիդներին, որոնց չոր, անճար ճռռոցը մանգաղին սպասող հասած արտերի աղերսն էր ասես:

Եւ հարիւրաւոր մանգաղներ զրնգում էին չէկ արտերի ոսկէ ծովի մէջ: Հնձուորների ոտքերի տակից թանձրամարմին, մոխրագոյն լորերը վախլուկ, ծանր փոռոցով խոզաններից խուճապով ու սուլոցով թռչում անցում են դէպի կանաչաւուն առւոյտներն ու բանջարանոցները: Որանները փըրւում են խոզանների մէջ, դէպերը բարձրանում: Արդէն առաջին սայլերը՝ ցորենով բարձած՝ անցան

դաշտերի փոչոտ ճամբաներով: Լծուած գոմչուկները վինչացնում են չոդի ձեռքից: Կալերում կենդանութիւն է սկսւում, եւ հնձած ցորենի բուրմունքը բռնում է դաշտ, կալ ու բնակութիւն:

Գէվօի առաջին հունձն էր այն տարին:

Առաւօտեան նա շատ վաղ զարթնեց: Յուզուած էր, երկիւղած ու հանդիսաւոր տրամադրութեան մէջ:

Իշուկը առաջ արած՝ ամբողջ ընտանիքը վաղ առաւօտից չտապեց դէպի արտը:

Եւ Գէվօի փոքրիկ արտը շատ հեռուից երեւում էր դաշտերում, որպէս սիրուն ծաղկանոց: Արտի կեդրոնը բռնում էր ցորենը. չորս կողմից՝ մարգերում բարձրանում էր լայնատերեւ, հաստացօղուն, կապտաւուն ձիթաբոյսը. մէջ ընդ մէջ նոյնքան բարձր ու նազելի արեւածաղիկը, որ ամրան սկզբից իր կոլոը, չիկահեր գլուխը դարձնում էր արեւին, ժպտում նրա ոսկի ցոլքերին մինչեւ մայրամուտ, ու գիշերները դողդողում հովերի առաջ, ապասելով նոր արեւածագին: Քանի մի հոտաւէտ կանեփներ ու եգիպտացորեն փարում էին արեւածաղիկների հետ, ու այս կանաչ ու ծաղկուն շղթան եզերում էր փոքրիկ արտը:

Արտի կողքին փոքրիկ քօլիկն էր բարձրանում, երեք ցածրիկ պատերով ու առջեւը բաց, վրան ճիւղերով ու խոտերով ծածկուած, որ հաճելի ստուեր էր անում: Քօլիկի կողքին արդէն բարձրացել էին երկու մատաղ ուռիներ, որոնք օրօրում էին իրենց լալկան ճիւղերը. ու նրանց տակ էր հաւուզը, այն

փոքրիկ փոսը, ուր ջուրը լցւում էր, սառում ու զուլալւում խմելու համար:

Արտի կեդրոնում մարդակերպ խրտուիլակն էր ցցուած, որ օրն ի բուն թեւերն էր օրօրում հովերի առաջ ու թռչուններին հալածում:

Գէվօն, իր կինն ու աղջիկը դարնան սկզբից մինչեւ հունձը ամենօրեայ անդադրում, դաժան աշխատանքով էին ստեղծել այս սիրուն արտը, որ ահա ծալսում էր մանգաղին:

Եւ այն տարին Գէվօն արտից դուրս այլ վաստակ չունէր: Փոքրիկ ընտանիքը հասաւ արտին: Արեւը նոր էր բարձրանում:

Գէվօն մանգաղը ուսից ցած բերեց, «Օրհնեա՛լ է Աստուած» կանչեց ու հունձն սկսեց:

Գէվօն հնձում էր, աղջիկը հաւաքում, իսկ կինը խուրձերը կապում: Հնձեց մինչեւ կէսօր, հնձեց ե՛ւ կէսօրից յետոյ, ու արեւը հազիւ թեքուել սկսեց, երբ հունձը վերջացաւ:

Այնպէս փո՛քր էր այն արտը...

Եւ երեքով միասին, երեք անգամ ուչի ուչով համարեցին խուրձերը,— ուղիղ քառասուն երկու խուրձ...

Գէվօն յիշեց գղիր Հայրօի ու Բնօի չար հարցը.

— Քանի՞ օրավար է:

Ճիշեց եւ չտապեց մոքից վանել այդ անհաճոյ յուշը:

— Փոքր է, այո, բայց իմ ցանքն է, իմ հունձը,— մտմտում էր նա:

Կալն սկսուեց: Գէվօն ցորենի խուրձերը փռեց, հէշան արեց, կոմը կապեց իշուկի յետեւից,—

Զարդարը վրան կանգնեց ճիպոտը ձեռքին: Եւ ամբողջ երկու չաբաթ բոլոր միւս կալուորներից աւելի աղմկողն ու իրարանցում ձգողը Գէվօն էր իր փոքրիկ կալով, իր փոքրիկ հէչանով, իր մի հատիկ կամով: Ու մնացած կալուորների դուարճութեան ու կատակների նիւթ էր Գէվօի կալը:

Վերջապէս, ցորենը կալսուեց, թեղ դարձաւ, չատ փոքրիկ թեղ: Հովը փչեց. Գէվօն յարդը քամուն տուեց, ու ցորենի սիրուն չեղջը բարձրացաւ կալի մէջ:

Գիւղատիրոջ մարդն եկաւ պարկն ուսին ու տասանորդն ուղեց:

— Արդար է,— ասաց Գէվօն, ցորենը չափելով ու նրա պարկը լցնելով:

Շեղջը զգալապէս նուազեց:

Երեցփոխն եկաւ ժամի բաժինը տարաւ: Ապա ջրաժանն ու գղիրը եկան, յետոյ դաշտերի պահապանը եւ իւրաքանչիւրն իր բաժինը տարաւ ցորենի չեղջից:

— Արդար է,— նորից կրկնեց Գէվօն:

Բայց այս անգամ ցորենի փոքրիկ չեղջն այնպէս նուազեց, որ կինը անհագստութիւնը ծածկել չկարողացաւ:

— Տակը բան չմնաց, ա՛յ մարդ,— վշտացաւ Ամմասը:

— Աստուած ողորմած է, ա՛յ կնիկ. անդ ու անդաստանի, կալ ու կուտի տէր ենք, ժամ ու ժամհար, ջրաժան ու պահապան իրենց փայ ու բաժինը որ չունենան, բերքը հալալ չի լինի...

Ասաց այս բոլորը Գէվօն կնկան սփոփելու համար եւ նորից միտքն ընկաւ Հայրօի, Բնօի չար հարցը.

— Քանի՞ օրավար է արտդ...

— Կնիկ, մարդու սիրտը պէտք է լէն լինի,— աւելացրեց Գէվօն, բայց իրօք մտովի նա պատասխանում էր իր միտքը ծուատող այն չար հարցին:

Նորից յարդարեց ցորենի չեղջը, պատրաստուում էր իր պարկերն ածել, երբ յայտնուեց քահանան:

— Բարի ողջոյն, Գէվօ, օրհնեա՛լ լինի նոր անդաստանդ: Օրհնելու եմ եկած առաջին բերքը:

— Օրհնի, ապա, հա՛յր Ղան, օրհնի՛, աջիդ մեռնիմ:

Քահանան օրհնեց, եւ տիրացուն քահանայի բաժինը պարկի մէջ լցրեց, ու հեռացաւ:

Գէվօն այժմ կանգնած էր կալի մէջտեղը: առջեւը՝ հազիւ մի պարկ ցորեն ողջ ձմրան համար...

Վրայ հասաւ Կոլոտ Ցակոն, գիւնետան տէրը, կոլոր, ժպտուն ու վերջին պարկն էլ նա կիսեց:

Եւ այն գիշեր Ամմաստը չատ վշտացաւ:

— Դառն դատինք, դատարկ նստանք:

— Սիրտդ լէ՛ն պահիր, ա՛յ կնիկ, Աստուած ողորմած է... Արտը կայ, եկող տարի բերքն աւելի առատ կը լինի... Չէ՞ արտի տէր ենք... Անհոգ մեռել չենք լինի...

Կալ ու կուտը վերջացաւ:

Դարձեալ աշուն էր. դարձեալ չուող կռունկները մելամաղձիկ կռռում էին երկնքում: Դաշտերը մերկացել էին. Գէվօի տափը ցանուած չէր: Սերմա-

ցու չէր մնացել: Մարդակերպ խրտուիլակը չարունակում էր ցուրտ հովերի առաջ թափահարել իր թեւերը, թռչուններ քշել, երբ ոչ արտ կար, ոչ թռչուն:

Գիւղի փողոցներում գլիր Հայրօն, միրուքը ցից, փափախը մինչեւ ականջները քաշած՝ ու մահակը գետին զարկելով աչնան հարկն էր կանչում: Արտի տէր էր Գէվօն, ու գիւղի կօտ ու բէգեաոը, հարկն ու թովլին մէջքին էր եկել:

Աչնան հարկը ... ո՞րտեղից:

Դաշտում մոռացուած խրտուիլակն էր հովերի առաջ յուսահատօրէն օրօրւում. տանը ունեցած չունեցածը ողորմելի իշուին էր:

Գլիր Հայրօն եկաւ, գնաց, Գէվօին գիւղամէջ տարան: Ինքը ծանր, նախատական խօսքեր ասաց, սպառնաց, թէ իշուկը աճուրդի կը հանի, եթէ չուտով տէրութեան հարկը չվճարի:

— Կրակ էլաւ էս արտը մեր ջանին,— վշվշում էր կինը:

—Կնկայ մազն է երկար, խելքը կարճ կը լինի, —պատասխանում էր Գէվօն կնոջ բոլոր տրտունջներին:

Գլիր Հայրօն նորից գնաց, եկաւ. ի վերջոյ Գէվօի իշուկը քաշեցին գիւղամէջ:

Կինն ու աղջիկը ողբ ու կոծ արին. իշուկի յետեւից դուրս եկան, քայլեցի դէպի գիւղամէջ: Գէվօն սատեց, յետ դարձրեց, ու ինքը մենակ գնաց ամբոխի առաջ ցցուեց:

Պետական հարկը վճարելու համար իշուկը պիտի ծախուէր աճուրդով, իր տրտում, իր խղճուկ

էշը: Կենդանին կանգնած էր աւելի տրտում, քան երբեք, ականջները աւելի կարճ, դունչը քաշ՝ մինչեւ գետին. կանգնած էր ու լուռ, ասես խոկում էր իր բաղդի վրայ: Գէվօն ցցուած էր նրա կողքին, հայեացքը դէպի հեռու, դէպի դաշտ, դէմքը դունատ: Միրուքի ցնցումներից երեւում էր, թէ ինչպէս դողդողում է վարի ծնօտը: Խօսք ունէր ասելու, ու չրթունքներից դուրս չէր գալիս:

— Ա՛խ խալխ... ախր...

— Ի՞նչ ախր,—ընդհատեց ռեսը խստութեամբ, — տէրութեան հարկը՝ Աստուած վար գայ երկնից՝ ջնջել չի կարող: Թէ վճարել անկարող ես, արտից ձեռք քաշիր. ով որ մշակի էն կտոր հողը, հարկը նա կը տայ: Թէ չէ՝ ուզում ես արտդ պահել, թո՛ղ էս անասունը ծախուի, պատիւդ ազատուի: Կամ էշը, կամ արտը, դու գիտես,— վերջացրեց իր խօսքը ռէսը սպառնական չեչտով:

Լռութիւն տիրեց:

Գէվօի միրուքն աւելի ուժեղօրէն դողդողաց— ու նա չրթունքներն իրար էր սղմում չճչալու համար:

«Կամ էշը, կամ արտը», սարսափելի բառերը զրնգում էին ականջներում, ու ապա փոխուում անորոշ խլացուցիչ ղժժոցի, որ արձագանգում էր իր գանդի մէջ ինչպէս փոթորկի ոլորտ:

Ֆար լռութիւնը չարունակւում էր:

Ամէնքի հայեացքը դարձած էր դէպի այդ դունատ դողդոջուն ծերունին, որ յամառաբար լռում էր եւ որ ոչ ոքի չէր նայում, ասես վերացած էր մի այլ աշխարհ:

— Ա՛ խալխ,— ընդհատեց լուսթիւնը ոէսը,— ա՛ խալխ, ձեզնից ո՞վ կը վճարի Գէվօի հարկը ու կը վերցնի նրա արտը:

— Ե՛ս, ձայն տուեց մէկը ամբոխի մէջից:

Բոլոր հայեացքները այն կողմը դարձան:

Կոլոտ Ցակոն էր:

— Ես էլ,— լսուեց մի այլ ձայն:

Բեղլու Սաքօն էր:

Գէվօն դարձեալ լռեց, ու ասես չլսեց ձայները:

Նրա ականջներում նոյն խօսքերն էին ղժժում.

«Կամ արտը, կամ էշը...»

Էշը, այս իր կեանքի հաւատարիմ բաղդակիցը այս բարի, այս չարչրկուած կենդանի՛ն, յետոյ՝ արտը, արեւածաղիկները, անուշաւէտ կանեփը, Զարդարը, իր երդ ու լէլէներով, իր արտը՛, իր պատի՛ւը... իր արուն-քրտի՛նքը, իր փափախը:

Սարսափելի՛ երկընտրանք:

Աչքունքները խեղդում էին կոկորդը: Գէվօն զսպում էր: Ուխտել էր լաց չլինել այս անկարեկիր ամբոխի առաջ, այս ժպտուն, չարախնդաց աչքերի, որոնք չորս կողմից իրեն էին ուղղուած:

— Ա՛ խալխ... ա՛ խալխ...

Ուզում էր ասել՝ «ա՛ խալխ, ախր հայ քրիստոնեայ էք. Աստուած ունէք. նայեցէ՛ք, ծեր, չունեւոր մարդ եմ, սեւ օրով մի փոքրիկ արտ եմ չինել, ծերութեանս նեցուկ, զաւակիս ափոփանք. մէկն ու մէկդ ձեռք բռնեցէք, էս հարկը տուէք, էշտոյ կը վճարեմ, հոգուս պարտքը լինի: Ինչի՛ էք ուզում զրկել ինձ իմ արտից, կամ էս մխակ բեռնակրից»:

Ուզում էր ասել այս բոլորը, բայց մխրուքը նորից թափով դողդողաց, ձայնը կերկերաց, նա կուլ տուեց արցունքը, ու պաղատանքի խօսքերը աստանների տակ փչրեց. անողորմ գիւղին նա չէր խնդրի:

Ոէսի համբերութիւնը հատաւ.

— Ի՞նչ ես իծի պէս մկկում,— ճչաց ոէսը ճիպոտը թափ տալով. էս սհաթին թիկունքիդ կաչին կը հանեմ: Նոքար մարդ ես, դու ո՞ւր՝ արտն ո՞ւր, ա՛յ տլուզ Ղէղօ, վազ արի արտից ու էշդ առ ոադ եղիր մէջտեղից:

Վիրաւորանքը անասելի էր:

«Ղէ–ղօ ... տլուզ Ղէ–ղօ՛...». հրապարակով, այս վատ ամբոխի առաջ: Ուրեմն Ղէ–ղօն չէր մեռել... Պատրանք էր բոլորը ե՛ւ արտ, ե՛ւ հունձ, ե՛ւ պատիւ, բոլո՛րը մի անողորմ պատրանք, որ ցնդելում էր չամանղալի պէս: Ու հոգին թունդ եկաւ ոէսի անարդանքից: Շիկացած երկաթով ասես սիրտը վառեցին: Կ՛ուզէր այժմ ճչալ, մի զարհուրելի, խորտակիչ խօսք ասել. կ՛ուզէր վառել այս գիւղը, այս ոէսի մէջքը փչրել, այս բազմութիւնը խաղողի ողկոյզների պէս ոտների տակ ճմլել. կ՛ուզէր... եւ անզօր էր: Կանգնած տեղը երերաց, գլուխը պահ մի քաշ ընկաւ կրծքին ու մնաց անշարժ, լուռ:

Բազմութիւնը նայում էր ու ապասում:

Ու յանկարծ ծերունին մի յետին թափով յետ ձգեց իր ալեգարդ գլուխը, ծառացաւ իր ամբողջ պարթեւ հասակով, աչքերը փայլատակեցին անասելի բոցով, ու նա ճչաց ահագին ձայնով:

— Աղքատ եմ ու մշակ, ոէ՛ս, հա, չատ աղքատ, բայց քո հացը չեմ կերել, ոէ՛ս... Ոչ ոքի

տուն չեմ քանդել, ոչ... Մշակ եմ ու աղքատ, ուրիշի քրտինքով չեմ ապրել, ոչ. վաստակ եմ արել, արդար վաստակ. արտի տէր եմ, ճակատիս քրտինքով հողն եմ թրջել. հոգիս եմ դրել այնտեղ, ոչ, սի՛րտս, սի՛րտս. չեմ տայ ձեզ արտը... Իշը ձեզ, ծախեցէք, քե՛զ ոչ, ծախիր էշը, արտը չեմ տայ, չեմ տայ... Գնա խեղճ անասուն,— դարձաւ նա էշին,— գնա՛, դուն էլ արտին մատաղ, գնա՛, գնա՛, գնա՛...

Ու Գէվօն երեսը դարձրեց էշից ու բազմութիւնից ու չտապ քայլերով հեռացաւ:

Լռութիւն տիրեց: Ամբոխը նախ քարացաւ, ապա յանկարծ յիմարական հռհռոց բարձրացաւ:

Գէվօն յետ նայեց ատամների կրճտոցով:

— Կռապաշտնե՛ր, անաստուածնե՛ր,— մռնչաց նա:

Գէվօի էշը ծախեցին:

Ու այն պիչեր ծերունին երկար սփոփում էր լացող կնոջը: Արտի ապագան էր պարզում սիրուն հեռանկարներով, յոյսերով: Գարնանը քամբակ կը ցանի,— ասում էր,— ամէն հոգսերը կը հոգայ:

«Քանի՛ օրսվայր է»,— չընչում էր մի ձայն ականջին:

— Սիրտդ լէն պահիր, ա՛յ կնիկ, Աստուած ողորմած է:

Կինն ու աղջիկը քնեցին: Ծերունին դեռ երկար անքուն էր, վոքրիկ, տրտում իշուկի պատկերն աչքի առաջ: Գիւղում երթեւեկը դադարեց, աղմուկը լռեց: Ուշ գիշեր էր: Նա կամացուկ դուրս սողաց իր անկողնից, գնաց ղէպի իշուկի մսուրը,

ծեր գլուխը քաշ ընկաւ վշտից ու դառն դառն հեծկլտաց:

Նա երկար լալիս էր անմխիթար, արցունքները հոսում էին ու թրջում մէրուքը, կուրծքը, ու ծեր գլուխը չարունակում էր անյոյս դողդողալ իշուկի անտէր մնացած մսուրի վրայ:

— Տէ՛ր, Տէ՛ր, վշտանում էր նա, կամ ամէն ինչ արտին թող էս վէրան աշխարհում, կամ սիրտը վերցրու, որ էլ չմղկտայ:

Դրսից լսուեց Բնօի ձայնը.

— Աստուորի վերջը փուչ է, աշխարհի հիմքը՝ ծուռ... Ադամորդին էլած չէլած, մէկ հաշիւ է...

Գէվօն չէր լսում, նա հեծեծում էր սիրտը բըռնած: Եւ միայն խաւար գիշերը տեսաւ, թէ ի՛նչպէս գիտէ արտասուել միշտ ժպտադէմ, ծերուկ Գէվօն:

1924

ԵՐԲ ԶԻՆՆ ԻՋՆՈՒՄ Է...

ԵՐԲ ՁԻԱՆՆ ԻՋՆՈՒՄ Է...

I

Հոգեհացը վերջացաւ։
Ծուղարկաւորները կամաց-կամաց քաշուեցին։
Բակը դատարկուեց։
Խեչանենց Եզնակը, կամ ինչպէս սովոր էին նրան ասել գիւղում՝ Եզնակ ամին մնաց մեն-մենակ կանգնած բակում. նա նախ չուրջը նայեց մտածկոտ, ապա հեռուն, դէպի բակի խորքը, ուր մի կողմում ծառազարդ պարտէզն էր եւ միւս կողմում գոմը, իրարից բաժանուած վայտեայ ցանկապատով։ Եզնակը նայում էր այնպէս, ասես առաջին անգամն էր տեսնում իր սեփական յարկն ու բնակութիւնը։ Քանի մի հարեւան-բարեկամների կանայք դանդաղօրէն հաւաքում էին քելեխի դատարկ ամաններըե. գոծին հակում էր Եզնակի քոյրը՝ պառաւ Հէքօն։ Մօտ վաթսուն տարեկան մի կին էր Հէքօն, որին իր ծնողից խեղաթիւրուած ոտքը դատապարտել էր ամուրի մնալ — պառաւ աղջիկ։ Մանր, կապոյտ աչքեր ունէր Հէքօն, ջլուտ դէմք, լայն բերան հաստ շրթունքներով, եւ բոլորի վրայ իշխում էր նրա բարձր արծուային քիթը, որ նրան տիրական տեսք էր տալիս։ Հակառակ իր հաշմանդամ վիճակին, Հէքօն կաղալով, մի ոտքի վրայ շրջաններ էր կատարում ինչպէս պտտուող հօլ, իր չուրջն աշխատող կանան-

ցից մէկից միւսին անցնելով, Թոնրատուն մտնում ու դուրս գալիս անդադար կարգադրութիւններ անելով:

Եղնակ ամին գրեթէ անմտօրէն նայում էր աշխատող կանանց, նայում էր իր քրոջը, ու հասկանալ չէր կարողանում Հէքօի ահագին եռանդը, նրա անդադրում եռուզեռը, այդ անօրինակ տենդը, որ այս վաթսուն տարեկան պառաւին ամբողջ օրը պահում էր ոտքի վրայ, գործի վրայ.

— Ի՞նչ ես քեզ սպանում խեղճ պառաւ, մրմնջաց նա, ի՛նչ պիտի տանես հետդ, վերջդ, վերջդ...

Եղնակ ամին հանդարտօրէն բարձրացաւ քարէ աստիճաններով ու ներս մտաւ սենեակը, ուր այնքան տարիներ անցրել էր հանգուցեալ կնոջ հետ: Առանց ցաւի ու վշտի նայեց այն թախտին, ուր իր կինը այնքան տարի հիւանդ պառկած էր եւ որին թաղեց այսօր: Կանգնած նայում էր առանց կսկիծի աւես ոչինչ չէր պատահել, ոչինչ չէր կորցրել. միակ փոփոխութիւնն այն էր, որ ահա այն թախտի վրայ մէկը կար պառկած, ու էլ չը կայ. տեղը պարապ է: «Այսպէս աւելի լաւ է, խորհեց նա, այժմ սենեակը չնորք ստացաւ, թախտի վրայ կարելի է ազատօրէն նստել հանգստանալ»: Մտածեց ու ամաչեց իր մտքերից.

«Մեռել է չէ՛, մեղք է ախր»...

Որչափ եւ յանդիմանէր ինքն իրան, հոգու խորքում զառնութեան մի զգացումն ծածուկ եռում էր ու պճպճում մեռած կնոջ հասցէին: Վերջին տասն-տասնեւհինգ տարին կինը միշտ հիւանդ է եղել մերթ ոտքի վրայ տնքտնքալիս, մերթ անկողնում պառկած:

Ինչի՞ն ցաւի եղնակը. լաւ էր, մեռաւ պրծաւ:

Նա առաջացաւ, նստեց հանգուցեալի թախտին ու ճակատը ձեռքին յենած խորհում էր: Այրիութեան զգացումը չունէր. ոչ այն տրտում ու խոհուն մենութեան գիտակցութիւնը, որ պաշարում է մարդու հոգին, երբ սիրած ընկերուհին յանկարծ չքանում է աշխարհից թողնելով անպարփակելի պարապ եւ ո՛չ նոր կեանք սկսելու իղձ, որ յամառ ու հզօր բոյսի պէս ծլում է անցած կեանքի աւերակների վրայ ու ձգւում դէպի արեւն ու լոյսը: Այն օրուանից, որ կինը հիւանդ՝ անկողին ընկաւ, տասն-տասն հինգ տարի առաջ, նա արդէն այրի էր, անյոյս, անդարձ այրի. կեանքի ու մահու մէջ կախուած կինը բռնել էր իր ձեռքին եւ ամուսնու բաղդը. այժմ՝ երբ կնոջ մահով եղնակն ազատ է, նա խուլ ցասումն ունի իր ճակատագրի դէմ. կինը գրնաց տանելով իր հետ նոր կեանքի բոլոր կարելիութիւնը. եղնակ ամին վաթսուն վեց տարեկան ծերունի է եւ... անզաւակ: Մշտապէս հիւանդ կինը ծրնունդ չունեցաւ, մայր չը դարձաւ երբեք:

Եղնակ ամին պիտի մեռնի անժառանգ:

— Երբ ձիւնն է գալիս եղնակ, քաչ ձգիր գլուխդ, մրմնջում էր նա:

Եւ մի անյոյս դատարկութիւն էր իշխում նրա հոգում:

Լացի իղձ ունէր, ուժեղ, սրտապատառ լացի, որ կուրծքը քանդէր հեղեղի պէս. չրթունքները դողդողացին.

— Հը՛, տղամարդ եղի՛ր... Ների՛ր Տէր, քո ճամբաները ո՞վ կը հասկանայ. ո՞ւմ գլխին չի իջնում քո ձիւնը, ո՞ր սարն է, որ ճմրան չի ծածկւում քո ճերմակ ողորմութիւնով:

Զեռքը իր սպիտակ ու փառաւոր միրուքին տարաւ, մատները թաղեց թաւ ալիքների մէջ, ապա բարձրացրեց, նայում էր անհուն թախիծով.

— Ձեվ-ճերմակ է, սարի ձիւն! ու ժպտաց դառնօրէն:

— Քո տունն աւերուի՛, մա՛րդ, դու էլ հօ...

Խօսքը չը վերջացրեց. ասելիքը չը գիտէր, ըզդում էր սակայն մի բան, որ նման էր առաջացող թանձր խաւարի ու աչխատում էր վանել այն:

Ծով հարստութիւն ունէր, բազմաթիւ արտեր ու այգի, ձիթհան ու ջրաղաց, մի քանի զոյգ լծկան եզն ու գոմէշներ, սայլ ու դուբան, կթան կովեր ու մատակներ, բակի դարբասը լայն էր, շատ լայն, բարձած սայլերն էին ներս մտնում ճռնչալով ու լծուած գուբանը: Ընդարձակ բակը ամէն բարիքով հարուստ չտեսարան: Սաքուն միշտ լիքը, օտարականներ, հիւրեր, երգիչներ...

Ցետո՞յ...

— Քո տունն աւերուի աղամո՛րդի, դու էլ... Ի՞նչ ասեմ...

Ի՞նչ պիտի ասէր, ինքն էլ չը գիտէր. զգում էր միայն, որ իր այդ անբաւ հարստութեան մէջ բաղդի դուռն իր առջեւ փակուեց անդարձ եւ ինքը՝ այդ անթիւ բարիքի տէրը, Խեչանենց օջաղի վերջին շառաւիղը դուրս մնաց սրթսրթալէն, ինչպէս ճիւնճմրան փողոց չպրտուած որբուկ:

Նորէն լացի բուռն յոյզը պաչարեց նրա հոգին, կուրծքն ուռաւ, ծնօտն ու միրուքը դողդողացին ջղաձգօրէն, նա ատամները չրթունքների վրայ սըղմեց.

— Հարստութիւնդ է ցաւդ յիմա՛ր, ո՞վ է իր ունեցածը հետը տարել, Դաւիթ մարգարէն ու Սողոմոն իմաստունն ի՞նչ տարան, որ դու ինչ տանիս, ձիւնն է գալիս, բուք բորան է գլխիդ ե՛զնակ.

— Բայց ժառանգ, Աստուած իմ, մի չիւղ, մի ծիլ, մարդ եմ չէ՞... ուզում ես էն կեանքից քո տան ծուխը տեսնես. անժառանգ ո՞ւր գնամ:

Հին վախ էր այս:

Այն օրուանից, որ կինը ի դերեւ հանեց իր հայրական յոյսերը, նա ապրում էր այդ մղձաւանջը, անժառանգ մահուան ահագին կսկիծը, անտէր դերեզմանի կանխահաս ցուրտ սարսուռը. ի՞նչ պիտի անէր, չնութի՞ւն, ա՞չք պիտի տնկէր հարեւանի կնոջը, «բա՞րձը պիտի փոխէր», Խեչանենց արդար օջա՞ղը պղծէր, Աստծու ցասո՞ւմը չարժէր...

Հէքօն յաճախ էր ակնարկել այդ, դրդել էր նրան աչք ածել չուրջը:

Պառաւած աղջիկը վաղուց հետէ, իր մատաղ հասակից, մոռցել էր ամէն ինչ եւ, սեփական բաղդ, եւ կեանքի հաճոյք, եւ ամուսնական հրապոյրը կախարդիչ. խեղդել էր հոգու բոլոր յոյզերը ծածուկ, տրորել ու փշրել իր մարմնի դրդիռը դիւական, հաշտուել էր իր դաժան ճակատագրի հետ, բայց պահել էր մի հզօր կիրք, մոլեգին նախանձախնդրութիւն իր հայրենի տան՝ Խեչանենց օջաղի փառքի ու յարատեւութեան: Առանց ձագերի՝ թխսկան հաւ էր

նա, եւ միակ ճագը՝ պապերի օջաղն էր· իր դատապարտուած մայրութեան չը յագեցած կրակը նոյնացել էր հայրենի յարկի, հերդիկի ծխին, որ ամէն օր բարձրանում էր պալան-պալան եւ պիտի բարձրանար յաւիտեան: Եւ ահա տոհմային այդ կատաղի, աւերիչ եսասիրութեան առջեւ այդ վտիտ, միշտ դունատ, միշտ հազացող կինը — եղբօր կինը — մի ճլորած, թշուառ ծառ, որ ծիլ չունէր, պտուղ չունէր եւ չէր կարող ունենալ:

— Կնիկն ի՛նչ կնիկ է, որ տարին մի թաուլան ասլանի ճուտ չի հանի մէջ տեղ — ասել էր նա յաճախ իր հիւանդ հարսին — հը՛, թէ չնորք չունես, ճամբայ տուր, ի՞նչ ես դիշեր ցերեկ դխկդխկում, մեր հոգին կերար...

Հէքօն ինչպէ՞ս էր սպասում իր հարսի մահուան: Եւ այդ սպասումի մէջ, ինչ անողորմ էր դէպի հիւանդ կինը: Դժոխք էր չինել նրա կեանքը: Իր ցասկոտ անզօրութեան մէջ նա դառնում էր եղբօրը ու գաղտնի հրահրում նրան տապակող ներքին կրակը·

— Քո տունը չը քանդուի, ա՛խպէր, հազար տարի չես ապրելու· էս կնկանից էլ խէր չը կայ, գըլխիդ ձէնն ածիր, տղամարդ ես չէ՞... Ճամբորդի ձին ո՛ւմ արտից ասես կ՝արածի:

— Հոգուդ մեղք մի՛ արա, անիրաւ, ասածդ հասկանո՞ւմ ես, պատասխանել էր եղբայրը:

Հէքօի փոյթը չէր:

— Մեղք կայ, որ աւետարանի կողքին է գըրուած· հրէն գիր Մնօի այրի հարսը· կնիկ հօ չի, սարերի ջէյրան· պառաւը ձայնը ցածրացնում էր·

լողանալիս տեսայ, մարմինը վարդ ու ճիւն, կողքից անցնես երեխան պատրաստ է... Տղամարդ ես չէ՞ ու հարուստ տղամարդ...

Ու պառաւի կապոյտ աչքերը փայլում են մի հին, թագնուած կրակով· ու նա ապրում էր այդ ծածուկ սիրոյ տարփանքը, բոլոր այն ախտաւոր դրդիռը, որ այնքան հրապուրիչ է դարձնում յանցանքը:

— Բարձդ փոխիր, ասում եմ, ախպէր, բարձդ փոխիր, էս օջաղը չէն պիտի մնայ· քո կնկանից խէր չը կայ:

— Ցնդուեցիր Հէքօ, օջաղը չէն պահելու համար օջաղը չեն պղծի· Ջրիմիկ ամանի մէջ չեն թքի:

Ու եզնակը թողնում էր գազազուած քրոջը ու դուրս գնում:

Վարանումն չունէր, իր առաքինի վճռականութեան մէջ, քրոջ ցոյց տուած ճամբան նրա համար չէր· Նա չէր կարող աղտոտել իր պապերի, իր հայրերի օջաղը· Քոյրերը եղբօր համար կամաւոր կոյր են, ամէն ինչ կը ներեն, ամէն ինչ յանձն կ՝առնեն, մինչեւ իսկ անարգանք ու մահ, միայն թէ եղբայրը բաղդաւոր լինի· Այդ գիտէ եզնակը, գիտէ նաեւ, որ Հէքօն իր քրոջական բուռն սիրուն աւելացնում է նաեւ իր հայրենի օջաղը վառ պահելու մոլեգնութիւնը: Եւ այնուամենայնիւ քրոջ խորհուրդը նա համարում էր չարի թելադրանք:

Եւ նա ուրիշ ելք էր փնտռում:

Ինչո՞ւ չ՝որդեգրել մի երեխայ:

Իր պրպտուկների մէջ շրջակայքի գիւղերից մէկում նա գտաւ մի որբ տղայ, որ եւ հեռաւոր, շատ

հեռաւոր ազգակցութիւն եւս ունէր Խեչանենց տոհմի հետ:

Հէքօից վախենում էր. փոքրիկ Սէթօին տուն բերեց որպէս գառնարած հօտաղ, մնացածը թողնելով բարեպատեհ առիթի:

Տասն տարի էր անցել այդ ժամանակից: Եւ Սէթօն այժմ քսան տարեկան սիրուն, չիկահեր, տղամարդ է, ուշիմ, աշխատասէր, բարեբարոյ եւ որ գլխաւորն է, կապուած Եզնակին, որպէս իր հարազատ հօրը:

Եւ այժմ՝ սեննեակի մենութեան մէջ իր խոհերին անձնատուր՝ Եզնակը ուրիշ ելք չի տեսնում. պէտք է որդեգրել Սէթօին: Հարկաւոր էր միայն Հէքօի հաճութիւնն առնել, այլապէս տունը դժոխք կը դառնար: Ու Եզնակը կարծում էր, որ այժմ, երբ կեանքի դարբասը իր վաթսուն վեց տարիների առաջ իր ծանր ճխանի վրայ ճռնչալէն փակուեց, Հէքօն եւս կը հասկանայ, որ ուրիշ ելք չը կայ: Եւ այս սփոփիչ մտածումով, նա դուրս եկաւ պատշգամբը:

Ամրան կիզիչ արեւն արդէն իջել էր դէպ իր մուտքը. երեկոյեան թեթեւ հովն էր փչում: Գիւղը կենդանանում էր:

Դրսից լսւում էր դաշտից դարձող քաղհանաւոր հարս ու աղջկերանց երգն ու քրքիջը, հնձւորների ու հօտաղների կատակներն ու սրախօսութիւնները, բարձած սայլերի ճռինչը, անասունների բառաչը. գիւղի վրայ բռնել էր թանձր փոշու ամպը եւ նրա տակ խուլ տրուփիւն հարիւրաւոր ոտների — նախիրն էր հեղեղում գիւղը իր թուխ ծփանքներով:

Հարեւանուհիները մեկնել էին:

Հէքօն մենակ էր բակում եւ եռանդով հարում էր խնոցին, որ քաշ էր ընկած թոնրատան առջեւի ծածկի գերանից:

— Հէ՛քօ, ա՛յ Հէքօ. կանչեց Եզնակը:

Պառաւը գլուխը բարձրացրեց.

— Հը՛, ա՛խպէր:

Եզնակը լուռ էր. կարծես ասելիքը մոռցաւ:

— Ի՞նչ կայ Եզնակ ջան, կրկնեց պառաւը խնոցու հարքը թողնելով.

— Հէքօ՛, մեռաւ էլի՛:

— Ցաւդ տանի ախպէր ջան, էհ, չարունակեց պառաւը խորը հառաչելով — մեռաւ, ամա գլխակեր եղաւ. չը բերք, հիւանդ, դէ չուտ մեռնէր էլի, օղորմածիկը:

— Հոգուդ մեղք մի՛ արա քո՛ւրիկ, վերեւ նայիր, կեանքի ու մահու տէրն էնտեղ է:

— Մեռնիմ նրա ողորմութեանը, ի՛նչ եմ ասում որ, դէ հալբաթ, թէ մեռնելու էր, թո՛ղ մի տասն-տասնհինգ տարի առաջ մեռնէր է՛լի...

— Հոգուդ մեղք մի՛ արա ասում եմ, չափ ու կշիռքը մեր ձեռքին չի, Աստծու ձեռքն է:

— Էս հալալ, օրհնուած օջաղի բաղդին նստեց բայդուշի պէս, չարունակեց Հէքօն ինքն իրան, խնոցին հարելով, սեւ ընկէր էն օրը, որ օղորմածիկ հէրս խնամախօս գնաց. տասն հինգ-քսան տարի էլ հիւանդ կ՛ընկի. առողջ, բերքով կինը պակա՞ս էր աշխարհում:

Հէքօն երկար պիտի մոմոար ինքն իրեն, եթէ դարբասը չառաչիւնով չը բացուէր դաշտից դարձող

անասունների առաջ: Նախ երինջները խայտալով ներս վազեցին մատաղ ցուլերի հետ, ցրիւ եկան բակում ցատկռտեցին, իրար կոխկռտեցին չարաճճի մանուկների պէս: Ու նրանց հետ այնքան կեանք, այնքան եռուն բնութիւն եկաւ դաշտերից:

— Փառք քեզ Աստուած, անասունն էլ գիտէ ուրախանալ, չէնչաց եղնակը նայելով խայտաբղէտ կենդանիների եռուզեռին, զարթնող կրքի բնազդական պոռթկումին:

Ապա յայտնուեցին կովերը յամրաքայլ ու անյոյզ, յետին ոտների վրայ երերուն, խնայելով իրենց հարուստ ստինքները, որոնց կարմրաւուն պըտուկները ամէն մի քայլի հետ դողդողում էին ինչպէս հասած կարմրաւուն փշատը հովի առաջ: Կովերին հետեւում էին մատակները թանձրամարմին ու անճոռնի, ոմանք օրուայ տապից առուների ցեխերի մէջ թաւալկլոր, ուրիշների թուխ ու լերկ մորթին բարկ արեւի տակ մրկուած ու պսպղուն: Ներս եկան կթան կովերի հետ ու հնազանդ շարուեցին ցանկապատի առաջ սպասելով կովկթներին, որ Հէքօն չտապ-չտապ պատրաստում էր:

Դուռը նորէն չառաչիւնով բացուեց ու գոմէշների յաղթ վիճոցը լսուեց. ներս մտաւ նախ Ջահիլ, վիթխարի Շէկօն, Խեչանենց գոմի զարդը, գարնան բոլոր կռիւների հերոսը: Ամէ, կռուարար աչքերը կարմրաւուն սիրուն գծերով բոլորուած ռունգները վինչացնելով, նկարչազեղ ու դաշոյնաձեւ եղջիւրները ճակատին բոլորած որպէս պսակ, պարանոցը հաստ, գլուխը բարձր. նա ամբողջապէս կիրք էր եւ ոյժ. ներս մտաւ մրրկի պէս, հոտոտեց գետինը,

դունչը բարձրացրեց մռնչալով, տնքաց կրքոտ մոլեգնութեամբ, ապա երկու ոստիւնով սլացաւ դէպի մատակները, իր հաստ կողերով զարկուեց նրանց, շարքերը խառնեց, նորէն մռնչաց: Մատակները այս կատակը չը սիրեցին, պոչերի տհաճ շարժումով ու ռունգների սաստուկ վինչոցով վանեցին նրան. Շէկօն կանգ առաւ չուարած, նայեց էգերի շարքին հեգնանքով, կրքոտ աչքերը նորէն չորս կողմը պտտեց ու չտապեց ծածկուել գոմում:

Հասաւ Շէկօի ընկերակից ու լծակից Ջալօն, ճակատին մի կոլոր ճերմակ բիծ, եղջիւրները երկու ահագին աղեղի ձեւով իրար վրայ եկած, գաւակները փարթամ, պոչը շատ երկար ու հարուստ վինջով զարդարուն, որ նա շարժում էր մի տեսակ անզիտակ հպարտութեամբ: Աւելի հանդարտաբարոյ քան իր լծակիցը: Ջալօն ընտանօրէն մօտեցաւ մատակներին ու նրանց քսքսուելով՝ անցաւ գոմը:

Հետզհետէ հասան եւ այլ գոմշուկներ, ձագեր, ապա եղները յոգնած, անխռով հայեացքով պարանոցները քաշ ու լծառը լերկ ու կնճռոտ. ամէնից վերջը հասաւ Մարալը վաստակաւոր, պառաւած գոմէշը, մազերն սպիտակած, քայլուածքը երերուն, աչքերը հանգած: Շէկօի հայրն էր նա:

Խեչանենց տան գօլաթն էր Մարալը. վաղուց էր արդէն, որ խնայելով իր առաջացած տարիքը, նրան ազատել էին լծից. եզնակը պատուիրել էր խնամել նրան — իբրեւ ծեր վաստակաւոր եւ նրա մահից յետոյ, նրա դանդը կախել դարբասի ճակատին որպէս օրհնաբեր խորհրդանշան:

Մարալը ներս մտաւ բակի անասունների կրքի

ու կեանքի ժխորի մէջ, հեզ ու հնազանդ աչքերը դե–տին, անցաւ առանց ոչինչ տեսնելու, ու ծածկուեց զոմում:

— Ա՛հ, քո տունն աւերուի Մարալ, ի՛նչ դար–ձար — ու յիշում է եզնակը Մարալի երիտասար–դութիւնը. կուռւարար էր ու սիրուն՝ Շէկօի պէս: Այնքան անզուսպ ու վտանգաւոր, որ ամէն գարնան, հօտաղներն ստիպուած էին նրա պարանոցից հաստ գերանի մի կտոր կախել իր կատաղի վազքն ու յար–ձակումները խափանելու համար: Մի հօտաղ յա–տուկ նրան էր պահում եւ ահագին մահակը ձեռքին, հսկում նրա վրայ դաշտերում: Լծի տակ իսկ Մա–րալը անընկճելի էր. հակառակորդ տեսնելիս, փըչ–րում էր լուծ ու սամի, ու վրան սլանում. ու նրա սամիները միշտ երկաթից էին. իսկ եւ իսկ Շէկօն, իր ձագը:

Ցիչեց այս բոլորը եզնակը ու խորունկ հառա–չեց ասես իր բաղդի վրայ.

— Քո տունն աւերուի Մարալ կրկնեց նա, դու էլ ադամորդու պէս ... կաս ու չը կաս— ճիւնն է իջել ե՛ւ քո գլխին...

Եկեղեցու զանգը ճնկճնկաց:

Եզնակը ցած իջաւ աստիճաններով եկեղեցի գնալու:

Դրան չեմքին, ճակատ առ ճակատ հանդիպեց մի կնոջ, որ երեսը ծածկեց, յետ քաշուեց ծերու–նուն ճամբայ տալու համար.

— Կով կթողն է, Հէքօի օգնականուհին, մտմը–տաց եզնակը ու անցաւ:

II

Աշունը մօտ էր. օրերն անցնում էին իրար նը–ման. ու Խեչանենց եզնակի օջաղը հանդարտ ու հը–նազանդ գնում էր դէպի անէացում:

Եզնակն էլ ասես, օր աւուր աւելի էր ծերանում. քայլում էր կորաքամակ, գաւազանին յենուած ու աչքը միշտ գետին մի բան փնտռողի պէս:

Եւ կորուստը անդառնալի էր: Հաշտուել էր իր բաղդի հետ, բայց հինաւուրց օջաղի ծածուկ տուգը, հոգու հեռաւոր խորքում կրակի պէս մխում էր: Ու դիչերները սաղմոս էր կարդում...

Հէքօն էր մնացել ըմբոստ, օր աւուր նա աւելի անհամբոյր, աւելի ջղային էր դառնում. անցնող ա–մէն մի ժամը նրա համար անիսխաբինելի կորուստ էր: Նրա սուր հայեացքից չէր վրիպում եղբօր հոգե–կանը: Աւերուղ, դատապարտուած օջաղի վերջին սիւնն էր Հէքօն, որ ճգնում էր դեռ պահել պապենա–կան հինաւուրց կառուցուածքը: Բեռը ծանր էր, նրա վիսրուն, պառաւ ուսերը երկար պահել, կրել չէին կարող: Նա չտապում էր ելք գտնել:

Ու մի երեկոյ նա Գոհարին պահեց սովորականից աւելի, ու խօսում էր նրան երկար երկար:

— Որդի՛, ասում էր նա Գոհարին — ի՛նչ ես կեանքդ սեւացրել ջուլհակ Մրնօի պաղ թոնրան չըր–թին նստել. մեղք չի՞ ջահիլութիւնդ. աչխարհում էլ ուրիչ որբեւայրի չի՞ եղել, էս ի՞նչ է քո հալը, ջահիլ, սիրուն կին, ու դոնէ դուռ ընկած մի կտոր հացի համար:

— Ի՞նչ անեմ, մրմնջաց Գոհարը, իմ բաղդն էլ

էսպէս եղաւ. էն հալիւորը, էն փոքրիկ երեխան պահող, լուացող է պէտք:

— Ջահիլութիւնդ մի՛ կորցրու. է՛հ, մի ճլորած երեխայ, վաղը մեծանայ երեսդ էլ չի նայի, կեսբարդ էլ կտաւ գործելով քեզ պահել չի կարող. աչքի լոյսը գնացել է. էսօր կայ, էգուց չը կայ. գլխիդ ձէնն ածիր ասում եմ, ո՛րդի, մեղք ես, մեղք քո ջահիլութիւնը. երեսուն տարեկան չը կաս, փառք Աստծու առողջ, տեսօք, ձեռքի ջրով, նայողը կ՚ասի՝ ջահիլ աղջիկ, ինչի՞ մարդու չես գնում:

Գոհարը կտացած՝ կովն էր կթում ու մի ականջով լսում էր պառաւի յորդորները:

— է՛հ, ի՞նչ իմանամ, իմն էլ էսպէս եղաւ, ու ոտքի կանգնեց կովկիթը ձեռքին:

— Դու չ՚իմանաս, ո՞վ իմանայ, ո՛րդի, քեզ համար եմ. ասում բոյ ու բուսաթխտ նայիր, չինա՛ր. Աստուած ամէն չէնք ու չնորք վրադ է թափել, թըչերդ ալ-վարդ, թեւերդ չարմաղ, ուսերդ՝ մէկքդ... ի՛նչ ասեմ, ո՞ւմ համար ես պահել էս բոլորը, տնաքանդի աղջիկ. ու պառաւը տարփոտ հաճոյքով ձեռքը տարաւ երիտասարդ կնոջ թիկունքին, վար բերեց իրանով չօշափելով նրա փարթամ հրապոյրները. ա՛յ թէ քո տեղը լինէի, չարունակեց պառաւը հառաչելով.

— Ի՞նչ կ՚անէիր:

— Տասը մարդ կ՚առնէի, պառաւը ծիծաղեց:

— Վա՛յ հողն իմ գլխին, էտ ի՞նչ ասիր Հէքօ բալի: Գոհարը նոյնպէս խնդաց կարմրեց:

— Ի՞նչ սիրուն ես ծիծաղում աղջի, դու տղամարդ կը գժուեցնես:

Գոհարը կծկուեց ու մռայլուեց:

Պառաւի խօսքերը թագնուած ու կասկածելի իմաստ պիտի ունենային. այդ զգում էր Գոհարը, դժգոհ էր, ու չտապեց վերջ դնել անհաճոյ զրոյցին: Նա կովկիթը թափով դատարկեց ու անցաւ յաջորդ կովին:

Հէքօն չը դադարեց.

— Ի՛նչ թառլան տղայ կը բերես Գո՛հար, ինչ տղայ կը բերես, շարունակեց Հէքօն, երբ երիտասարդ կինը կռացաւ ու կովի ստինքները ձեռք առաւ. տղամարդը քեզ համար հոգի կը տայ:

— Դէ որ Աստուած չ՚ուզեց:

— Ֆո ձեռքին է բաղդդ, մարդու գնա՛, ասում եմ, մե՛ղք է ջահիլութիւնդ:

— Ուզողն ո՛վ:

— Ա՛նխելք, քեզ նման կնկան մա՞րդն է պակաս. աչք ածի՛ր շուրջդ. ասում եմ մուշտարին գլխիդ կանգնած է:

Գոհարը լուռ մնաց. բան չէր հասկանում, պառաւի զրոյցը որքան յամառ, նոյնքան տարօրինակ էր:

Գոհարը գործը վերջացրեց եւ պատրաստւում էր դուրս գնալ. Հէքօն առջեւը փակեց, ձեռքը բռնեց ու իր կողքին նստացրեց սրահի թմբի վրայ:

— Լսի՛ր որդի, քո բարիքի համար եմ ասում էէ՛, քո բարիքի համար. ջուլհակ Մընօի հարսն ես, քանի օղորմածիկ մարդդ կար, մի օր չը տեսար, միշտ աղքատ, խեղճ. նա մեռաւ, գնաց վզիդ թողեց հալիւոր հօրը ու երեխան: Հիմա էլ որբեւայրի, ո՛վ դիտի, ի՞նչ գայ գլուխդ. մեղք ես ախր, դու ջահիլ

ես, չես հասկանում, մօրդ պէս քո բարիքն եմ ուզում, նայի՛ր չորս կողմդ, Մեչանենց տունը ծով է, ախպէրս՝ այրի...

— Վա՛յ, հողն իմ գլխին, ճչաց Գոհարը վերջապէս ըմբռնելով Հէքօի ծածուկ նպատակը. ու խրտնած այծեամի պէս տեղից ցատկեց, երկու ձեռքով չառաղունած երեսը ծածկեց ու մնաց լուռ քարացած:

Հէքօն քնքշօրէն բռնեց նրա ձեռքը ու նորէն նստացրեց իր կողքին:

— Անխելքութիւն մի՛ արա, բաղդիդ քացի մի՛ տուր, հալբաթ, եղնակը մեծ է քեզնից, ի՞նչ անենք, տղամարդի ծերը ո՞րն է, ջահիլը ո՛րը. ախպօրս ձեռքը ոտքը տեղը, աչքի լուսով, ականջով, քար ուտի կը մարսի. տարիքին մի խաբուխր. քանի ջահիլ տղամարդ ջուրը կը տանի, ծարաւ կը բերի:

Գոհարը դարձեալ լուռ էր:

— Ծեր մարդը աւելի կը սիրի ջահիլ կնկան որդի, հաւատա՛ ինձ, էս ծով հարստութիւնը, էս վառք ու պատիւը. երեխադ էլ հետդ կը բերես, թող վայելի, դու էլ թագուհի, ես քեզ աղախին:

Լռութիւն տիրեց:

— Միրուքը ճեվի-ճերմակ, յանկարծ չչնչաց Գոհարը. Հէքօն ուրախացաւ, սառուցը ասես կոտրուեց, ու եռանդով չարունակեց.

— Միրուքը ինչի՞դ է, անխելք երեխայ, Հէքօն քահ քահ ծիծաղեց, ապա կռացաւ Գոհարի ականջին ու չչնչաց խորհրդաւոր կերպով.

— Էնպէս տղայ բերես, ասլա՛ն. հին քացախը թունդ կ'ըլնի:

Ու Հէքօն հաճոյքով զգում էր, թէ ինչպէս Գոհարի ձեռքը բռնուած թռչունի պէս դողդողում է իր ափի մէջ. երիտասարդ կնոջ այդ խռովքը քաջալերիչ էր. պառաւը հրճւում էր, սակայն Գոհարը յանկարծ դուրս քաշեց ձեռքը, թռաւ ոտքի եւ առանց մի բառ արտասանելու, սլացաւ դուրս:

— Բաղդիդ քացի մի՛ տուր, կանչեց յետեւից Հէքօն:

Իսպառ մութ էր:

Պառաւը նստած մնաց խո՛րը մտածմունքների մէջ. նա ամխոներից ի վեր ծրագրել էր այս գործը. եւ այժմ չէր կարող ասել, թէ լաւին հասաւ նպատակին, բայց եւ յոյսը չէր կորցնում:

Նա հասկանում էր, որ երիտասարդ կինը հեշտութեամբ իր կեանքը չի կապի մի հալիւորի հետ: Ժամանակ է պէտք, աշխատանք ու համբերութիւն:

— Ջէյրանը չը պէտք է խրտնացնել, չչնչաց նա:

Գործի գլխաւոր դժուարութիւնը եղնակին համոզելն էր. անիրաւը գլուխ դէմ չէր տալիս. քանի քանի անգամ խօսք էր բացել աղաչել, խնդրել, պահանջել, ու միշտ էլ անյաջող: Եղբայրը երկու ոտքը մի սօլի մէջ դրած՝ կրկնում էր՝ «չեմ ու չեմ»:

Եւ որչափ յամառ էր եղբօր մերժումը, նոյնքան եւ աւելի կամակոր, մոլեգնօրէն վճռական էր Հէքօն եղնակի դիմադրութիւնը կոտրելու համար: Կանացի բոլոր իր ճկուն ու բազմածալ խմացականութիւնը, իր չը մաշուած կորովը, իր տոհմի յարատեւութեան կատաղի կիրքը փոխ առ փոխ գործի էր դնում իր ծերացած եղբօր կամքը մտրակելու համար: Հաշուի իսկ չէր առնում եղբօր տարիքը, եւ

այն՝ որ գուցէ դժբաղդ ծերունին անդառնալի կերպով այլեւս անզօր է ժայթքող աղբիւրից խմել:

Հէքօի փոյթը չէր:

Նա հրաչք էր սպասում. Աստուած ինչպէս կարող է Մեչանենց օջաղի ծուխը մարել, օրհնուած յարկը ցրիւ տալ:

Եւ յետոյ եղբօր մերժումն ու յամառութիւնը տարբեր էր. նա խօսում էր ամօթից:

Ի՞նչ կ'ասի աշխարհը:

Ծերի ամօթխածութիւն կեանքի մեղսաւոր թրթիռի առաջ, որ թւում է անողոք խորան երկինք նայող հոգու ճակատին:

Ի՞նչ փոյթ, Հէքօն ըմբոստ է այդ ամօթի, այդ երկչոտութեան դէմ:

Թո՛ղ ամուսնանայ եղբայրը. ի՛նչ վնաս, երեխայ կը լինի, լաւ, չի լինի, է՛հ, Աստծու կամքն է:

Եւ այսօր նորանոր հնարներ է նիւթում կամակոր եղբօրը համոզելու:

Գոհարի հետ խօսելուց յետոյ՝ նա նոր ոյժ է ստացել, ու նոր թափով պայքարի է պատրաստւում:

Պառաւը երկար նստած մնաց, երկար որոճաց տիրական միտքը, որ բեւեռի պէս հոգու մէջ էր մխուած:

Գիշեր էր արդէն, երբ Եղնակը գիւղամիջից տուն դարձաւ:

Տանը ճրագ չը կար. խաւարի մէջ լսւում էր մէկի հեծեծոցը:

Եղնակը կանգ առաւ չուարած:

— Ցիսո՛ւս, Ջրի՛ատոս, կոչեց նա, Հէքօ, ա՛յ Հէքօ:

Պատասխան չը կար:

Հէքօն աղիողորմ հեծկլտում էր:

Եղնակն առաջացաւ մութ խոռվքի մէջ ու մօտեցաւ, ձեռքը քրոջ ուսին դրեց.

— Վա՛հ, ի՞նչ ես լալիս, քո՛ւրիկ:

— Ի՛նչ եմ լալիս, ես չը լամ, ապա ո՞վ լայ, ջուրը տանի Հէքօին, ծնունդս սեւ ըլնէր, իսկի չը ծնուէի. էս օջաղի ցաւն եմ լալիս. դաշտից անասուններն եկան չարան-չարան ու միտք արի, թէ էս ծով հարստութիւնը ո՞ւմ պէտք է մնայ, չներոց գէլերոց կ'ըլնի, ու սիրտս լցուեց:

Հէքօն նորէն հեկեկաց:

Եղնակը մտածկոտ ու մռայլ, նստեց քրոջ կողքին:

— Աստծու կամքն է քո՛ւրիկ, լացով ի՛նչ կ'անես. առանց Աստծու, մարդուս գլխից մի մազ չի պակսի, փառք իրան:

— Փա՛ռք իրան, հեծեծաց Հէքօն, Աստծու ողորմութիւնը հէնց մեր գլխի՞ն կտրուեց, որ կողմը նայես, ամէն դռնից հինգ-տաս երեխայ է դուրս գալիս, Մեչանենց օջաղը ո՞վ անիծեց:

Մի չատ խօսելով ու ընդհատ ընդհատ հեծեծալով, Հէքօն վերկացաւ ճրագը վառեց, Եղնակը մնաց նստած, գլուխը քաշ ու մռայլ:

— Փառք Աստծու ի՞նչդ է պակաս, չարունակեց Հէքօն, ձեռքդ, ոտքդ տեղը, ոյժդ տեղը. աչքիդ լոյսը՝ վառ ճրագ, չէնք ու չնորքով տղամարդ ես,

ինչո՞ւ չ'ամուսնանաս, բալքի Աստուած մի լոյս է հասցնում:

Եզնակը պատասխանի փոխարէն նորէն ըստ սովորութեան բռնեց իր ճերմակ միրուքը.

— Վաթսուն վեց տարին, հանաք չի քո՛ւրիկ, էս տարիքիս, էս միրուքով ու մազերով մէկ էլ ժամ երթամ, գլուխս խաչ աւետարանի տակ դնե՞մ... Հէ՛քօ, գժուե՞լ ես, ի՞նչ կ'ասի աշխարհը, էս գիւղը:

— Ի՞նչ կ'ասի աշխարհ, ի՛նչ ուզում է թող ասի. դու ի՞նչ կ'ասես, դո՛ւ, ի՞նչ խաբար պիտի տանես էն կեանքում պապերիդ, ո՞ւմ ես թողնում նրանց օջաղի կրակն ու ճրագը. ո՞վ պիտի հոգայ նրանց հոգու խունկն ու մոմը, էս աշխարհից մի վախեցի, էն աշխարհից վախեցի:

— Էհ, մի հոգացող կ'ըլնի, Աստծու դրած կարգով մի հոգեզաւակ, մի հալալ կաթընկեր... հը՞, քուրիկ, ի՞նչ կ'ասես, չարունակեց Եզնակը քաղցրութեամբ, ի՞նչ կ'ասես, մեր էս ամօթով, աշխատաւոր տղան լաւ հոգեզաւակ չի՞ լինի:

— Ո՞վ:

— Սէթօն, էլի՛, մեր հօտաղը. մի քիչ էլ ազգականն է:

Հէքօն միայն անունը լսեց, մնացած խօսքերը ականջի բզզոց էին. նա սաստիկ ցնցուեց, գունատուեց ու մնաց քարացած ասես մի անասելի հրէշ տեսաւ յանկարծ:

Պառաւը լուռ էր. Եզնակին թուաց, թէ քոյրը կակուղ է, իր ասածի մասին խորհում է, ու քաջալերուած, չարունակեց.

— Տասն տարի է խեղճ տղան էս օջաղի մէջ

քրտինք է թափել, ոսկոր մաշել, հարազատի պէս. բերանը մաքուր, խելօք, Աստծու օրհնած գառ'. լաւ հոգեզաւակ կը լինի, հէնց Աստուած է հասցրել:

Պառաւը չարունակում էր լուռ նայել եղբօրը. քանի դնում, աչքերը լայնանում էին, կուրծքը բարձր ու ցածր էր անում պայթելու չափ, նա չընչարգելւում էր: Եզնակը՝ թիկունքով դէպի քոյրը նստած, չէր տեսնում քրոջ անասելի խռովքը: Ու մէկ էլ յանկարծ մոլեգնած պառաւը իր միակ ոտքի վրայ մի ոստիւն գործեց, յայտնուեց եղբօր առաջ ու դէմքը Եզնակի դէմքին մօտ, շատ մօտ, չէշտ հայեացքը նրա աչքերի մէջ, բերանը ծամածռուած ու թունոտ, օձի պէս ֆչչացնելով խոպոտ ու կատաղի ձայնով կոչեց.

— Գրողը տանի քո Սէթօն, լսո՞ւմ ես, գրողը տանի քո հոգեզաւակը, հարամու գնդակին ռաստ գայ:

— Հէ՛քօ...

— Հա՛, չար հրեշտակը զարկի նրան, չան զարմը, թաղեմ իր բոյը, թոյն կը տամ, ա՛յ, կը տեսնես, լեզի կը խմացնեմ ու չանսատակ կ'անեմ, իմ հօր տունը, իմ պապերի գերեզմանը չեմ տայ իմ հօտաղին, չե՛մ տայ, չե՛մ տայ, չե՛մ տայ...

Պառաւը ճչում էր, յետ-յետ քաշւում, առաջ գալիս թափով՝ ասես եղբօր վրայ յարձակուելու համար:

— Գժուեցիր՝ Հէքօ՛:

Հէքօն անճանաչելի էր. աչքերը բնից դուրս էին ընկել, ունդնները լայնացել, դէմքը կապտել ու նա

անհնարին յուզմունքի մէջ հեւում էր ու հայհոյում, անիծում ու սպառնում:

— Թոյն կը տամ ասում եմ, թոյն կը տամ, ճըչում էր նա, խելագար պտոյտներ գործում բակի մէջ բռունցքը սպառնագին օդի մէջ ցցած.

— Հէ՛քօ, Հէ՛քօ, ուշքի արի, ամօթ արա, հարեւանները ձէնդ կը լսեն:

— Թո՛ղ լսեն, սաղ աշխարհին կ'ասեմ, որ կը թունաւորեմ էդ չան ձագին, կը թունաւորեմ, ու կրակ կը տամ էս տանը, որ չուն ու գէլի բաժին չը լինի, դո՛ւ, դու էլ գնա խաբար տար մեր մեռելներին:

— Հէքօ, ի սէր Աստուծոյ էս տունը մի խայտառակիր:

— Ա՛ խալխ, է՛յ հարեւաններ, Մեչհանենց օջաղը տալիս ենք մեր հօտաղին, հա՛, հա՛, հա՛...

Հէքօն քրքջաց երկար ու այլանդակ, ապա ծիծաղը լացի փոխուեց, ու պառաւը հեծկլտալով կամացուկ նստեց յատակին:

Եղբայրը մօտեցաւ, քնքշութեամբ բարձրացրեց նրան, բերեց-իր կողքը նստացրեց:

— Ա՛յ Հէ՛քօ, այ քո՛ւրիկ, դէ մի խօսք էր ասացել, ինչի՞ ես քեզ սպանում, երկինքը մեր գլխին փուլ բերում. հօ մի խօսքով Սէքօն չը դարձաւ հօդեպատակ. որ չես ուզում, Թող չը լինի. դու էլ էս օջաղի զաւակն ես, խօսքի կէսն էլ քեզ կը պատկանի, քո սրտովը չի, գանց անենք. էդ խորհուրդը Թող քարի տակը մնայ:

Հէքօն դեռ երկար վշվշում էր, ապա կամաց-կամաց հանգստացաւ եղբօր բարի յորդորներով. ու

իր հերթին, վերստին լինքը դարձաւ դէպի եղնակը.

— Վաղ Թէ ուշ՝ ամէնքս էլ մեռնելու ենք, ա՛խպէր, ամա անխոնկ, անտէր գերեզմանն է զուլում. ոտքդ պագնեմ ախպէր. խալխի խօսքին ականջ մի դիր, քարը վէշիդ Թափիր. Գոհարը կին չի, ոսկի է, աղուորիկ, սիրուն, աշխատասէր Թառլան կնիկ է. դու չը պիտես, ես գիտեմ — ախպէր ջան — իմ մինուճար ախպէրը, մեր ձեռքը չոր գետին մի Թող, Հէքօն սրմունց եղբօր կողքին քնքշութեամբ ու փսփսուկով շարունակեց.— գիտե՞ս, էսօր բերնի զոլն առայ — դամարը կակուղ է, լսի՛ր ինձ, կնիկ հօ չի, ծո՛վ: Երեխան վէշի տակ հազըր է, հարիւր տարեկան հալիւորին կրակ կը տայ, ուր մնաց՝ քո՛ղ, որ վառք Աստծու, սարի պէս տղամարդ ես:

Երկար խօսում, երկար համոզում էր Հէքօն: Եղբայրը լսում էր լուռ, մտածկոտ:

— Ի՞նչ կ'ասի աշխարհը Հէ՛քօ, իմ երեխի տեղն է, խախք ու խայտառակութիւն:

Հէքօն չէր լսում ու շարունակեց Գոհարի գովքը:

— Ասում եմ էէ՛, մէջքը դալար, կուրծքը փարթամ, ինչպէս հասած շամամ, բերանը միշխից կլիսած նուռ, որ ծիծաղում է, մարդու խելք է գըլլում, աչքերը՝ բոց ու կրակ, շարմաղ մարմինը բաղ ու բաղչայ. բոյիդ մեռնիմ ա՛խպէր, ինձի Թա՛ղիր, ամա էդ Թառլան հարսից ձեռք մի քաշիր, մեղք է, Աստուած է դրել քո ճամբին. Մեչհանենց աստղը Գոհարի ծոցումն է, ամէն երեկոյ հօ մեր տանն է, ինչ կը լինի մի անգամ նայիր նրա բոյ ու բուսաթին:

Եղնակը դարձեալ լուռ էր, ու ձեռնափայտով

խաչխչում էր գետինը. վերջում կամացուկ հարցրեց.

— Միչտ Գոհարն է՞ մեր աչխատաւորը:

— Հա, հա, Գոհարն է, միայն նա:

Հէքօն կախուել էր ուսից, սպասում էր պատասխանի, հեւալով, անհանգիստ, խռովայոյզ:

Եղնակը դարձեալ լուռ էր:

Բակի դուռը չառաչեց. հօտաղները դաչտից եկան անասունների հետ:

— Անիծուիք դուք, ի՛նչ ժամի հասան, մոմբոց Հէքօն ատամների արանքից:

Լուռթիւն տիրե՛ց . . . . . .

. . . . . .

Այն գիչեր եղնակը երկար, երկար սպմոս կարդաց, չատ ուչ պառկեց, եւ մինչեւ լոյս թաւալ էր տալիս անկողնում. վերմակը բոց դարձած, այրում էր նրա մարմինը:

III

Ջուլհակ Մընօի տունը գիւղի ծայրին է:

Բակը պատ չունի:

Փոքրիկ խրճիթը մեն-մենակ ցցուած է հովերի ու աչխարհի առաջ:

Կտուրը ցածրիկ է. ցեխէ պատերը կորաքամակ ու խորտուբորտ. գետնի խոնաւութիւնը կրծել է պատերի հիմքը ու չրջանաձեւ խորը վէրք բացել չէնքի կողերին:

Ջուլհակ Մընօն, եօթանասունն անց մի ծերունի, անձրեւից գոյացած ցեխերը հաւաքում է, ու

տնքտնքալով բերում է, կոյտ կոյտ չարում խրճիթի աւեր հիմքերին:

Ծերունու կողքին հող ու խիճերի հետ խաղում է իր փոքրիկ թոռը, մօտ երկուս ու կէս տարեկան Սօսին:

— Պա՛պի, ես էլ ցեխ բերեմ, թոթովում է մանուկը, իր փոքրիկ թաթիկների մէջ մի բուռն կաւ լցրած, պարզում է ծերունուն:

— Հա, բալիկ ջան:

Պապիկն ու թոռնիկը ժպտում են իրար. մայր մտնող արեւի ցոլքերը խաղում են նրանց ճակատին:

Ծերունի ջուլհակը իր ցանցառ ու ճերմակ մի-բուքը ու իր երկար մազերը երեկոյեան հովին տըւած՝ թռչունի պէս կարկատում է իր բոյնը:

Աչունը հեռու չէ. ձիւնը կը գայ չուտով:

Սակաւախօս ու մռայլ ջուլհակ Մընօն իր միակ որդու եւ կնոջ մահից յետոյ, իսպառ քաչուեց աչխարհից իր փոքրիկ թոռան ու իր այրի հարսի՝ Գոհարի հետ, ու նրանց համար միայն պահեց իր խօսքն ու ժպիտը:

Թոռը իր չառաւիղն էր, հարսը՝ իր մեռած զաւակի փոխանակը:

Աչքերի լոյսը նուազել է, բայց էլի չի թողել իր հին արհեստը, ջուլհակութիւնը. ինքը կտաւ է դործում, հարսն էլ աչխատում է այս ու այն հարեւանի տանը, կամ դաչտ է գնում քաղհանի ու ապրում են:

Երբ հարսը հեռու է, ծերունին է նայում ու խնամում Սօսիկին: Մանուկը կապուել է ծերունուն, նոյնքան, որքան իր մօրը, սիրում է գիրկը նստել, միրուքի հետ խաղալ ու անվերջ թոթովել: Մռայլ

ու թախծոտ ծերունին երեխայի պէս զուարճանում է մանկան հետ, թոթովում է նրա պէս, ու կատարում նրա բոլոր քմահաճոյքները:

— Պա՛պի, ա՛ռ էլի ցեխ. Սօսիկը պարզեց ծերունուն իր թաթը, ուր մի փոքր ցեխ կար:

— Առնեմ, առնեմ, մատաղ բալիկին, ու երկսով էլ ծիծաղեցին:

Արեւը մայր մտաւ. ծերունին իր եւ թոռան ձեռքերը լուաց բակի անձրեւաջրով, ապա միասին ներս մտան խրճիթը: Նա ճրագը վառեց, թողեց որ երեխան վազվազ անի, իսկ ինքը գործահորը մտաւ եւ ձեռք առաւ մըքուքը:

Երկու սանրերը համաչափ չրխկոցով բարձր ու ցածր են անում ծերունու ոտքի չարժումով եւ մըքուքը, արագավազ մկան պէս՝ յետ ու առաջ է սլանում թելերի արանքից:

Սօսիկն իր խոշոր, անմեղ աչքերը լայն բացած, հետեւում է պապի աշխատանքին, եւ ամէն անգամ, որ ծերունին մի վայրկեան դադար է առնում, ոեւէ թելը շտկելու, անուշութեամբ ասում է.

— Զըխկ արա՛, պապի, էլի չըխկ արա:

— Հա, բալա-ջան, չըխկ անեմ իմ Սօսիկի համար. ա՛յ, ա՛յ, կտաւ չինեմ բալա, ճերմակ կտաւ չարխին, բարխին, աշխարհին, մինչեւ որ մէկն էլ ինձ համար կտաւ չինի:

Կրկին չարժւում են սանրերը բարձր ու ցածր, կրկին մըքուքը սլանում է թելերի միջից եւ կտաւը հիւսւում է:

— Էն մուկը տուր ինձ պա՛պի, Սօսիկը պահանջում է մըքուքը:

— Մատդ կը կծի, բա՛լա ջան, թող խաղայ էս տեղ, ա՛յ, եկաւ, գնաց, եկաւ, գնաց:

Արդէն դուրսը խոպառ խաւար էր, ու դեռ գոհարը չը կար. ծերունին զարմացած է, հարսը երբեք այդքան ուշացած չէր: Ի՞նչ պատահեց. ամէն անգամ մըքուքը ձգելիս, ծերունին աչք է ածում դուռը:

Գոհարը չը կայ:

«Ինչո՞ւ ուշացաւ», մրմնջում է ծերունին:

Երեխան վազ-վազ արեց խրճիթի անկիւնից՝ անկիւն, միակ սիւնի շուրջը պտոյտներ գործեց, թռչունի պէս ճլւաց, ձի-ձի խաղաց պապի գաւազանով ու ձանձրացաւ, կանգ առաւ, շուրջը նայեց, ղրանը, պապին, ապա չրթունքները ուռցրեց ու կանչեց լացակամած.

— Մա՛յրի՛կ, մա՛յրի՛կ...

— Հիմա կը գայ, մատաղ բալիկին, հիմա կը գայ մայրիկը, հանգստացնում էր ծերունին, ու կրկին մրմնջաց՝ «Ինչո՞ւ ուշացաւ»:

Երեխան ականջ չը կախեց պապի յորդորներին, լալով վազեց դէպի դուռը, բացեց, վախեցաւ խաւարից, կանգնեց չեմքին, ու կանչում էր.

«Մա՛յրի՛կ, մա՛յրի՛կ»...

Պապը այս անգամ թողեց գործահորը, ոտքի ելաւ, երերուն քայլուածքով ու կռացած, մօտեցաւ թոռանը, գրկեց, համբուրեց եւ իր ծեր բազուկների բոլոր ոյժը հաւաքեց, բարձրացրեց, սղմեց գրկին ճերմակ մի լուք սպիտակ ծաղկի պէս նրա մատաղ դլխին փռելով.

— Հիմա կը դայ մայրիկը, մատաղ լինիմ բալիկին:

Սօսին լալիս էր. արցունքի խոշոր կաթիլները մարգարիտների պէս ցայտում էին աչքերից, քաշ էին ընկնում երկար թերթերունքներից, ապա կամացուկ գլորւում իր վտիտ այտերով.

— Հիմա մայրիկը կը դայ ջանիդ մատաղ, դէ մենք էլ արի ձի–ձի խաղանք. կ'ուզե՞ս բալա. այ պապին կը լինի ձի, բալիկը՝ ձիաւոր, ու կը քշի. ասաց ու չորս թաթ արեց, երեխային իր թիկունքին կրեց, ու դժուարութեամբ, ցաւագին ճիդով, իր ծեր, չորացած ծնկների վրայ, պտոյտ էր անում սեան չուրջը, ձիու պէս խրխնջում էր, դուարճացընում թոռին: Երեխան լացը մոռացաւ, նա երջանիկ էր պապի թիկունքին, քրքջում էր անվերջ, փոքրիկ թաթերով խրում էր գլխին, ճերմակ մազերն էր քաշում, միրուքն էր բռնում ինչպէս սանձ, կամ ծափ էր տալիս խելայեղ հրճուանքով. երջանիկ էր եւ ծերունին, ծնկները ցաւում էին, սրունքները մղկտում, յոգնած էր, ու տնքում ամէն մի շարժումին, սակայն տանջանքի հաճոյքով տանում էր իր բեռը, որ ծեր օրերի չող երազն էր, իր կեանքի վերահաս ձմրան յետին վառ ցոլքը:

Իր ծեր ոսկորների ցաւը չէր զգում, այլ տարփանքը ցաւի, ու քաշ էր տալիս իր փլչող մարմինը յատակին, տրորում էր ծնկները՝ միայն Սօսիկը քրքջա՛յ, քրքջա՛յ...

Ու մանկան ծիծաղը որպէս զանգակի թրթիռ թափանցում էր ծերունու հոգին, վառում էր ցուրտը, իշխում մահին:

— Հուռ՛ւ, իմ բալիկը ձին կը քշի, դա՛հ, դա՛հ, ասում էր ծերունին:

Երեխան թաւ էր տալիս ոտները, սրունքներով հարուածում էր պապի չորացած կողերին ու քրքջում, քրքջում.

— Հուռ՛ւ, Սօսիկ բալան ձին կը քշի, սարով կ'երթայ, ձորով կ'երթայ, դա՛հ, դա՛հ...

Երեխան պինդ–պինդ քաշեց ծերունու մազերը, ու մի վայնջ մնաց մատների արանքը. ծերունու վոյթը չէր. գերագոյն հաճոյքը կար, Սօսիկի քրքջը, որ հնչւում էր նրա գլխին, որպէս երկնային նուագ:

— Հուռ՛ւ, սարով կ'երթայ, բարով կ'երթայ, դա՛հ, դա՛հ:

Սօսիկը ծափ էր տալիս:

— Պա՛պի, դա՛հ–դա՛հ, պա՛պի, դա՛հ–դա՛հ, գնա՛ պապի, վազի պապի, ձի արա, դա՛հ–դա՛հ:

Դուռը բացուեց, ներս մտաւ Գոհարը ու կանգ առաւ զմայլուած այս սրտայոյզ տեսարանի առջեւ:

— Մայրի՛կ. Սօսիկը թռաւ պապի թիկունքից, վազեց դէպի մայրը, որ գրկեց նրան, բարձրացրեց, անհուն զեղումով կրծքին սղմեց, ասես երկար ժամանակի կարօտով:

— Դու վիս մայրիկ, ինչո՞ւ ուշացար:

— Լաց եղա՞ր, բալա:

— Հա, շատ լաց եղայ:

— Ուշացար որդի, ասաց ծերունին. աչքս ջուր կտրեց, երեխան լաց եղաւ, յետոյ ձի–ձի խաղացինք, հանգստացաւ:

Հարսը չը խօսկան էր սկեսրարի հետ, գլխի ու

ձեռքի անորոշ շարժումները արեց հասկացնելու համար, թէ գործը շատ էր այսօր: Ծերունին պահ մի նստած մնաց յատակին, յոգնած էր, ապա վերկացաւ կռացած ու երերալով նորից գործահորը մտաւ ու մըքուրը ձեռք առաւ: Հարսը երեխան տարաւ պառկեցրեց, ապա կարն առաւ ու անձայն նստեց ճրագի առաջ:

Լռութիւն էր:

Միայն ջուլհականոցի երկու սանրներն էին մեղմիւ ու համաչափ շրխկում ու մըքուրը գնում էր գալիս թեթեւ քստոցով:

Ծերունին դադար առաւ. թելերը խճճուեցին:

— Հա՛րս ջան, բա՛լաս, մէկ էս թելերը շտկիր, ծերութեան տէրը մեռնի, աչքերս մաշուր չեն անում:

Գոհարը շտապով վերկացաւ, խառնուած թելերն իրարից զատեց ու կրկին նստեց ճրագկալի տակ կարը ծնկին:

Կարում էր, բայց անուշադիր, մի քանի անգամ ձեռքը ծակեց, ականջների մէջ տակաւին եռում էր Հէքօի ձայնը. վորձում էր մոռանալ լսածը ու իր հոգու խաղաղութիւնը գտնել, ի զո՛ւր, պառաւն աչքի առաջն էր, նրա խօսքերը կրակի պէծինների պէս խաղում էին իր գլխի շուրջը: Գոհարը անհանգիստ ձեռքով քաշքշում էր իր գլխակապը վար, որպէսզի կեսրայրը իր շառագունած այտերը, իր դաւաղիր յոյզը չը տեսնի:

Մի քանի անգամ նա ծերունուն նայեց, գաղտագողի, նայեց ու գլուխը քաշ ձգեց. ծերունու

ճերմակ միրուքը իր ամբողջ ուշադրութիւնը բռնեց:

«Եղնակի միրուքն էլ այդպէս ճերմակ է, ու այդպէս երկար» մտածեց նա ու կծկուեց:

Ցուրտ էր զգում:

Վճռեց այլեւս չը նայել... ու դարձեալ նայեց:

Ապա իրականութիւնը այս նմանութեան հանդէպ ախտաւոր դարձաւ:

Գոհարը ամբողջ մարմնով սարսռաց, ցուրտ քրտինքը կոխեց ճակատը:

Մըքուրը գնում էր գալիս, սանրերը չխկում էին համաչափ, ճերմակ կտաւը երկարում էր հա՛ երկարում:

— Վայ, թելն էլի խճճուեց. հա՛րս, բա՛լաս, մէկ էլ շտկիր էդ անտէրը. աչքերս չեն լոկում:

Հարսը նորէն թռաւ տեղից, թելերը զատեց իրարից ու կրկին իր տեղը նստեց:

Ուշ գիշեր էր արդէն, երբ ծերունին դուրս եկաւ գործի հորից, ու տնքտնքալով գնաց Սօսիկին նայեց, կռացաւ, պաչեց ու կամացուկ քաշուեց իր անկիւնը, անկողին մտաւ: Հարսը ղրան էր սպասում, վերկացաւ, ճրագը մարեց, ապա խաւարի մէջ հանեց զգեստները չտապ-չտապ ու խրճիթի հակառակ կողմում Սօսիկին գիրկն առաւ ու մնջեց:

Գոհարը երկար ժամանակ անքուն էր, հոգին ալեծուփ. այս օրը վոլթորկի պէս անցաւ նրա գըլխով: Նորէն Հէքօն առջեւը կանգնեց իր ծիծաղով, իր յորդորներով, իր ձայնով, իր փսփսուկով, «էնպէս տղայ բերես, ասլան»...

Ո՞վ, եղնա՞կը պիտի տայ էդ տղան...

Ձերմակ միրուքով եզնա՞կը:

Հալիւո՛ր... հալիւորից ի՛նչ տղայ:

Իր սկեսրարի միրուքն էլ ճերմակ է:

Հայր է ախր:

Ու ախտաւոր պիղծ մտածումը ագռաւի պէս իր հոգու վրայ թառեց ու կացեց. երկու ծերերի պատկերն իրար խառնուեցին, երկուսն էլ սպիտամօրուք, երկուսն էլ պառաւ, ո՞րն է եզնակը, ո՞րն է Մընօն. Թօխալ Հէքօն աղբարար է, հէքիաթների խնոցի հեծնող պառաւ:

Ո՞րն է եզնակը...

Եզնակը հարուստ է:

«Խեչանենց ծով հարստութիւնը... դու էլ մէջը թագուհի», Հէքօն ասաց:

Թագուհի՞...

Խեղճ Մընօ, ո՞վ պիտի չակի խճճուած թելերդ:

Շալակել էր Սօսիկին, ձի-ձի էր խաղում:

Զմեռն այնպէս ցուրտ է Մընօի խրճիթը:

Սօսիկը Խեչանենց ծով հարստութեան մէջ:

«Բալա ջան», չչնչաց նա, քաշեց երեխան իր բազուկների մէջ, մոլեգնօրէն կրծքին սղմեց, ասես ուզում էր իր հոգու մէջ թաղել, պահել նրան վերահաս վտանգից:

«Ծով հարստութիւնն ա՛յս է, Սօսիկը. ինչի՞ն է պէտք Խեչանենց հարստութիւնը, ինչո՞ւ է եզնակը տղայ վինտռում իր ծով հարստութեան մէջ:

«Ծեր մարդը աւելի կը սիրի ջահիլ կնկան... Դու թագուհի, ես աղախին ... տղաղ էլ կը բերես» ... նորէն լսուեց Հէքօի ձայնը:

Պառաւի խօսքերը ակօս էին բացել նրա սըր-

տում, ուր ահագին ճեղքուած կար, որ արիւն-արցունք էր ժայթքում...

Մտածումներից անկախ՝ սիրտը լալիս էր ծածուկ:

Իր մատաղ կեանքն էր, իր թրթռուն, իր յուրթի ջահիլութիւնը, իր հարուստ ու բեղուն մայրութիւնն էր, որ ծառանում էր մտրակուած ձիու պէս, իր չքեղ մարմնի կիզիչ հրապոյրների վրայ Հէքօի չորացած մատները ցուրտ ձիւն էին չաղ տուել. Թչուառ պառաւը հաւատացած է, թէ ձիւնի մէջ վարդ կը բուսնի:

«Միրուքը ճերմակ, քանի՛ տարեկան...»

Գոհարը նորէն ցուրտ զգաց, ու մրսեց:

Ստինքների տակ մի բան եռաց ապա իջաւ իջաւ, ողջ մարմինը բռնեց, կրկին քաշեց Սօսիկի վերարուն, անուշահոտ մարմինը իր բազուկների մէջ, սղմեց կրծքին, մանուկը բնազդօրէն ձեռքերը մօր ծոցը տարաւ, իր փոքրիկ, գանգրահեր գլուխը թաղեց մօր փարթամ ստինքների մէջ ու մուշ-մուշ քնեց: Երեխայի գոլ ու թեթեւ չունչը խտտղում էր մօր կուրծքը հեչտանքով. մայրը հոտոտում էր որդու խոպոպները, անուշահոտ գարուն էր. արեւի բուրաստ մի ցոլք, որ ծաղկել էր իր ծոցում:

Ծո՛վ հարստութիւն... հրէշ է Հէքօն, իր խօսքը չար սատանայի քրքիջ. ո՛չ, ո՛չ, Գոհարը իր վատ գարունը չի դնի պառաւ եզնակի չորացած ու ցուրտ բազուկների մէջ: Ձիւնի մէջ վարդ չի բուսնի:

«Աւելի լաւ, եզնակը քանի՞ տարի պիտի ապրի՛ անխե՛լք. հարստութիւնը ծով, ու դու թագուհի...»

Ո՞վ չէր նկատել խաւարի մէջ այս անողոք ճշմարտութիւնը, սրտի դրան յետեւը ո՞վ է նստած:

Հէքօն չի՛. ո՞վ է, ո՞վ է Աստուա՛ծ իմ:

Ու երիտասարդ կինը սոսկումով տեսաւ, որ խաբում է ինք իրան: Ներոյկը վառւում էր. ողջակէզը պատրաստ էր ու ցաւի տարփանքով սրտի պատառուածքը ճոթռեց իր ձեռքով, թողեց, որ արցունքը հոսի, հոսի ու վերջանայ. ու արցունքը կրակի կաթիլներով հոսեց, նա հեծկլտաց ուժգնութէն, կոկորդը խեղդւում էր արցունքի առատութիւնից, կուրծքը բարձրանում էր ու իջնում հառաչանքի թաւիով, ատինքները թրթռում էին իրար գուրգուրող աղաւնիների պէս, հեծկլտանքը խեղդելու համար, նա բարձը ատամներով կծոտեց, վերմակը դլխին քաշեց: Ի զո՛ւր, ողջ խրճիթը դողում էր նրա խորունկ, սրտապատառ հեկեկոցից:

Ծերունի ջուլհակը լսեց լացի ձայնը, ականջ դրեց, նստեց անկողնում, աւելի լարեց լսողութիւնը, հասկացաւ, որ հարսն է լալիս:

«Ջահիլ որբեւայրի է, ի՛նչ ասեմ, մրմնջաց նա խաւարի մէջ, ֆալա՛գ, տունդ քանդուի, ինչպէս իմ տունը քանդեցիր»:

Մեռած որդու կսկիծն էր եռում իր յոգնած ու մաշուած սրտում:

Գոհարը լալիս էր սակայն ո՛չ իր մեռած ամուսնու համար, ո՛չ իր խեղճութեան. ինքն էլ չը գիտէր, թէ ինչո՞ւ է լալիս, ու թւում էր նրան, որ մէկը՝ մի անանուն հրէշ, սուր մագիլները թաղել է իր միսերի մէջ, ծուատում, արնոտում է իր սիր-

տը, եւ Գոհարը անկարող է թափ տալ իրան եւ ազատուել:

IV

Երբ երեկոյեան եղնակը այդուց տուն դարձաւ, մի վայրկեան կանգ առաւ քարացած:

Գոհարը դեռ բակում աշխատում էր:

Ծերունին մռայլուեց ու յօնքերը կիտեց:

Հէքօն հիւանդ էր. Գոհարն աւելի վաղ էր դալիս աշխատանքի, ու աւելի ուշ հեռանում:

Այդ գիտէր եղնակը, դիտմամբ ոտքը քաշ էր ձգել այդում, ուշացել, որ նրան չը պատահի:

Ու մութ երկիւղով տեսաւ, որ սովորականից շատ աւելի վաղ է եկել հակառակ իր կամքի:

Հասկացաւ իր ներքին տագնապը, գաղտագողի դործող իր հոգին բռնեց ու մռայլուեց:

— Նահլա՛թ քեզ, չա՛ր սատանայ, ասաց, անցաւ Գոհարի առջեւից առանց նրան նայելու. չտապով ներս մտաւ, հիւանդ քրոջ վիճակը հարցրեց ու դրեթէ անմիջապէս դուրս եկաւ, նստեց իր սովորական տեղը, բարձրադիր թմբի վրայ, չիբուխը պատրաստեց, սպասելով եկեղեցու զանգի ձայնին:

Մինչեւ վերջին օրերը եղնակը այս կնոջ ներկայութիւնն իսկ իր յարկի տակ չէր նշմարել:

Գիտէր, որ մի կին ամէն օր գալիս է Հէքօին օգնելու տնտեսութեան մէջ, բայց բնաւ ուշք չէր դարձրել ու նրա ո՞վ լինելն իսկ չը գիտէր:

Եւ թէ նո՞յն կինն էր գալիս ամէն օր, թէ՝ փոփոխւում էին աշխատաւորները. այդ նրան բնաւ չէր զբաղեցրել:

Հէքօի գործն էր այդ։

Այն օրուանից սակայն, որ Հէքօն Գոհարի անունը տուեց ու գովքն արեց, ծերունին իր հոգու խորքում մի վատ խռովք է զգում, որից վախենում է եւ մանաւանդ ամաչում։

Նա դարձեալ հնազանդ է իր բաղդին, իր մենութեան մէջ, յաճախ է կրկնում ինքն իրան, «գըլուխդ ցած կախիր, եզնակ, ձիւն է գալիս»։ կըրկնում է, որպէս իր ճակատագրի անդարձ դատավճիռ, բայց Գոհարի ներկայութիւնն իր յարկի տակ նրան անծանօթ ու տենդոտ մի խռովքի աղբիւր է։

Սկզբում նա ինքն իր վրայ խնդաց։

«Հէ՛յ ջահիլութի՛ւն... աղամորդի, քո տունն աւերուի, դու էլ հօ մի բան չես, վերջացրեց այս անգամ իր մտածումը. հա՛ էն պառաւ Մարալը, հա՛ դու»։

Ինդաց ինքն իր վրայ, ու հաւատաց, որ կեանքն իրենից բաժանող երկաթէ դուռը անյայտ ձեռքեր փակել են անդարձ։ Գոհարն իսկ իր բոլոր մատաղ ու հզօր հրապոյրներով անկարող պիտի լինի չարխի ֆալագը յետ դարձնել, բաղդի փակ դրան վրայ փոքրիկ ճեղք բանալ։

Հաւատաց, բայց ներսում, մի հեռաւոր անկիւնում ծուխ կար. կրակ էր մխում մի տեղ, չ'ապրած կեանքը, խեղդուած կրքերը իրար վրայ երկար ժամանակ կուտուած կանաչ տերեւների պէս կամացուկ վառւում էին առանց կրակի։

Վառւում էին եւ Եզնակը երբեմն կուրծքն էր տրորում կրակը խեղդելու համար։

— Հէ՛յ ջահիլութի՛ւն... դու էլ հօ անմահական ղուշ ես, Թռար ու Թռար։

Մի հէքիաթ յիշեց, մի սիրուն հէքիաթ. հեռու, հեռու մի աշխարհում, սարերից ծովերից էն կողմը, անտառներ կան դիւթական, ուր աղամորդու ոտքը չի դիպել. անմահական ջրով մի աղբիւր կայ այնտեղ. ով որ հասնի ու խմի, թէ հարիւր տարեկան էլ լինի, կը դառնայ ջահիլ տղայ։

Երկաթէ կօշիկ հագնել, երկաթէ դաւազան ձեռք առնել ու գնալ, գնալ... հուռւ, ցնդուած հալիւռը։

— Հէ՛յ ջահիլութիւն, անմահական ղուշ ես դու Թռար ու Թռար...

Ինդաց ինքն իր վրայ, բայց ներսում մի տեղ ծխրտում էր, հա՛ ծխրտում։

Աշխարհից ծածուկ՝ պայքար ունէր. կեանքի ու մահու պայքար։

Նա աւելի սակաւախօս դարձաւ, դրսից գիւղամիջից քաշուեց, գլուխը քաշ մտածում էր. եւ մտածումը մերթ կախարդական աղբիւրն էր, որ անմահութիւն էր տալիս, մերթ ձմրան ձիւնը, որ մաղւում էր գլխին, մերթ Գոհարն էր, մերթ իր պառաւած գոմէշը, Մարալը, որ խոտը հազիւ հազ լմլմացնում է։

Տնից փախչում էր այդի, ապա ջրաղաց, կրկին այդի։ Աշխատում էր երեկոյեան ուշ տուն դառնալ, որ Գոհարին չը հանդիպի։

Եւ միշտ՝ սովորականից վաղ էր տուն գալիս, զանազան պատրուակով եւ միշտ էլ զայրանում իր արածի համար։

Այսօր էլ նոյնն էր:

Ճարը կտրած՝ վճռեց չիբուխը վառել ու դուրս դնալ փողոցում սպասել եկեղեցու զանգի ձայնին:

Չիբուխը սակայն դժուար էր պատրաստուում. արեթը չէր գտնում, կայծքարը չէր գործում. նա աւելի մոայլուեց ու զայրացաւ:

Ու չը գիտէր, ո՛ւմ դէմ է զայրոյթը, Գոհարի՞, որ միանգամայն անտարբեր դէպի ծերունին, աշխատում էր, թէ՞ իր չիբուխի, որ այսօր թարսի պէս գլուխ չէր գալիս:

— Անտէր մնաս, ու նա թափով կայծքարին զարկեց, չիբուխը պատրաստեց, քաշեց թափով վրայ-վրայ, ծուխը պալան-պալան բարձրացաւ:

Եղնակը հաղաց մի քանի անգամ:

— Ի՛նչ գառն է անիրաւ ծուխը, ասաց ու իսկոյն զգաց, որ հազը ծխից չի, այլ հէնց այնպէս, հազաց:

— Ջահրումա՛ր, պատասխանեց ինքն իր հային:

Գոհարը կովն էր կթում, ու ասես բնաւ չէր լսում:

— Վերջացնում է երեւի, հիմա կը մեկնի, մըտածեց Եղնակը, ու գոհ մնաց, որ կը մեկնի. թո՛ղ կորչի գնայ չան աղջիկը, մոմռաց նա ատամների արանքից, նահլաթ քեզ չար սատանայ...

Եկեղեցու զանգը ճնկճնկաց:

Եղնակը ցնցուեց, ոտքի ելնելու թեթեւ չարժում արեց, ու նորից մնաց նստած:

«Այսօր յոգնած եմ», ասաց մտովի. կ'ուզէր սակայն, որ զանգի ձայնը չուտով դադարի, նրան

թւում էր՝ թէ մէկը կանչում է իրան յամառ ու խիստ ձայնով: Եւ այդ կանչողը ժամհար Սօղոի կերպարանքն առաւ, վիզը ծուռ, մէրուքը անցառ ու խճճած, աչքերը հանգած, մի սեւ չապիկ հագին, քաչքչում է թելերը եւ ձեռքի ամէն չարժումին փոքրիկ գլուխը ցնցւում է այնպէս, ասես ժամաւորներին համարում է գլխի նշանով:

Զանգը չարունակում էր ճնկճնկալ:

— Գրողը տանի քեզ, դէ բօլ է էլի· զայրոյթը ժամհարի դէմ էր:

Այդ անհաճոյ կանչը խլացնելու համար նա նորէն բարձրաձայն հազաց մի քանի անգամ:

Ի զուր:

Թւում էր, թէ ժամհար Սօղոն յատկապէս եզնակին է կանչում իր զանգի ղօղանջով:

Գնա՞լ, թէ չը գնալ· վարանում էր:

— Հա՛յ, քո տունն աւերուի աղամորդի, դու էլ հօ... ի՞նչ ասեմ:

Ու չիբուխը նորէն չրթունքին դրեց, նորէն ծուխը քուլա-քուլա բարձրացաւ ու աչքերի առջեւ ամպ կապեց. Եղնակը ձեռքով ցրեց ծխի ամպը:

Ուզում էր նայել անասուններին. ու յանկարծ նորէն բռնեց գաղտագողի գործող իր հոգին:

Եղնակը միայն Գոհարին էր նայում, նրան ինտռում իր ծեր աչքերի վերջին ոյժը լարած:

Ահա կինը կովկիթը ձեռքին բարձրացաւ ու մի կովից անցնում է միւսին:

Գոհարը նայեց դէպի պատշգամբը, ուր նըստած էր Եղնակը, ասես զարմացած, որ նա այնտեղ

է, նայեց գաղտագողի, մի վայրկեան, միայն մի վայրկեան, ու լաչակը չտապով քաշեց վար, այտերի վրայ:

Կատարուեց աներեւակայելին:

Կեանքի փակ դրան առաջ մուրացիկի պէս սրթսրթացող ծերունին յանկարծ ասես կախարդական աղբիւրը գտաւ ու խմեց պապակած շրթունքներով, մաշուած սրտի խորքից մի դողդոջ բարձրացաւ տաք ու խեղդող, որ լայնացաւ ու ծաւալուեց նրա բոլոր երակների մէջ. մեծաւոր ծուխը կարմրեց բոցերով. ներսը վառուում էր, ինչպէս հնոց, ձեռքը ու ոտքը դողդողում էին մահու սարսուռով:

Եզնակը ծնկների վրայ բարձրացաւ աւելի լաւ տեսնելու համար երիտասարդ կնոջ դալար ու չքնորհալի հասակը, նրա նուրբ իրանը, որ նրա ամէն մի չարժմանը երեւում էր վարթամ զիստերի վրայ, որպէս նոճին հովի առաջ:

«Գոհարը նայեց ինձ»... Սատանան բռնեց Եզնակի երկու ուսերը, ցնցում էր կատաղօրէն, աչքերին նայում ու հրճւում. ամօթն էր եռում իր հոգում, ամօ՛թ, ամօ՛թ...

Նահլաթ քեզ սատանա!

«Անամօ՛թ, լիրբ, մոնջաց նա ատամների արանքից, ի՞նչ ես ուզում ինձանից»:

Եզնակը իր միրուքն էր քաշքշում ջղաձգօրէն իր ծերութիւնը, իր առաքինութիւնը խարանող տապնակի մէջ. յետ ընկաւ խորտակուած, ճակատը բռնեց, գլուխը քաշ ձգեց թշուառ գայթակղութիւնը չը տեսնելու համար:

Ու վճռեց այդպէս մնալ, մինչեւ այդ «անառակ կինը» կորչի հեռանայ:

Գլուխը քաշ ու ոչնչացած՝ նա լսում էր սակայն Գոհարի թաւչեայ ձայնը, երբ նա քաշում էր հորթուկը մօր ստինքներից. կայտառ, փոքրիկ անասունը տեղի չէր տալիս, դունջը կաթոտ, գլուխը ցնցելով, նորէն նետւում էր դէպի մայրը. Գոհարը նրա պարանը բռնեց, քաշ տուեց յետեւից ու կապեց ցցին, նորից կուվկիթն առաւ ու կովի տակ կռացաւ:

Եզնակը վերստին գլուխը բարձրացրեց ու նայում էր այս անդամ աւելի համարձակ, աւելի բացերես. նա կծոտում էր շրթունքները, չորացած լեզուով քիմքն էր չարչարում ու նայում էր ագահօրէն երիտասարդ կնոջ մինչեւ արմունկները հոլանի բաղուկներին, որոնք համաչափ շարժումով վեր ու վար էին անում եւ մատների արանքից ֆչչոցով փրփրուն կաթն էր ծորում, ինչպէս լոյսի ցնցուղ. ապա նրա հայեացքը կետրոնացաւ երիտասարդ կնոջ հարուստ զիստերին, որոնք փչչող ալիքների պէս դալարուն, երկու կողմից պահում էին գեղանի իրանը:

Նայում էր ու սպասում, որ երիտասարդ կինը վերստին ոտքի ելնի. այնքան խենթացնող վայելչութիւն կար նրա չարժ ու ճեւի մէջ:

Զանգը նորէն ճնկճնկաց:

— Գրողը տանի քեզ Սօղո, կրկնեց Եզնակը ու ամաչեց իր խօսքից. նա յիշեց, որ այսօր Աստուածածնի նախատօնակն է եւ վաղը խաղող օրհնէք, յիշեց ու կծկուեց:

Ու այդ հանդիսաւոր սուրբ ժամին Եզնանենց

Եղնակն ամօթն ու Աստուած մոռացած, իր այծերը հասակին, սպիտակ մէրուքով, հարեւանի հարսին է աչք տնկել չան պէս: Ջահիլ հարսին, որ իր զաւակի տեղն է:

— Մեղա՛յ քեզ Աստուած, մեղա՛յ քեզ, անամօթ, զզուելի ծերուկ, արածդ ի՞նչ է, գրողը տանի քեզ Հէքօ, էս ի՞նչ արիր, անիծուիս դու:

Ահա Գոհարը բարձրացաւ: Նրա իրանը ձգուեց վեր ուղղաձիգ չինարի պէս, ու յանկարծ՝ երբ կըռացած դատարկում էր կովկիթը, նորէն գաղտագողի նայեց Եղնակին:

Նկատեց այդ Եղնակը, ամբողջ մարմնով դողում էր մահու սարսափից:

«Տէր, Տէր, մրմնջում էր նա պատի տակ կծկըւած, որպէս անապաստան ճամբորդ, Տէ՛ր, կորայ, կորայ, ների՛ր ինձ. Տէր, չարը խափանիր, ես հող ու մոխիր, ես անզօր մեղաւոր եմ, Տէր, հարուածիր ինձ, որ չորանամ նստած տեղումս, Տէ՛ր, Տէ՛ր...»

Խօսքերը սրտից չէին գալիս. նա աղօթում էր ու հետեւում Գոհարի բոլոր շարժումներին:

Ահա Գոհարը գործը վերջացրած՝ պատրաստւում է մեկնել:

«Հիմա կը գնայ, մտածեց Եղնակը, թող գնայ, թո՛ղ հեռանայ, Հէքօին կ'ասեմ, որ էս կնիկն էլ մեր տունը ոտք չը կոխի. չարի ծնունդ է, թո՛ղ գնայ, թող գնայ...»

Այս մտածումը սփոփեց նրան, մեղաւոր տագնապը մեղմեց, ու կ'երթայ եկեղեցի, քահանային կը խոստովանի, թողութիւն կը հայցի:

Գոհարը գնալուց առաջ, ներս մտաւ Թոնրատունը, Հէքօի մօտ:

Եղնակի աչքը այդ դրանը մնաց, ուր ծածկուեց պեղանի կնոջ պատկերը:

— Ո՞ւր կորաւ նորէն, Թո՛ղ գնայ հեռանայ էս անզգամ կնիկը:

Ասաց ու նորէն չրթունքները ուժգնօրէն կծոտեց ու արնոտեց:

Հոգու խօսքեր չէին իր ասածը, այլ սատանայի. ու նորից նա սպասում էր Գոհարին մի դիւական ու ախտաւոր իղձով, որ Թանձրանում, ծաւալւում էր նրա ներսում, ինչպէս դիշերուայ խաւարը: Հոգու մէջ զարթնած մի հրէշ մղում էր նրան մօտիկից, շատ մօտիկից տեսնել Գոհարին, բռնել նրա ձեռքը, չօշափել նրա թեւը, ուսը, զգալ նրա մարմինը, թէկուզ աչխարհը որոտ ու կայծակ դառնայ ու գլխին ճայթի:

Տեսնել այս երեկոյ, անմիջապէս:

Խաւարի մէջ թաղել էր իր ծեր խիղճը, իր հին օրերի հաւատը, իր Աստծուն. աղօթքը վանել էր չրթունքից, երկիւղը սրտից եւ վախը հոգուց:

Գոհարին հասնե՛լ...

Ու ցած իջաւ պատշգամբից, իջաւ թափով, ինչպէս կորովի, առնական երիտասարդ, առաջացաւ մինչեւ բակի դուռը. ծնկները դողդողում էին, ամբողջ մարմինը սրթսրթում էր տենդից բռնուածի պէս, ատամներն իրար էին զարկւում, ու նա լսում էր սեփական սրտի թրթռոցը, մի անյայտ ձեռք ծանր օթակով հարուածում էր կրծքին... Քետ-յետ գնաց ու յենուեց դրանը:

Քարացած էր խաւարի մէջ, աչքը Թոնրատան դրանը յառած: Ու յանկարծ ուզածն ու անելիքը մոռացաւ. չը գիտէր, ի՞նչպէս եւ ինչո՞ւ յայտնուեց բակում. անհնարին կսկիծ ունէր ու չը գիտէր ինչի՛ համար. երկաթէ նիգերով մի ահագին դրան առաջ է, որ ուզում է բանալ, եւ որ չի բացուի երբեք:

Այժ չունի, ծեր է, վաթսուն եւ վեց տարեկան. միայն ծեծել կարող է այն դուռը իր թշուառ, չորացած ձեռներով. զօրել չի կարող, եղունգներով չանգռում է ու արիւնոտում:

Գլխում վժժոց է. եղնակը այդ մտքերի ժխորի մէջ փնտռում է հիմնականը, իչխողը, մոռացել է ամէն ինչ. գիտէ միայն, որ այստեղ կանգնած պիտի մնայ ժամեր, նոյնիսկ ամբողջ գիշերը եւ պիտի անթարթ նայի դէմ ու դէմի դրանը:

Ինչո՞ւ պիտի նայի. այդ էլ չի յիշում. գիտէ միայն, որ հիմնական միտքն այնտեղ է, այն դրան յետեւը եւ ինքը՝ Մեչանենց եղնակը էլ ամօթ չունի, չուն է, չնանում է... Շնանում է ու ահագին կսկիծ ունի ներսում:

Սպասի՛ր, ինչո՞ւ այսպէս:

Եղնակը փնտռում է եղնակին, ինքն իրան ու չի գտնում. օրուայ անցքերը փոթորկի բերան ընկած տերեւների պէս տարուում են վայրագ ոլորտներով, փախչում են խելայեղ թափով:

Նա փորձեց սկսել առաւօտից. խուսափող յուշերը իրար յետեւից բռնեց, ինչպէս թուխսը երեկոյեան մէկիկ-մէկիկ հաւաքում է մոլորուած ճագուկները:

Առաւօտի՛ց. ասես իր կեանքի սկիզբն էր առաւօտը: Հա՛, այգումն է... խաղողները հասել են ... իծապտուկը կախուել է հողերի մէջ, ճիւղերի տակ ձողեր է տնկում որ չը փթին... խարջին ուշացել է այս տարի ... հարսնամատը դեղնել է ու կախուել սաթի պէս... տէրտէրի համար նշանակուած որթը կարմրել է բոսոր արիւնի պէս. հաղորդութեան գինին է այն... խնձորենին ասես տնքում է պտուղների ծանրութեան տակ, ճիւղերը կախուել են մինչեւ գետին... նրանց տակն էլ ձողեր է տընկում Եղնակը... երեկոյ է արդէն, լաւ կը լինի հորթերին մի փոքր խոտ քաղի տանի... ժամանակ կա՛յ, ա՛յ, արեւը կախուեց... բարդիների ըստուերները աճդահա դարձան. մարդ վախենում է... ... չէ՛, ժամանակ չը կայ խոտ քաղելու հորթերին, մինչեւ քաղեմ, ցա կ'երթայ... աւելի լաւ, ցնդա՛ծ ծերուկ, թո՛ղ գնայ... դժուե՞լ ես, ի՞նչ է... աշխարհն ի՞նչ կ'ասի... չէ՛, աշխարհը չէ՛, հոգի՛դ, հոգի՛դ... Հէքօն ասում էր... ի՞նչ էր ասում Հէքօն ... Հէքօ՞ն...

Թոնրատան դուռը բացուեց. կանացի մի ըստուեր դուրս եկաւ. եղնակի մտքերը պարզուեցին, դմխում իչխող խաւարը ցրուեց ինչպէս կայծակի փայլով: Նա՛ է... նա՛ է... Գոհարը: Նրան է սպասում եղնակը:

Մութ է, կինը չի տեսնում դարբասի առաջ կծկուած մարդուն:

Գոհարը չտապով առաջացաւ ու երբ կախուեց դարբասի սողնակից բանալու համար, յանկարծ ղոյդ բաղուկներ խաւարի մէջ նրա իրանը գրկեցին:

Կինը սարսափից ճչաց ու նուաղելու վրայ էր:

— Մի վախեցի՛ր... ե՛ս եմ Գոհար, չչնչաց Եղ-
նակը իր թեւերի մէջ պինդ պահելով նրա դողդո-
ջուն մարմինը:

Գրկել է, ու չը գիտէ, ո՞ւր տանի այդ թրթռուն
բեռը, խօսք չունի եւ ո՛չ չարժում. քարացել է, ու
ճիպ է անում Եզնակը նորէն թոթովում:

— Ես, ես, Գոհար... դու նայեցի՛ր, հա՞...

Գոհարը ցնցուեց, թափ տուեց իրեն ու դուրս
պրծաւ նրա բազուկներից, յետ-յետ քաշուեց ան-
խօս, ու մնաց անշարժ հեւալով.

— Գոհա՛ր, գիտես ի՞նչ... ա՛յ, էս բոլոր կայք
ու հարստութիւնը ... բոլո՛րը, բոլո՛րը քեզ ղուր-
բան ... ես էլ, ես էլ... Գոհա՛ր, վախեցա՞ր հաա՞
... քար առ գլխիս զարկ ... Հա, Մեչանենց տունը
մեռնում է, օջաղի վրայ ջուր կ'ածե՞ս... ինչո՞ւ
մարի օջաղը, մեղք է ախր, հոգուդ մեղք է... հո-
գուս, իմ հոգուն մեղք եղա՛ւ, հա՞, Գոհար...

Խօսքերը թափւում են Եզնակի շրթունքներից
ինչպէս տենդային զառանցանք. ու նա նորէն տա-
րածեց բազուկները, խաւարի մէջ փնտռելով Գո-
հարի գիրգ մարմինը... կինը չը կար, նա թափով
բացեց դարբասը եւ անյայտացաւ գիշերուայ ծո-
ցում:

Եզնակը մնաց կանգնած, կամացուկ յետ-յետ
գնաց, մէջքը պատին տուեց, աչքերը խփեց ու ե-
րազում էր:

Կատարուեց, ինչ որ չը պիտի կատարուէր:

Ցեսո՞յ...

Փոթորիկ է այս, որ յաղթ, հաստաբուն կաղ-

նին հալիւ տանի, ի՞նչ անի փթած, պառաւած ծա-
ռը:

Հա՛, հա՛, Գոհարն էր իր բազուկների մէջ:

Ցեսո՞յ...

Գեղանի կնոջ կերպարանքը նրա աչքի առաջն
էր, այդ դալար, թրթռուն պատկերը, որ ամբողջ
կեանք է ու կրակ, անմահական աղբի՛ւրը...

Կարո՞ղ ես վառ պահել այդ կրակը, թշուա՛ռ
ծերուկ:

Ի՞նչ անեմ, մեր բաղդի տէրն ո՞վ է:

Գետին ընկած վիրաւոր կռունկն ինչո՞ւ է նա-
յում երկնքից թռչող երամին. կաթից կտրած մա-
նուկն ինչո՞ւ է փնտռում մօր ստինքները, անտա-
ռում մոլորուած ճամբորդը ինչո՞ւ է իր հայեացքը
բեւեռում մայր մտնող արեւի վերջին ցոլքին...

Երկար կանգնած մնաց:

Ո՛րտեղից՝ որտեղ իր մանկութիւնը եկաւ աչքի
առաջ. յիշում է ... Մի օր հօրից խռոված՝ ճիշտ
այսպէս երեկոյ, դուրս թռաւ տնից ու կծկուեց այս
պատի մութ անկիւնը. հայրը փնտռում էր, կանչում
էր, իսկ նա ձայն չէր տալիս, որ հայրն անհանգիստ
լինի, վախենայ:

Երազ օրե՛ր...

Ցեսոյ այլ անցքեր ու պատկերներ խուռներամ ե-
կան ու անցան նրա աչքի առաջից թռչունների խու-
ճապած երամի պէս, ու յանկարծ կուրծքն ուռաւ,
ուռաւ ու փլաւ. առանց հեծկլտանքի արցունքը
թափւում էր աչքերից:

Կամաց կամաց աղեկտուր խռովքն անցաւ, հո-
գին հանդարտուեց. մի անծանօթ ու կաղդուրիչ

մչուշ նրա ողջ էութիւնը բռնեց. մի խաղաղ, անյոյզ երջանկութիւն իջաւ վրան, մի քաղցր անէացում, նա կար ու չը կար, երկու կացութիւնն էլ հաւասարապէս երանաւէտ: Մարմինը չը կար այլեւս. հոգին էր մենակ, որ լողում էր հրաշագեղ հորիզոններով, անբիծ եթերի մէջ, ուր չը կար ո՛չ դայթակղութիւն, ո՛չ կիրք ու ոճիր, ո՛չ ախտաւոր տենչանք եւ ո՛չ կսկծալի ապաշաւանք: Մա՞հն է այս... Ի՞նչ լաւ է... օրհնուած լինի ծերութիւնը...

. . . . . .

Երբ Եղնակը աչքերը բացեց, օր ցերեկ էր. անկողնում պառկած էր, ու մի կողմում նստած էր սանամէրը Ալմաստը, որ պատկից հարեւան էր Խեչանենց եւ միւս կողմում Հէքօն, կիսահիւանդ ու տնքտնքալով.

— Ծոռանամ ես, վշվշում էր պառաւը ծնկները ծեծելով. էս ի՞նչ սեւ բերիր մեր գլխին ա՛խպէր ջան:

— Աչքերը բացեց, փառք Աստծոյ բան չը կայ, ասում էր Ալմաստը. բարով խէրով ամէն բան անցաւ, Եղնակ ամի, լաւ վախեցրիր ամէնքին, հարեւան բարեկամ, սաղ գեղը սգւորել է... Խեղճ Հէքօն, որ էն պատի ծակից ճուաց, սիրտս կտրուեց. վազեմ ի՛նչ. տնաշէն, ընկել ես դրան առաջ ճակատիդ վրայ... ուշաթափուել. ախր էս ի՞նչ էր...

— Ի՞նչ էր ախպէր, ձէն տուր, մեռայ էէ՛... կրկնեց Հէքօն. լուսաբացին դաշտ գնացող հօտաղները խաբար տուին, սեւն ինձ տանի. դամ ի՛նչ տեսնեմ, Ալմաստ քուրիկ. երեսի վրայ ընկած, ճակատը պատռած արիւնը ծորում է... վազեցի պատի ծակից հաւար քցեցի քեզ, լաւ հասար. սեւ ըլնէր իմ ծնած օրը. աչքս կուրանար չը տեսնէի. Հէքօն գոգնոցով աչքերը սրբեց:

Եղնակը նայում էր շուրջը, նայում էր երկու կանանց. ձեռքը ճակատը տարաւ, կապած էր ու ցաւում էր...

Ցիշում է կամաց կամաց, դիշեր էր ... խաւար... Նա դուրս եկաւ Թոնրատնից... իր բազուկների մէջ էր ... փախաւ ... յետո՞յ ... հա՛, յետոյ ընկաւ մեռաւ...

Ի՞նչ լաւ էր այդ բոլորը:

— Հէ՛քօ, կովերը կթե՞լ էք:

— Կով կթելու ժամանակ չի ա՛խպէր, կէսօր չը կայ:

— Հա, հա, իրիկունը կը կթէք, Ալմաստ բաջի մեր կովերը կը կթե՞ս, մեղք են, պէտք է կթել:

— Կով կթող կայ, Եղնակ ամի, ասաց խնդալով Թէլլին, Գոհարը մի թափով քսան կով կը կթի:

— Հա, հա, Գոհարը կը կթի ... օղորմի իր հօրը... Խե՛ղճ հնիկ, որ նա չը լինէր, ի՛նչ պիտի անէինք:

— Դարդդ է՞դ է մնացել. մի կով կթող միչտ կը ճարուէր, ա՛խպէր, ցաւդ ասա՛, ցաւդ տանեմ, ախր էս ի՞նչ սեւ էր բերիր մեր գլխին, ի՞նչ պատահեց քեզ:

Եղնակը չէր լսում, լուռ նայում էր դրանը մէկին սպասելով:

— Ձէն տուր էէ՛, ճչաց Հէքօն լացով, ախր մեռանք... էս ի՞նչ ղաղայի ես ոաստ եկել:

— Սհաթ անցաւ դէխովս, քո՛ւրիկ... սհաթ անցաւ... բան չը կայ, լաւ եմ:

— Հալբաթ սըհաթ է, իրաւ է քուրիկ... ասաց Ալմաստը, Ցխո՛ւս Քրիստո՛ս... Հէքօ բաջի սրբի բան է, ուխտ պիտի երթաք, հէնց որ եղնակ ամին վեր կենայ: Ո՜ նա երեսը խաչակնքեց:

Եղնակը չարունակում էր դրանը նայել անթարթ:

— Ի՞նչ ես նայում ախպէր:

— Ինտեղ ուրիչ մարդ չը կա՞յ:

— Ո՞րտեղ:

— Ա՛յ էն դրան յետեւը:

— Չէ, չէ, ախպէր, ո՞վ պիտի լինի:

— Հա. դէ որ չը կայ, դուք գնացէք, թողէք ես հանդստանամ. լաւ եմ. Հէքօ դու էլ հիւանդ ես քուրիկ, գնա՛ պառկիր:

Եւ երբ երկու կանայք անհանգիստ վարանումով ու իրար նայելով դուրս գնացին, նստեց անկողնի մէջ, ձեռքերը տարածեց, աղօթում էր:

«Ների՛ր Տէ՛ր, ներիր, թէ փորձութիւն էր, ա՛յս էլ բաւական է, տե՛ս հանդած մոխիր եմ, պիղծ մոխիր, թող հանդստանամ... Թո՛ղ որ հոգիս անարատ բերեմ քեզ, Տէ՛ր, Տէ՛ր...»

Ու եղնակը խորտակուեց անկողնում, վերմակը ղլխին քաշեց ու դառնօրէն հեծկլտաց:

Նա այնպէս թշուառ էր ու այնպէս մենակ:

V

Գիւղի բոլոր կտուրների տակ զրոյցի նիւթը նոյնն էր.

«Եղնակ ամին ծանր հիւանդ է»:

«Եղնակ ամին չի ապրի, կը մեռնի»:

«Ի՞նչ պիտի դառնայ Խեչանենց ծով հարստութիւնը»:

Լուր տարածողը միշտ կաքաւ Թէլլին էր:

Մի գիւղ է, մի կաքաւ Թէլլի, երկուսը չը կայ:

Կարճահասակ, վտիտ ու ջղուտ պառաւ, խորը փոքրիկ աչքերով, որ անվերջ պրպտուկի մէջ են. մանրիկ քայլուածք ունի, կաքաւի չորոր, Թէլլին ամբողջապէս իր այդ քայլուածքի մէջ է, կաքաւ Թէլլին:

Բոլոր ամուսնութիւնների ծածուկ վարպետուհին է. բոլոր տների վեր ու դիրը գիտէ, բոլոր նըշանարանների գաղտնիքը:

Երբ առաւօտը վաղ, կաքաւ Թէլլին, ցոլալով անցնում է փողոցով, ամէնքը գիտեն, որ «Թազայ խաբար կայ» գիւղում:

Եւ նրա լուրերը միշտ աղմկայոյզ. կաքաւ Թէլլին սակայն սխալուեց:

Եղնակ ամին չը մեռաւ. չուտ կազդուրուեց ու ոտքի ելաւ:

Եւ քիչ յետոյ՝ յանկարծ ամուսնացաւ Ջուլհակ Մընօի հարսի, սիրուն Գոհարի հետ...

Սա արդէն լուր չէր, այլ աւերիչ փոթորիկ, մի չը տեսնուած կայծակ, որ յանկարծ ճայթեց գիւղի վրայ եւ ամէնքին չչմեցրեց: Գիւղը եռում էր, ինչպէս վառ հնոցի վրայ լի կաթսան, ու լուր բերողն այս անգամ կաքաւ Թէլլին չէր, այլ տատմէր Ամմասը, Խեչանենց պատկից հարեւանուհին:

Այն օրը Թէլլին քիչ մնաց նուաղի, երբ այս

լուրն առաւ. նա նախ քարացաւ զարմանքից, ապա անիծեց գիւղին, չը գիտէր ինչո՞ւ, հայհոյեց, չը գիտէր ո՞ւմ. ապա ծիծաղեց, թէ այդ անկարելի է:

— Բաս Թէլլին մեռել է էլի, որ էս գեղում ա–մուսանութիւն կատարուի առանց նրան:

Ու լուսաբացին Թոնրի կրակը թողած՝ հեւիհեւ սլացաւ դէպի Խեչանենց տունը. գնում էր, ու ինքն իրան խօսում.

— Սո՛ւտ է, սո՛ւտ է... բա Թէլլին մեռե՞լ է...

Հասաւ, Խեչանենց դարբասին մօտեցաւ. փակ էր, ծեծեց, բացող չեղաւ:

Շուարած էր, անցաւ Ալմաստի տունը:

— Բարի լոյս Ա՛լմա՛ստ բաջի, աղջի Խեչանենց դարբան ինչի՞ է փակ էս օրը կէսօրին:

— Ինչի՞ է փակ, հալբաթ փակ կը լինի, թազա–պսակները դինջանում են...

— Ի՞նչ... ի՞նչ ... թազապսակնե՞րը...

— Հա՛, հա՛, Եզնակն ու Գոհարը ամուսնացան:

— Վայ քո ծամը կտրեմ Գոհար, թազեմ քեզ Եզնակ:

— Հա՛, կաքաւ Թէլլի, առանց քեզ արին, ուշա–ցա՛ր:

Թէլլու դէմքը ծամածռուեց զայրոյթից:

— Օղորմի քո հօրը, Ալմաստ բաջի, ախր ի՛նչ–պէս էէ՛... Բա, էդպէս էլի՛... բա ախր... Թէլլին մատներն է ճմռում:

— Ի՞նչ ախր ... էս դիշեր, Եզնակ ամու ու Գո–հարի կանաչ կարմիրը կապեցին Թոնրի վրայ. էն ճպռած անամօթը, Ջուլհակի հարսը... է՛լ ի՛նչ կ՚ա–սես... քանդուի էս ժամանակ. ո՞վ էր տեսել էսպէս

բան. ախր Գոհարը Եզնակին աղջիկ կը սազի:

— Վա՛յ հողն իմ գլխին, օխտանասուն տարե–կան քաւթառ հալիւորը ու էն Ջահիլ հարսը. բա քո տունը չինուի, Ալմաստ բաջի, ի՞նչպէս մինչեւ երէկ ձէն–ծպտուն չը լսաք էն անտէր ծակից:

Թէլլին ցոյց տուեց պատի ծակը, որ պինդ գոց–ուած էր վալասով:

— Ի՛նչպէս չէ, քանի օր է, կռիւ էր ախպօր ու քրոջ մէջ. անամօթ հալիւորը երկու ոտքը մի սօլի մէջ դրած՝ կպել էր Հէքօին, թէ «կ՚առնեմ ու կ՚առ–նեմ Գոհարին»... Խե՛ղճ Հէքօ, լացեց, մղկտաց, ա–ղաչեց...

— Ականջ դրիր, լսեցիր էլի՛... Վայ էրուես դու հալիւոր, կնկայ գերեզմանին հալա խոտ չի բուսել ու էդպէս անամօթութի՛ւն...

— ... Հա՛ էն էի ասում, շարունակեց Ալմաս–տը, հոգուս մեղք ելաւ, ականջ դրի էն ծակից, դէ՛, հարեւան ենք ... Խեղճ Հէքօն էնքան աղաչեց, պա–դատեց. «ա՛խպէր, ասում էր, ձեռք քաշիր էդ բէաբուռ կնկանից. ախր քեզ ի՛նչ կը սազի էդ ծեր հասակիդ պսակուել, էն էլ մի Ջահիլ հարսի հետ, ամօ՛թ է, ախր Աստուած չի վերցնի, խաղք ու խայ–տառակ կը լինենք աշխարհի առաջ». ո՞ւմ ես ա–սում, անիրաւ հալիւորը հէնց էն է, որ կրկնում էր՝ «կայ չը կայ Գոհարն է, կ՚առնեմ»:

— Վա՛յ, վա՛յ, վա՛յ... սեւ ըլնի էս այամը:

— ... Հա՛, խեղճ Հէքօն էնքան լացեց, էնքան մղկտաց, աղաչեց, պաղատեց, չեղաւ. անիծուած հալիւորը չուդի կատու էր դարձել, իր ասածն ա–րեց ու էս գիշեր ծոց–ծոց ելան Գոհարի հետ...

Ալմաստը ձայնը ցածրացրեց, ինչ որ չընչաց ու երկով էլ խնդացին:

— Ալմաստ բալի, քո հօրն օղորմի... բա էդ հալիւորը ... ախր ի՛նչպէս...

Ալմաստը նորէն քչփչաց, նորէն ժպտացին խորհրդաւոր կերպով:

— Գրողը տանի քեզ եզնակ, չար հրեշտակին թուչ գաս. Ալմաստ բա՛լի, օղորմի քո ծնողացը, ապա մէկ արի Հէքօին կանչենք:

Երկու պառաւները կամացուկ մօտեցան պատի ծակին, դուրս քաշեցին վալասը:

— Հէքօ բալի, ա՛յ Հէքօ բալի, ձայն տուեց Թէլլին:

— Ո՞վ է, լսուեց Հէքօի ձայնը պատի միւս կողմից:

— Ե՛ս եմ, ես, Հէքօ, ձայնս չե՞ս ճանաչում:

— Թէլլի, դո՞ւ ես, խէր ըլնի, էդպէս լուս ու մութին:

— Խէր ու բարին վրադ ըլնի, Հէքօ բալի. աչքդ լոյս, սուսիկ-փուսիկ ախպէրդ պատկեցիր, էլի՞... բա, Թէլլին մեռել էր էլի՞ որ խաբար չ'արիր:

— Դէ, էսպէս եղաւ բանը, Թէլլի բալի, նեռրդ կ'ըլնես. դիտես էլի, Թոնրի պատկի դռի ու դուռնան Թոնրի մէջ է, դուրսը չի լսուի:

— Շնորհաւոր ըլնի, քո՛ւրիկ, մի բարձի ծեռանան: Կաքաւ Թէլլին այս ասելով՝ միաժամանակ հեգնօրէն նայում է Ալմաստին: Հա, բարով խէրով կնունքի ճաչն ուտենք:

— Բարով քո տղաների կանաչ կարմիրն էլ կապենք. հա, հա, կնունքի ճաչը միասին կ'ուտենք,

Թո՛ղ բարով խէրով էդ օրին արժանանանք:

— Աստուած տայ, Աստուած տայ, կրկնեցին երկու պառաւները:

— Բերաններդ տաճար է, պատասխանեց Հէքօն միւս կողմից:

Պատի ծակը փակուեց:

Երկու պառաւները յետ քաշուեցին, նախ մի վայրկեան կանգնած մնացին իրար նայելով ու ապա յանկարծ վրթիկացրին:

— Շատ կ'սպասես կնունքին, Հէ՛քօ, ասաց Թէլլին չարախինդ կերպով, քանդուած ջրաղացում մուկ չի բնակի:

Եւ պառաւները նորէն քրքրացին...

Ինչ յետոյ կաքաւ Թէլլին անցնում էր փողոցներով, ասես հրդեհածիւղ. կանգնում էր բոլոր դրռներին, ուր մի կին էր տեսնում, ու ամէնքի հետ ղրոյցի նիւթը Ներսիսենց տան մեծ արկածն էր. դիւղի յայտնի իշխանը, ամէնքին խելք ու խրատ տուողը, ամօթ, պատիւ մի կողմ էր ձգել ու ջուլհակի սիրուն, ջահիլ հարսը տուն քաշել:

Գայթակղութիւնն ահագին էր:

Ոմանք ասացին.

— Վայել չէ հալիւորին, խաղք ու խայտառակութիւն է. ուրիշները թէ՝

— Իր գործն է, իր խիղճը՝ իր Աստուած, թո՛ղ էն կեանքում պատասխան տայ:

Շատերն էլ խորհրդաւոր կերպով օրօրեցին դըլուխները ու չընչացին՝

— Հալիւորը ցնդուել է, Աստուած վերջը բարի անի:

Ջահիլները Գոհարին էին նզովում, տարիքա–
ւորները եզնակին:

Աղջկերք իրար մէջ քչփչացին, քրթմնջացին ու
խաղ կապեցին եզնակի ու Գոհարի վրայ.

Գոհարի շարմաղ ծոցը,
Եզնակին վառեց բոցը.
Օրօր–շորոր Գո՛հար ջան,
Եզնակն ըլնի էեզ դուրբան:
Խեչաճենց ձիու նալը,
Գոհարի թշի խալը.
Օրօր–շորոր Գո՛հար ջան,
Եզնակն ըլնի էեզ դուրբան:
Գոհարի երեսը բաց,
Եզնակի խելքը գնաց.
Օրօր–շորոր Գո՛հար ջան,
Եզնակն ըլնի էեզ դուրբան:

Երգը գալարում, փուում էր գիւղի փողոցնե–
րում, դաշտերում, ճամբաներում. երգում էին
խնջոյքներին, հարսանիքներին եւ ուխտատեղերում
ու ամէն տեղ՝ ուր Ջահիլ տղայ, աղջիկ հրճուանքի
ու հեղնանքի պէտք ունէին:

Երիտասարդները քրքջում էին, ծերերը մռայլ–
ւում ու գլուխներն օրօրում, պառաւները քչփչում
էին խորհրդաւոր կերպով:

Եզնակի վոյթը չէր:

Մինչեւ իր ամուսնութիւնը երկչոտ, թշուառ,
մեղսապարտ, այժմ ծառացել էր աշխարհի դէմ:

Եւ հպարտ էր:

Բաղդի բարդ հանգոյցն էր լուծել եւ մեն–մե–

նակ լողում էր հոսանքն ի վեր, անփոյթ դէպի ա–
վերից լսուող անէծքն ու աղաղակը:

Հրապարակներից քաշուեց, տան դուռը պինդ
փակեց, ու Ջահիլ սիրուն կնկայ կողքը կորեց,
նստեց:

Երբեմն փողոցներից անցնելիս նրա ականջին
հասնում էր կանանց չար քչփչոցը:

— Հողս գլխիդ, Եզնակ ամի՛, ծեր օրերին, ծա–
րը սիպտակած...

Մնացած խօսքերը կորչում էին զապուած ձի–
ծաղի տակ ու մի քանի ձեռքեր միանգամից չանչ
էին անում նրա յետեւից:

Եզնակը քայլում էր մէջքն ուղիղ, գլուխը
բարձր:

— Գրող տարածը Ջահիլացել է, չչնչում էին
կանայք. Թաուլան Գոհարը կրակ է տուել հալիւռ–
րին. տե՛ս, տե՛ս, ոնց է քայլում, մէջքը դքուել է:

Խօսեցին, բամբասեցին ու յոգնեցին:

Մէկ աղջկերանց երգը մնաց.

Օրօր–շորոր Գո՛հար ջան,
Եզնակն ըլնի էեզ դուրբան...

Եւ այդ երգն իսկ՝ Եզնակը լսում էր գաղտնի
հպարտութեամբ:

Մեղքն ի՞նչ է, կնիկ չի վախցրել գօրով. աշ–
խարհի բան է, ամուսնացել է, տարիքով մեծ է—
էհ, ինչ արած ... աղամօրդու բան է... Աստուած
այդպէս կամեցաւ:

Խորհում էր այժմ Սէթօին կամացուկ տնից
հեռացնել:

— Ի՞նչ երեխայ:

— Գոհարի երեխան, Սօսիկը:

— Տեսնո՞ւմ ես էս ճրագը, Ջուլհակ Մընօի տունն է լուսաւորում, որ մութ չը լինի...

— Գիտեմ, դիտեմ, Մընօ ախպէր, ախր գառը մօր յետեւից կ'երթայ:

— Ջուլհակ Մընօի ճրա՞գն ես եկել մարելու:

— Աստուած չ'անի... թող էս ճրագը յաւիտեան վառ մնայ, ես էն երեխին վարդի պէս կը պահեմ, հարազատ երեխս պէս:

Ծերունի ջուլհակը դառնօրէն ծիծաղեց:

— Ջուլհակ Մընօի երեխան ինչանենց Եղնա՞կը պահի. դէ կայ էս անտէր պատանս գործեմ վերջացնեմ:

— Աստուած չ'անի, Մընօ ախպէր ... դէ, ես էն եմ ասում որ երեխան առանց մօր... դու մենակ մարդ, ծերացած:

— Երեխան իր պապի մօտ է, խստութեամբ ընդմիջեց Մընօն. էս օջախի վրայ Աստծու հովանին չը կայ, ինչանենց հովանին չեմ ուզում:

Ծերունի ջուլհակը գործահօրից կամացուկ դուրս եկաւ, մօտեցաւ Եղնակին, ձեռքը նրա ուսին դրեց ու մտերմաբար ասաց.

— Դարդ մի արա', Գոհարը ջահիլ է... երեխայ կը բերի, դու լաւ խնամիր, լաւ նայիր Գոհարին:

— Աստծու կամքն է, Մընօ ախպէր:

— Աստծու կա՛մքը... Մընօն հեգնօրէն ծիծաղեց. չէ', չէ', ինչանենց Եղնակը որ ուզի, եղն էլ հորթ կը ծնի... մէջքդ դուզ է, ջահիլ տղայ ես, հոգս մի արա: Մընօն նորէն ժպտաց դառնօրէն:

Եղնակն զգաց խայթոցը: Նրա դէմքը չառադունեց, կանգնած տեղը երերաց:

— Մընօ ախպէր, չար մի խօսիր, Աստծու դրծին մի' խառնուիր. բան էր, էլաւ, անցաւ. ջահիլ հարս է, հօ տունը չէ՛ր մնայ, մի մարդու պիտի երթար:

— Հալբաթ, հալբաթ, ջահիլ հարսը մի ջահիլ մարդու պիտի գնար, ու գնաց...

Եղնակն աւելի կծկուեց. սրա համար չէր եկել նա: Փորձեց խօսքը փոխել:

— Աստուած ունես ախր, երեխան ի՞նչ մեղք ունի:

— Լսի՛ր, Եղնակ. Մընօն կտացաւ նրա ականջին գաղտնիք ասողի պէս, լսի՛ր, թէ ուզում ես Գոհարը չուտ երեխայ բերի, միրուքդ ածիլիր...

Ծերունի ջուլհակը վատ ձայնով քրքջաց. հաւատա' ինձ, Եղնակ, երեխան միրուքի մէջ է, որ կտրես դուրս կ'ընկնի...

— Մընօ ախպէր, ա՛յ Մընօ, Եղնակը յետ-յետ քաշուեց, չարժուեց դէպի դուռը:

Մընօն հասաւ յետեւից, ուսը բռնեց.

— Սպասի՛ր. նայիր ինչպէս մենակ եմ... որ կաքաւ թէլլուն տեսնես, ասա' թող հազրուի, պիտի ամուսնանանք, էգուց միրուքս կը կտրեմ, հի', հի', հի'...

Մընօն քրքջաց ծեր, խըռպոտ ձայնով:

Եղնակը փախչում էր դուրս:

— Լաւ նայիր Գոհարին, վա՛յ քեզ, թէ երեխայ բերի, վա՛յ քեզ, վա՛յ քեզ ... կոչում էր յետեւից ջուլհակը:

Դուրսը խաւար էր, գիւղը լուռ մնջում էր:
Աստղերը փայլում էին:
Եղնակը փողոցներով վախչում էր առանց յետ նայելու...

VI

Խեչանենց տան արկածը կամաց-կամաց մոռացուեց: Գիւղը հաշտուեց եղածի հետ:

Նոյնիսկ Եղնակի ու Գոհարի վրայ կապած երգն էլ աւելի եւ աւելի նուազ էր լսւում:

Անկիւնների թունոտ փսփսուկը մեռաւ. չարաբաստիկ լեզուները յոգնեցին. Եղնակ ամին էլ գաղտնի ծաղր ու ծանակի առարկայ չէր. կանայք այլ եւս չանչ չէին անում յետեւից եւ ոչ էլ հռհռում:

Տասն ամիս անցաւ:

Եւ յանկարծ մի նոր փոթորիկ:

Գոհարը մայր դարձաւ. Եղնակին արու զաւակ ծնուեց...

Հրաշքի պէս բան էր. ոչ ոք չէր սպասում, ոչ ոք չէր հաւատում:

Ի՞նչ է, Հայր Աբրահա՞մն է Խեչանենց Եղնակը:

Թաղի բոլոր կանայք, առաջինը՝ կաքաւ Թէլլին, իրար յետեւից վազեցին տատմէր Ալմաստի տունը, հարց ու փորձ, իրարանցում, զարմանք, ապշութիւն:

— Հա է, հա՛, ա՛յ հարեւաններ, հոգիս հանեցիք, հա, էս պիչեր էս ձեռքերովս Գոհարի երեխան բռնեցի. Խեչանենց Եղնակը տղայ ունի հա՛...

կոչում էր Ալմաստը հպարտ, որ գաղտնիքի առաջին իրազեկն է եղած:

Գայթակղութիւնը ահագին չափեր առաւ:

Խեչանենց տան այս «նոր բանը» ամէնքին պահում էր հեւիհեւ. վերսկսեցին չարամիտ փսփսուկները, վատ չչուկները. չրթունքներից աւելի՝ աչք ու յօնքերն էին խօսում. կէս բառեր, միտումաւոր ժպիտ, կեղծաւոր ախ ու վախ, ապա քրթմնջոց, զսպուած ծիծաղ, իրար էին խառնւում կծիկ-կծիկ օձերի պէս:

Տատմէր Ալմաստը փսփսացել էր կաքաւ Թէլլու ականջին, թէ երեխան չէկ է:

Գրեթէ նոյն օրը ամբողջ գիւղը գիտէր որ Եղնակի երեխան չէկ է:

«Հէր ու մէրը թուխ՝ երեխան չէկ»...

Եւ Եղնակը մօտ եօթանասուն տարեկան:

Բանը մութ էր...

Ու այդ «մութ բանի» չուրջը վատ առասպելներ էին ծնում մէկը մէկից չար, ինչպէս ճահճի մէջ բարձրացող պղպջակներ:

Ամբոխի այս ախտաւոր խռովքին անդիտակ՝ Եղնակ ամին մեծածախս կնունք արեց մահու դատապարտուած իր օջախի վերածնունդը տօնելու:

Զը տեսնուած կոչունք էր:

Գիւղի բոլոր իշխաններին, բոլոր իր դուռղրկիցներին, քահանայ, երեցփոխ, ժամհար, ռէս ու դպիր, հետները խնջոյքի հրաւիրեց: Խեչանենց ընդարձակ բակը լցուեց կեր ու խում անող բազմութեամբ:

Գինին առատօրէն հոսեց:

Նորածինի ու իր ծնողների կենացը խմեցին:

Քահանան օրհնեց Խեչանենց տոհմը, որ զիւղի փառք ու պատիւն է ասաց:

Հէքօն յուզմունքից լաց եղաւ:

Եզնակը իր անհուն երջանկութեան մէջ, խմեց ու հարբեց, ու համբուրում էր քահանայի ալը:

Կանանց բաժնում իշխում էր կաքաւ Թէլուի ձայնը:

— Հէ՛քօ բալի, աչքդ լո՛յս, կանչում էր Թէլլին, ամէնքիս աչքը լոյս, բարով կանաչ-կարմիրն էլ կապենք:

— Ամէնքի՛, ամէնքիդ, ա՛յ հարեւաններ, կեր՛ք խմէ՛ք, ձեր տունն է, ձեր օջաղը:

— Շէն մնա՛ Խեչանենց օջաղը, Աստուած նորածինը պահի, կոչում էին զանազան կողմերից:

Հէքօն իր անչափ յուզմունքից մի ոտքի վրայ գալարուելով, նետւում էր մերթ դէպի մէկ խումբը, մերթ դէպի միւսը ու ամէն կողմ կատակ ու խնդում ունէր, ամէն կողմ օրհնութիւն:

— Աստում էլի ախպօրս, պսակուի՛ր, Աստուած ողորմած է, մի լոյս կը բացի. ասում էր Հէքօն յուզմունքով, ու յաղթանակով:

— Փա՛ռք քեզ Աստուած, պատասխանում էին կանայք:

— Հալբաթ, Աստուած որ տուեց, կը տայ:

— Էս արդար օջաղը էլի վառ մնաց:

— Փառք քեզ Աստուած, քո ողորմութիւնն անսահման է:

— Սաղ գեղն ուրախացաւ, Հէ՛քօ բալի, ծակ բերան չը կայ, որ բարի խօսք չ'ասի:

— Դէ, եզնակ ամու փառքը, պատիւը, բարութիւնը աշխարհով մէկ է:

— Ապա երեխան, տեսնէ՛ք... Ա՛յ հարեւաններ, հրա՛շք, հրա՛շք, խօսողը տատմէր Ալմաստն է. Հէքօն չի ցոյց տալիս, որ ա՛չք չ'առնի, էնքան սիրուն է:

— Խեչանենց ջինսը սըլ-սըլան, հալբաթ որ հրաշք կը լինի, Թոռուն են Խեչանենք:

Կերուխումը չատ ուշ վերջացաւ:

Հիւրերը ցրուեցին երեկոյեան դէմ:

Զրոյցն ու ծիծաղը չարունակւում էր փողոցում:

— Ա՛յ, հալիւոր, ասում էր կալմարենց Ակուլիկը, ախր քո ի՛նչ բանն էր ջահիլ, սիրուն կնիկայ ձեռք տաս սիպտակ միրուքդ:

— Հալիւորի բանը դժար է եղել, ասաց Պօպօզ Ենգօն:

— Դժար թէ հեչտ, ամա լաւ դուրս պրծաւ, մարդը ժառանգ ունի, աֆֆէրիմ եզնակ, ասաց կուպտիկ Պօղոսը:

— Էհ, ի՛նչ ես անխելք անխելք խօսում, հաւատին հասնող կայ, վրայ բերեց կալմարենց Ակուլիկը եւ երեքով էլ հռհռացին:

— Հը՛, գարիներդ խտակ է, լաւ էք հռհռում. եզնակ ամու գինին թունդ էր հաա՛...

Խօսողը Օրդուենց Թիւնին էր. քառասունն անց, վտիտ ու ոսկրոտ մարմնով, կորաքամակ, անմազ ու գունատ երեսով մի մարդ էր. մի աչքը խպտած կոյր, միւսը՝ կխսախուփ, նրա դէմքին տալիս էին չը գիտես ինչ մի ժպտուն տանջանքի տեսք: Օրդուն

սրախօս էր, կատակաբան, նրա պարապմունքն անորոշ էր. մերթ բանուոր, յաճախ աշուղ մանածողղ, չատ անգամ դերեզմանափոր, եւ միչտ ժպտօրէն հեգնող աչխարհի չարն ու բարին:

— Թիւնի, ա՛յ, Թիւնի, օղորմի հօրդ, եզնակի երեխան ո՞ւմ նման կը լինի, դարձաւ նրան կալմաբենց Ակուլիկը:

— Առաջ քո կնկան հարցրո՛ւ, Ակո՛ւլիկ, թէ քո երեխաները ո՞ւմ են նման:

— Գրողը տանի քեզ Թիւնի:

— Ա՛յ, ենգօն, հէչ իր հօրը նման չի, հանդուցեալին տեսել եմ:

— Անիծուիս դու Թի՛ւնի. բա դո՛ւ, դո՛ւ, հօրդ նմա՞ն ես:

— Ջը գիտեմ, նման եմ թէ չէ, ամա էս գեղում չատ երեխայ կայ ինձի նման:

— Թաղեմ գլուխդ, ու մի քանի ձեռքեր մի անգամից բամփեցին Թիւնիի փափախին, որ իջաւ աչքերի վրայ:

— Ա՛յ, սրա համար է գդակս ծակ, ասաց Թիւնին, գլխարկը չտկելով, ձեր բանը ջոկէ, ձեր փափախը միչտ թազայ կը լինի, գըլխներիդ բամփող չը կայ, չորերդ էլ երկար կը դիմանայ, խելօք էք ինձնից, մի տեղ աստառով էք հագնում, մի տեղ երեսով, հալբաթ գրողը տանի Թիւնիին. չորը միչտ նոյն մի երեսով է հագին ու հարիւր տեղից բամփում են գլխին:

— Թիւնի՛, լաւ լկել ես Յեչանենց դինին:

— Լկել եմ, բա, ամա ձեզ պէս լակ տուղի վըրայ չեմ հալում. կերաք, խմեցիք, կեղծաւորեցիք,

չնորհաւորեցիք, հիմա էլ... հէ՛յ քելեխի չներ:

Թիւնին դնդնալով հեռացաւ:

Նորանոր խմբեր գրուցելով դուրս եկան Յեչանենց տնից. ամբոխը ցրւում էր եւ ամէն ոք ասես ուրախ էր, որ վտղոցում կարող է զսպուած դէչու-Թիւնը վռեել:

Յեչանենց դարբասը աղտոտւում էր...

Ամէնից վերջը գլուխ գլխի տուած, փսփսուկով գնում էին տատմէր Ալմաստն ու կաքաւ Թէլլին:

— Ատում ես երեխան չէկ է, էլի՛... հարցրեց Թէլլին:

— Էն էլ ինչպէս չէ՛կ, պատասխանեց Ալմաստը, ոսկու պէս մաղեր ունի:

— Հօրդ օղորմի աղջի, բա հէրն ու մէրը թուխ, էդ չէկ երեխան ո՞րտեղից:

— Ի՞նչ իմանամ աղջի, մօրը պէտք է հարցնել, չար ժպիտով ասաց Ալմաստը:

— Հէքօին չը հարցրի՞ր:

— Ի՞նչ հարցնէի տնաչէ՛ն, հարցնել կ'ըլնի՞:

— Էս տեղ մի բան կայ:

— Ի՞նչ բան Թէլլի՛:

Թէլլին մատը դրեց շրթունքին. Ալմաստը հետեւեց նրա օրինակին, ու երկու պառաւները ճամբի մէջտեղը կանգնած՝ նայում էին իրար աչքերի մէջ, իրար հոգին կարդալով:

Մի խօսք կար արտասանելու, մի անուն, որ շրթունք կ'այրէր, հալած արճիճի պէս. նրանց լեզուն դողդողում էր քիմքի տակ, ինչպէս մեռնող օձը, հայեացքը անշարժ, պաղ ու քարացած, ինչպէս աչքը բաց մեռել. նայում էին իրար եւ ամէն մէկն

ապատում էր, որ միւսն արտասանի, անիծուած բա-
ռը:

— Աստւա՜ծ ես, որ երեխան չէկ է, է՛լի:

— Շէ՛կ, չէ՛կ, քո ոտին մեռնիմ Թէլլի բալի:

Ու նորից մնացին քարացած, իրար աչքերի մէջ հայեացքը մխրճած պաղ պողպատի նետի պէս. ա-մէն մէկը ներքուստ նզովում էր միւսին, որ չի ար-տասանում ճակատագրական, սարսափելի խօսքը. նրանց մեղսաւոր հոգին դողդողում էր չրթունքների վրայ եւ յանցաւոր անունը եռալով բարձրանում էր ու իջնում նրանց չորացած կոկորդներում:

— Մեղա՛յ քեզ Աստուած, մեղա՛յ քեզ, ի՛նչ անցաւ գլխովս, ասաց Թէլլին:

— Մեղա՛յ քեզ Տէ՛ր, ես հող ու մոխիր, ես ի՛նչ իմանամ, մութի մէջ եղած բան:

Նորից լռութիւն տիրեց:

Թէլլին յանկարծ բռնեց Ալմաստի մատները ու ջլայնօրէն սղմեց.

— Սա՛նամէր Ալմա՛ստ:

— Թէ՛լլի բալի:

— Սանամէր Ալմաստ, հոգիս մի բան է ասում ինձ, ու Թէլլին ցաւագին ճիգով վիզը ձգձգելով, թուքը կուլ տուեց:

— Ի՞նչ, ի՞նչ, Թէլլի բալի, ասա, բալքի իմ սրտից ես ջուր խմում:

Ծայրայեղ յուզմունքից Ալմաստը քիչ մնաց Թէլլու չրթունքը համբուրի:

— Քո սիրտն ի՛նչ է ասում, ախր հարեւան էք, դու կ՛իմանաս:

— Իմ սի՞րտը... Ի՞նչ ասեմ, ախր հոգի ունիմ

Աստծուն տալու. մէկ ոտքս դերեզման, էս հասակիս իմ բերանից սուտ խօսք չի դուրս եկել. տատիկը ում, քանի՛ քանի՛ նորածին է ընկել էս ջրատար ձեռ-ներիս, ամա մինչեւ էսօր էդպէս հրաշք բան տեսած չեմ. ճեփ-ճերմակ, չէկլիկ երեխայ ու հէրը մէրը թուխ:

Ալմաստը նորէն դուրս սլրծաւ:

Կաքաւ Թէլլին անհամբերութիւնից պայթում էր. հեւալով ու թչուառ, նա սպասում էր, որ Ալ-մաստը վերջապէս կ՛արտասանի դաւադիր, սար-սափելի խօսքը եւ ինքը՝ կը կարողանայ փողոցնե-րով սլանալ փոթորկաբեր լուրը չրթունքին, Ալ-մաստն այդ գիտէր, եւ նոյնն էր սպասում, որ Թէլ-լին անի, ու ինքը խոյս էր տալիս վարպետու-թեամբ:

Պառաւները երկու հակառակորդների պէս նո-րէն իրենց պաղ ու չար հայեացքներն իրար աչքերի մէջ մխրճեցին, նրանց ղէմքերն աւելի մօտեցան ի-րար, նրանց մեղսաւոր շունչը իրար խառնուեց, հեւում էին իրար երեսի:

Ու Թէլլին աւելի համարձակ ու աւելի անհամ-բեր ու ջլուտ, յանկարծ չչնջաց.

— Սէթօ՛ն... Սէթօ՛ն չէկ է...

— Վա՛յ տունդ չը քանդուի Թէ՛լլի, չէկ է, ա-պա, Սէթօն չէկ է, ի՞նչ ենք սար ու ձոր ընկել, գո-ղը տնից է:

Ու երկու պառաւները անասելի յուզմունքով ի-րար գիրկ ընկան, արտասուեցին, ասես աշխարհի կատարածն էր:

Եւ ախտաւոր պալարը պայթեց, գարշահոտ

թարախն էր հոսում ու ծաւալւում բոլոր վիրաց-նե-րում, բոլոր յարկերի տակ:

— Այսմը քանդուի, էլ ամօթ չի մնացել:

— Ես՛ղճ հալիւոը, դու էլ կ՝ասես, թէ հարա-զատ տղայ ունիմ, ժառանգ ունիմ, Սէթօի տը-ղա՛ն...

— վա՛յ, վա՛յ, վա՛յ:

Պառաւները ծնկները ծեծելով, բայց իրօք հան-զըստացած ու երջանիկ, բաժանուեցին իրարից ար-դար գործի յստակ գիտակցութեամբ:

Այնուհետեւ Թէլլին ասում էր աչ ու ձախ:

— Աղջի, հողն իմ գլխին, երեխան Սէթօից է... Ես՛ղճ եղնակ. տատմէր Ալմաստը գիտէ, վայ ան-մօթ Գոհար:

— Էս գեղում բան չը կայ, որ Թէլլին չ'իմա-նայ, էն երեխան Սէթօինն է, Թէլլին ասաց:

Եւ գիւղը կրկին եռում էր հրաբուխի պէս:

Մէկ տեղ Թունոտ ցնծութիւն հարեւանի ամօ-թանքի համար, մէկ տեղ կեղծաւոր ցասում, մէկ տեղ հեգնութիւն. բոլոր կտուրների տակ եռում էր ամբոխի կիրքը, ու հրապարակներում, փողոցնե-րում Խեչանենց տան պատիւը աղբի հետ շաղախ-ուած տրորւում էր անցորդների ոտների տակ:

Ու յանկարծ աղջկերանց մի նոր երգը լսուեց. մլամլիտ ու աւերիչ երգ, որ մանկօրէն անգիտակ, ոսկեզօծում էր ամբոխի չարամիտ ու Թունոտ գը-ռեհկութիւնը:

Գոհարի շէկլիկ տղան,
Ապրի՛ս, ապրի՛ս Սէքօ ջան,

Խաբար տարէք Հէքօին,
Խեչանենց տունը վէրաց, վայլէ լէ լէ...

Կանանց նենգ գաղտասուկը, պառաւների օձա-յին Ֆչչոցը, ծերերի ցասկոտ մռմռոցը, երիտա-սարդների խեղդուկ ծիծաղ ու քրթմնջոցը, բոլորը, բոլորը խտացել էր այս երգի մէջ:

Եւ երգողները՝ մատղաշ հոգիներ, աչխարհի առաջ բաց, ինչպէս գալար նոճիներ, որ վշվշում են չար ու բարի հովերից:

Երգում էին հէնց իրանց համար:

Լացող կը լինէր, թէ խնդացող, զայրացող թէ զուարճացող, նրանց ի՛նչ փոյթ:

Միայն թէ երգը գրնգայ:

Եւ երգում էին մի դաժան անխութութեամբ, ասես անցքը մի հին հէքեաթի:

Սիրուն, ջահիլ կին, որ պառաւ ու ծթռած ա-մուսին ունի. կտրիճ երիտասարդը ախ ու վախ է անում... ու խաւարի մէջ կրքոտ համբոյր, սիրա-զեղ հեւք, գգուող տենչանք, երկու մատաղ սրտերի հրայրք. ու պառաւը քնած է սպիտակ միրուքը ցը-ցած... ու երեխան ծնւում է չէկ՝

Գոհարի շէկլիկ տղան...

Հէքիա՛թ...

Ցաւիտենական Լէյլի ու Մէջնում:

Ծերունին կը զարթնի, կը խելագարուի խան-դից ու ցասումից:

Խաբար տարէք Հէքօին,
Խեչանենց տունը վէրաց, ջան լէլէ, լէլէ...

Հազար Ներչանենց տուն կը քանդուի, հազար ծեր եղնակ կը խենթանայ, Հէքօն յուսահատու-թիւնից իր միսերը կը պատռտի:

Ի՞նչ փոյթ:

Երգը կը զրնգայ Լէյլի ու Մէջլումի համար:

Հաւատացած էին աղջիկներն իրենց երգին:

Գիւղն էր ասում. մանուկների դատաստանը ծը-նողների օրէնքով միշտ անողորմ է:

Եւ գիւղը նոր ապացոյց ունէր իր խոովիչ գայ-թակղութեանը:

Երգը կար:

Ամբոխի ժպտուն մոլեգնութիւնը, երեխաների անուշ շրթունքներին դրած:

VII

Յաւազար երգը հասաւ ե՛ւ Հէքօի ականջին:

Պառաւ Թուխսը գիշատիչ անգղի ատուերը նը-կատեց իր միակ ձագուկի՝ Ներչանենց օջաղի վրայ:

Տարիների տանջանքով կերտած իր հոյակապ տաճարն էր փուլ գալիս:

Կաթսայի չերեփը ո՞ւմ պիտի անցնէր. ծուխը ո՞վ պիտի հանէր հերդիկից:

«Ի՞նչ ... Ներչանենց հա՞րսը անառակ»:

«Աչխարհի վե՞րջն է հասել»:

«Ապա ինչո՞ւ դետերը յետ չեն գնում, ու ծո-վերը չեն բարձրանում... սարերը փուլ չեն գա-լիս...»

Հէքօի ճակատի տակ ուղեղի փոխարէն բոց էր ճարճատում:

«կաղ է Հէքօն, պառաւ, բայց դեռ քօռ չի, աչ-

քերը տեսնում են, Գոհարի չուրջը որձ կատու չի պառնայ»...

Մտածեց, ու Սէթօն յիշեց...

Պառաւի դէմքը ծռմռուեց:

«Օձի ձագ, չան ձագ» մռմռաց նա:

Հէքօն հաւատացած չէ այս չնութեանը, բայց ինչո՞ւ, ինչո՞ւ թողեց նրան էս յարկի տակ, ու էս խայտառակութիւնը հասաւ օջաղին:

«Գիւղի չար նախանձ, սփռուեց ինքն իրան Հէ-քօն. հալումաշ են, թո՛ղ հալչեն, կը հալչեն ու կը լռեն»:

Թոնրատան դուռը ճռռաց, ու կամացուկ ներս մտան տատմէր Ալմաստն ու կաքաւ Թէլլին:

Երեկոյ էր:

— Օղորմի Աստուած Հէքօ բալչի:

— Օղորմի ձեր ծնողացը:

— Ժամ չ'եկար քուրիկ, Ալմաստի հետ ասինք մտնենք տեսնենք Հէքօն հիւանդ չի՞, ասաց Թէլլին:

— Հա, քէֆս լաւ չի — կեղծեց Հէքօն:

— Հա, քէֆդ լաւ չի երեւում, նօթերդ կխտել ես. մարչ կը դամ, որ էն անամօթ խաղի համար է:

— Ի՞նչ խաղ:

— Էն խաղն էլի, որ մեր աներես աղջիկները կապել են Գոհարի ու Սէթօի վրայ, բէաբուռները... ասաց Թէլլին:

— Գեղի չար նախանձ, մէջ ընկաւ Ալմաստը:

Հէքօն լուռ էր, խորամանկ պառաւը հասկացաւ, որ հարեւանուհիները իր մասին լուր առնելու հա-մար չեն եկած, ուրիշ փորացաւ ունին:

Հասկացաւ, մռայլուեց ու ծառացաւ:

— Մեչաննենց դրանը մուր չի քսուի, էս օջաղը սուրբ է, լսո՞ւմ էք:

Հէքօի ձայնը չոր էր, չեչոը խիստ, հայեացքը խայթող:

— Էդ խաբարը ուրիշ տեղից հարցրէք, աւելացրեց նա, կատաղի ցասումով. աչքերը փայլատակում էին:

— Հալբաթ, հա՛լբաթ, դեղի չար նախանձ, Մեչաննենց օջաղը. հէնց մենք էլ էդ էինք ասում Ալմաստի հետ ժամի ճամբին, ասաց Թէլլին. էս տան պատիւը գեղի պատիւն է. էն Սէթօին ինչի՞ ռաղ չէք անում տնից:

Հէքօն ամբողջապէս կրակ կտրեց:

— Սէթօն էս տան տղան է, Թէլլի, տասն տարի աղ ու հաց կերած, Մեչաննենց հացը մարդու աչք կը քոռացնի:

— Ախր ջահիլ կնի՛կ, ջահիլ տղայ, դէ, ես ի՞նչ գիտեմ. փորձեց չարունակել Թէլլին:

— Թո՛ղ հալի գեղը, որքան ուզում է, կաքաւ Թէլլի, դուն էլ ամէնքի հետ, Սէթօն էս տան տղան է, հասկացա՞ր:

Պառաւը մոլեգնած էր. երկու այցելուները կծկուեցին:

— Թէ՛լլի բալի, ի՞նչ ես անդէտ անդէտ խօսում, մէջ ընկաւ Ալմաստը սկսուող վոթորիկը մեղմելու համար: Սէթօն հօ օտար չի, ախր ազգական է, գեղը վատ էլ կը խօսի, լաւ էլ... Եզնակ ամուսպատուին ի՞նչ կը հասնի:

— Բան չեմ ասում, ա՛յ քուրիկ, խեղճացաւ Թէլլին, բերանս չ'էրուեց մի խօսք ասի, հօ դևպէս չեմ ասում, էս տան պատուի համար եմ ասում, ախր օջաղ է:

— Էս տան պատուի ցաւը քեզ չեն տուել Թէլլի, մունչաց Հէքօն, էդ քո ձաւարը ուրիշ տեղ աղա՛:

Թէլլին սասանուեց, նորից անկապ խօսքեր թոթովեց, չչկլուեց, ոտքի ելաւ դուրս փախչելու:

— Ձեզ համար եմ ասում, Աստուա՛ծ է վկայ, սիրտս մաքուր է, դիպչողական չեմ ասում:

— Էդ քո ձաւարն ուրիշ տեղ աղա, ասում եմ, կրկնեց Հէքօն մոլեգնօրէն, հեռացող պառաւների յետեւից:

Վանեց չարասուկ պառաւներին, գիւղը նզովեց, անգամ Սէթօին պաշտպանեց փողոցի դէմ, որ ախտաւոր հովերը հայրենի տան վրայ չը զարկեն:

«Աչխարհ կրա՛կ կը տամ», մռմռում էր Հէքօն:

Եւ սակայն՝ այն դիշեր քնել չը կարողացաւ: Ամէն անգամ, որ աչքերը փակում էր, թանձր, սեւ ամպի պէս մի բան, մի անձեւ հրէշ՝ գալիս, թառում էր իրենց կտրին, ու բոցավառ աչքեր ունէր հրէշը, ու երախ ունէր ահագին, փրփրուն: Ընդոստ ցատկեց պառաւը սահմռկած, նստեց անկողնում, ճակատը չփեց, քրտնած էր:

Հոգին էր ալեկոծ. ծանր խոհեր պաշարել էին դլուխը:

Որչափ եւ ծառանար աչխարհի դէմ, մի բան կար, որ չատ էլ պարզ չէր:

«Այդ անիծուած երգը ո՞ր տեղից լուս ընկաւ. ինչո՞ւ լուս ընկաւ»:

Ցեսոյ յիշեց, որ եղբօր ամուսնութեան առաջին դիշերը, երբ ինքը պառաւ վագրի պէս հսկում

էր բակում, եղբայրը մինչեւ ուշ գիշեր, մինչեւ հաւախօս սաղմոսի վրայ կռացած՝ կարդում էր:

Ամուսնութեան առաջին գիշերը ո՞վ է սաղմոս կարդում:

«Ջարի բա՞ն էլաւ արդեօք»:

Ցիչեց, նաեւ, որ տատմէր Ալմաստը չատ նայեց երեխին ու բացականչեց.

— Վա՛յ, ի՛նչ սիրուն է, չէկ է, չէ՛կ...

Ու Ալմաստի ձայնը սովորական չէր:

«Եւ իրաւ, խորհում էր պառաւը, Եղնակի երեխան ինչո՞ւ չէկ»:

Վերջին միտքը չիկացած մեխի պէս գլուխը ցցուեց, նա ցատկեց անկողնից ու չապկանց վազեց դէպի դուռը. կէս գիշերին գնում էր երեխային նայելու:

Իրօ՛ք չէ՞կ է, թէ ոչ...

Ու կանգ առաւ հեւալով:

Ի՞նչ կ'ասի եղբայրը, Գոհարը...

Ցետ դարձաւ դէպի Ալմաստենց տան մէջ բացուող փոքրիկ ծակը. ուզում էր հարեւանուհուն իր մօտ կանչել, իր ցաւը պատմել, դարման աղերսել:

Մենակութիւնը խեղդում էր նրան:

Այս միտքը սակայն հրէշաւոր թուաց:

«Խեչաննենց տան սրտը աչխարհի առա՞ջ վռնել»:

Հպարտութիւնը չէր ներում:

Խեչաննենց Հէքօն է նա, Եղնակի քոյրը:

Նորէն անկողին ընկաւ, վերմակը գլխին քաշեց եւ ուժգնօրէն հեկեկաց:

Լալիս էր իր խոցուած ինքնասիրութիւնից:

Ու վաղ առաւօտ, հոգեկան բուռն խռովքը զըս-

պած՝ Հէքօն չտապեց եղբօր սենեակը: Մօտեցաւ օրօրոցին, երկար, եւ ուշադիր դիտում էր քնած մանկան դէմքը: Եղբօր դիմագծերն էր փնտռում ու սարսափով նկատեց, որ իրօք երեխան չէկ է:

— Հը՞, քուրիկ, ի՞նչ կայ էսպէս վաղ առաւօտ, հարցրեց Եղնակը:

— Ոչինչ, ջանիդ սաղութիւն ախպէր, գիշերը վատ երազ տեսայ, եկայ երեխին տեսնելու. փառք Աստծու, լաւ է:

— Հը՞, հաւանո՞ւմ ես քուրիկ, զօրանայ իմ Գոհարը:

Եղնակը երախտապէտ հայեացք նետեց դէպի կինը:

Գոհարը ժպտաց ու կարմրեց:

— Աստուած է հաւանել ախպէր, պատասխանեց Հէքօն, ու նորից ուշադիր կերպով կռացաւ օրօրոցի վրայ. նայում էր այնպէս, ասես բնաւ տեսած չէր լինէր:

— Հը՞, ի՞նչ կայ քուրիկ, չատ ես նայում, հիւանդ չէ երեխան, քիթդ կախ է, կրկին հարցրեց Եղնակը:

— Ոչինչ ա՛խպէր, սիրտդ վախ մի գցիր, երեխան առողջ է, նայում եմ զարմացած, էսքան էլ նըմանութիւն. մի ձու մէջտեղից կիսած դո՛ւ ես:

— Ե՛ս եմ, ապա...

Եղնակը երջանիկ էր ու հպարտ:

— Հալբաթ դու ես, ախպէր ջան, ապա ուրիշ ո՞ւմ նմանի:

Այդ «ուրիշ ո՞ւմ նմանին» Հէքօն իր կամքից անկախ այնպէս արտասանեց, որ ինքն էլ վախեցաւ

ու երկչոտ հայեացք նետեց եղբօրը, որ վերջինս յանկարծակի բռնեց. քոյր ու եղբայր մի վայրկեան իրար նայեցին: Եղնակի հոգու վրայ քրոջ հայեացքը կայծակի չեղակարծ փայլ էր. ծերունին իր կրծքի տակ մի ծանր քար զգաց, որ քաշում էր:

Քոյր ու եղբայր միաժամանակ լռեցին եւ միաժամանակ նրանց հայեացքը դարձաւ Գոհարին, որ անտարբեր հաւաքում էր անկողինները եւ դասաւորում պատի մէջ բացուած ծալքարանը:

Եղնակը ոտքի ելաւ կամացուկ, մօտեցաւ օրօրոցին, կռացաւ առհարկի ժպիտով նայեց երեխային, ապա գլուխը վեր բարձրացրեց ու սրտնեղած դարձաւ քրոջը.

— Ձը գիտեմ ինչ սատանայ է մտել քեզ առաւօտը մութ ու լուս. սրտներս վախ ես գցում, ի՞նչ կայ ախր, ի՞նչ ես երեսդ պատի երես շինել, ու բէխ-խէր բէխէր աչքդ տնկել երեխին:

— Մի՛ թնդուի ախպէր ջան, ասացի չէ՞, գիշերը գէշ երազ տեսայ, սիրտս վախ ընկաւ. ա՛յ, զարթնեց, ժպտում է. վա՛յ վա՛յ, մազերը քանի դնում, չաղմղում են, չէկանում: Ախպէր ջան մոխկ տուր էէ՛, երեխան ի՛նչ չէկ է:

Եղնակը նորէն կռացաւ, նորէն նայեց ուշադիր, յօնքերը կիտեց ու առանց այլ եւս մի խօսք արտասանելու կամացուկ դուրս գնաց անտարբերի եղանակով:

Հէքօն երկար նստած մնաց օրօրոցի կողքին. ասելիք ունէր հարսին ու չէր համարձակւում, մի քանի անգամ հազաց, ոտքի ելաւ, երեխայի վրայ

կռացաւ, կրկին նստեց ու յանկարծ դարձաւ Գոհարին.

— Երեխան չէկ է հարս, ասաց նա առհարկի քաղցրութեամբ ու անհոգ:

— Շէ՛կ... չէ, չէկ չի, քուրիկ. էղպէս երեւում է, մեծանայ կը փոխուի:

Ու Գոհարը դործը թողած՝ մօտեցաւ օրօրոցին. երկու կանայք միասին կռացան երեխայի երեսին:

— Ա՛յ, տես, չարունակեց Գոհարը, մազերը սեւին են տալիս, չէկ չի, ու նա կրկին դարձաւ իր դործին:

Լռութիւն տիրեց:

— Հա՛րս, Գոհար, էն ե՞րբ էր նէրանց գնացիր, հարցրեց Հէքօն մի բան պատմողի հանդարտութեամբ:

— Օրը չեմ յիշում, Նոր Տարուց յետոյ էր, ի՞նչ կայ որ հարցրեց Գոհարը:

— Հա, հա, Նոր Տարուց յետոյ, յիշում եմ, կրկնեց պառաւը մտածկոտ, յիշում եմ, Սէթօն էլ խուրջինը վերցրեց, էնքան խնդացինք:

— Հա, Սէթօն էլ խուրջինը չալակեց:

Պառաւը մատերի վրայ ինչ որ հաշւում էր ծածուկ:

Եւ հաշիւը ճիշտ էր. այդ օրուանից մինչեւ երեխայի ծնունդը ուղիղ իննն ամիս էր, եւ Սէթօն ուղեկցել էր Գոհարին, եւ ... երեխան չէկ է, ինչպէս Սէթօն:

— Ինչպէս չուտ է անցնում ժամանակը, ասաց Հէքօն ախ քաշելով, ասես երէկ էր. իննն ամիս է արդէն...

— Հա՛, ինն ամիս է, կրկնեց Գոհարը:

— Հարս, որդի, էդ ղալաթը մէկ էլ չ'անես. Սէթօն քեզ հետ տեղ չը պիտի երթայ... օտարի տը- ղայ է. հազար դուշման ունինք, հազար չար լե- ղու:

— Ես չը տարայ քուրի՛կ, Եղնակը ղրկեց. ես էլ ամաչեցի, ի՞նչ անեմ:

Հարսը վատ ակնարկը գուշակեց, ծնոտը դող- դողաց, չը կարողացաւ խօսքը չարունակել ու սաս- տիկ չառագունեց:

Հէքօն յուզուեց, գրեթէ վոչմանեց ու չարու- նակեց.

— Դէ, քեզ համար, մարդուդ պատուի համար եմ ասում, գեղի վոսկուկն ու չար լեզուն գիտես, ջահիլ հարսի կտրից թէ որձ կատու էլ անցնի, չար բերանները կը խօսին. դէ, ախպէրս էլ հասակաւոր օրերին բաղդը քեզ հաւատաց... Ի՞նչ իմանամ, չը մեռայ էլ, որ ազատուեմ:

Հէքօի աչքերը թացացան. նա դուրս գնաց աչ- քերը սրբելով:

Գոհարը կանգնած մնաց խոպան չուարած:

Հասկանալ չէր կարողանում Հէքօի հարցու- փորձն ու յուզմունքը, ու նայում էր մի կէտի:

Դուռը կրկին բացուեց, Հէքօն յայտնուեց չէմ- քին.

— Գոհա՛ր.

— Աւա՛, քուրիկ:

— Գոհար, որդիս, որ էն անամօթ խաղը յան- կարծ ականջովդ ընկնի, Եղնակին չ'ասես, էնպէս արա, իբր թէ չես լսել:

— Աղջիկների խա՞ղը, որ իմ ու Եղնակի վրա՞յ կապեցին հերու. էհ Եղնակն էլ, ես էլ վաղուց ենք լսել, էդ ի՞նչ է որ:

— Չէ, չէ, էդ չի, ուրիշը, նորը. քո ու Սէթօի վրայ:

— Սէթօի՞...

— Հա, հա, Սէթօի, կրկնեց պառաւը սրտնե- ղած ու հեռացաւ:

Գոհարի ձեռքից աւելն ընկաւ. նա յետ-յետ գը- նաց ու նստեց թախտին. ապա կամացուկ ձեռքերը կրծքին խաչեց ու աչքերը կրկին մի կէտի յառեց:

Զգում էր մի մութ դաւ, ու հասկանալ չէր կարողանում. խորհրդաւոր մի ձեռք դիւական մատ- ներով իր բաղդն էր բռնել, ու չը գիտէր ո՞վ, ին- չո՞ւ:

«Սէթօ՞ն... ի՞նչ կար իր եւ Սէթօի մէջ... նոր ե՞րդ... ի՞նչ երդ. չի՞ սխալւում արդեօք Հէքօն, դուցէ նոյն երդն է, ծուռ է լսել, պառաւ կնիկ է»...

Ու յիշեց Հէքօի զրոյցը, հարց ու փորձը.

«Երեխան չէկ է... ինն ամիս... Սէթօն էլ չէկ է...»

Վարագոյրը յետ քաշուեց, ու բացուեց անդուն- դը նրա ոտքերի առաջ եւ անդունդի մէջ հազար լե- ղու, կրակ շնչող հազար բերան:

— Ախր սո՛ւտ է, սո՛ւտ է, սո՛ւտ է... ճչաց Գո- հարը սրտրելով իր կուրծքը...

Ու դէպի դուռը նետուեց. ուզում էր Հէքօի յե- տեւից վազել, փողոց դուրս գալ, կտուրը բարձրա- նալ ու ճչալ աշխարհին՝

«Սո՛ւտ է, սո՛ւտ է...»

Ու ճակատը կպցրեց դրանը, մնաց խորտակ-ուած:

— Անհոգինե՛ր, մարդակերնե՛ր, մրմնջում էր նա... բա խիղճ, ամօթ, հաւատ, հոգի չը կա՞յ... բա Աստուած չը կա՞յ... ախր արունքի բան է էս... մարդասպաններ, մարդասպաննե՛ր...

Ու սիրտը վղձկաց, հեծկլտում էր:

Օրօրոցին մօտեցաւ, ջղայնօրէն դուրս քաշեց երեխան ու կրծքին սղմեց:

Երեխան լացեց:

Գոհարը իր լիքը ստինքը նրա շրթունքներին պարզեց ու ժպտաց արցունքի միջից:

Իր չքեղ, բեղուն ու արդար մայրութիւնն ու-նէր միայն աշխարհի կատաղի չարութեան առաջ:

Ու Գոհարն սպասում էր Եղնակին:

Նա միայն գիտէ, որ սուտ է այդ բոլորը:

Եղնակը գիտէ՛...

VIII

Եղնակը դռնից դուրս եկաւ ու քայլեց աննպատակ:

Ուշ աշնան թղպոտ ու ցուրտ օր էր:

Առաւօտեան պաղ հովը մտրակում էր նրա ճակատը: Ո՞ւր էր գնում չը գիտէր:

Ցիշում էր սակայն, որ այս առաւօտ մի տեղ պիտի երթար:

Ի՞նչպէս մոռացաւ:

Ինչո՞ւ մոռացաւ:

Հէքօի հայեացքը յիշեց. պառաւը մի բան է կասկածում:

«Հէքօն է, էլի՛, մտմտաց նա, միշտ մի բան ունի տնաքանդը. երեխան չէկ է... էհ, ի՞նչ անենք չէկ է, ամէն երեխայ իր հազար պորտից մէկին կը քաշի...քիչ հայր ու որդի կան, որ իրար բնաւ նման չեն»:

Մտքերը հանդարտեցուցիչ էին. պաղ հովը նոյնպէս: Զարմացաւ սակայն, որ հակառակ հովին, ճակատը քրտնած է. գլխարկը հանեց, քրտինքը սրբեց:

«Այս տարի ցրտերը չուտ վրայ կը հասնին, նորէն մտմտաց նա, ձիւնը հեռու չէ»...

«Էհ, թող գայ», աւելացրեց նա ու ժպտաց անմտօրէն:

Ու քայլեց գլուխը քաշ: Նրան թւում էր, թէ չալակած ծանր բեռ ունի, որ մի տեղ պիտի թաւիլ:

Ո՞ւր, ո՞ւմ առջեւ, չը գիտէր:

Ոչ ոք չ'ունէր:

— Բարի լո՛յս, Եղնա՛կ ամի:

— Աստծու բարին թիւնի:

Թիւնին կռացած էր մի լիքը ջուալի տակ:

— Էս ուր՝ էսպէս առաւօտը վաղ Եղնա՛կ ամի:

— Աստուած է վկայ, ես էլ չը գիտեմ, դուրս եկայ մի բանի, ու մոռացայ. հէ՛յ ջահիլութիւն. Եղնակը խնդաց բաց սրտով:

— Կ'ուզես, ասեմ ո՞ւր ես գնում:

— Ո՞ւր Օրդու:

— Էնտեղ, որտեղից ե՛ս եմ գալիս, մէջքիս աւելուր է:

— Վայ քո հօրն օղորմի Թիւնի. դու հօ իմաստուն ես. երէկ Ջրաղացպանը խաբար էր արել, թէ նաւերից մէկը ճեղքուած ունի, առաւօտը վերկացայ, որ գնամ, տեսնեմ ու մոռացայ:

— Հա՛, հա՛, ճեղքուածք կար, ջուր է գնում. Լնաեղ էի, սաղ գիշերը ալիւր եմ աղացել:

Այս հանդիպումը Եզնակին անչափ ուրախացրեց ու պատճառը չը գիտէր:

— Ցա՛ծ դիր բեռդ, հանգստացի՛ր տնաշէ՛ն, ասաց Եզնակը հոգածու եղանակով. լաւ յոգնած ես:

— Է՛հ, էս ցած դրի, բա մէկէ՞լը, պատասխանեց Թիւնին, վար դնելով ուսի բեռը:

— Մէկէլը ո՞րն է, ա՛յ, Թիւնի:

— Էն որ Աստուած ամէնքիս մէջքին է դրել, ու մենք ծածուկ աշխատում ենք դնել ուրիշի մէջքին. ա՛յ, էս գիշեր Ջրաղացում հարեւանների հետ հաշիւ նստանք ու տեսանք, որ էս գեղում իստակ մարդ չը կայ. մէկը՝ գող է, միւսն անառակ, մէկը՝ կեղծաւոր, միւսը՝ խաբեբայ, մէկի կնիկը աչքը դուրսն է, միւսինը՝ առու թռնող. իստակը մնացինք մենք՝ Ջրաղացպաններս, ես էլ մէջը. տե՛ս, դլխիս ալիւրը. սիպտակել եմ, հոգիս էլ ճեփ-ճեփ-մակ. ա՛յ, իմ կնկայ գովքն արին. անմեղ գառ է, ասացին, արուռով, նամուսով, հի՛, հի՛, հի՛, հի՛, ծիծաղեց Օրդուն, իմ կնիկը արուռով, նամուսով...

Եզնակը ժպտաց. Թիւնու կնիկը գիւղի միակ թեթեւաբարոյ կինն էր. այդ գիտէին ամէնքը:

— Կնկաս էնքան գովեցին, որ հիմա վախենում եմ:

— Ինչի՞ց, Թիւնի:

— Ջեմ իմանում, վախում եմ. գիտե՞ս, Եզնա՛կ ամի, վախի պէշն էն է, որ չը գիտես ինչի՞ց է... էնպէս, ներսդ մի դող կայ. ծառի տերեւը որ չատ դողդողայ, չուտ կ'ընկնի, ընկնող տերեւը առանց հովի էլ կը դողդողայ:

— Արդար մարդն ինչո՞ւ դողայ:

— Արդար անարդար չը կայ. ամէն մարդ էլ գիտէ համ լաւ ժպտալ, համ լալ. ի՞նչ իմանաս. ժպտացող կայ՝ որ պիտի լայ, լացող կայ՝ որ պիտի ժպտայ, դէ գնա՛ ու գլուխ հանի. ամա դու տղամարդ կա՛ց. ասած է՝ Աստուած սարը կը տեսնի, ձիւնը կը դնի. դու բարձր սար ես, ձմեռը մօտ է, ձիւնդ չատ կ'ըլնի, վա՛յ բարձր սարին, ասում եմ էէ՛...

— Աստծու կամքն է Թիւնի, Աստծու պահած գառը գէլը չի ուտի:

— Հա, հալբաթ, հալբաթ, Եզնա՛կ ամի՛. ա՛յ, փոքրիկ, ճերմակ սիրուն գառներն արածում են դաշտում. գայլը մօտենում է քաղցած, երեք օր բան չի կերել Աստծու հայեանը. մէկ-մէկ նայում է գառների ճակատին, կարդում է — գայլը կարդալ գիտէ — ա՛յ, էս մէկի ճակատին գրած է «Աստծու պահած», միւսին նոյնպէս, երրորդին նոյնպէս. գայլը յուսահատ, քաղցած՝ ուզում է հեռանալ, գնալ, յանկարծ աչքն ընկնում է մի սիրուն, փափուկ գառան, որ անմեղ անմեղ նայում է գայլին, ասես աչքով է անում. ու ճակատին բան չը կայ գրած. գայլը վրայ է պրծնում ու վայելում — Աստուած էլ վերից ժպտում է... վա՛յ քո տունը չինուի Եզնակ ամի:

Թիւնին քահ քահ ծիծաղեց:

Եզնակը մոայլուեց. սկզբում Թիւնուն հանդիպելով, չատ ուրախացաւ, բայց քանի նա խօսում էր, սրտի վրայ քար էր ծանրանում:

— Է՛հ, ինչ որ գրուած է, նրանից չես ազատուի, չննջաց եզնակը ընկճուած:

— Վա՛հ, խօսքով ընկանք ուշացրի քեզ, գնա՛, եզնա՛կ ամի, գնա՛ ջրաղաց, էն նաւի ճեղքը փակել տուր, թո՛ղ ջուրը չը հոսի, որքան չուտ փակես, էնքան լաւ... Թիւնին բեռը չալակեց:

— Հա՛, իրաւ ուշացայ, գնամ տեսնեմ ի՞նչ է...

— Գնա՛, գնա՛, արդար մարդիկ են էնտեղ, ամէնը սուրբ. ես էլ էս ալիւրը տուն տանեմ, որ իմ նամուսով, աբուռով կնիկը գլխիս չը բամփի. Թիւնին նորէն ծիծաղեց, բեռը թիկունքն առաւ ու կորաքամակ կամաց-կամաց հեռացաւ:

Եզնակը նայում էր յետեւից մտածկոտ:

Ի՞նչ էր ասում այս տարօրինակ մարդը. «բարձր սար ես, ձմեռը մօտ է, ձիւնը չատ կ'ըլնի»...

— Է՛հ, Թիւնին է էլի՛, չննջաց նա, ու ճամբան չարունակեց դէպի ջրաղաց:

Տարուայ այդ եղանակին ջրաղացում մի չատ մարդ է լինում. ձմեռնամուտին ամէն ոք աշխատում է ժամ առաջ իր ցորենն աղալ, ձմրան բնաղունը պատրաստել:

Եօթ-ութ հարեւան տեսաւ եզնակը, որոնք նրան յարդանքով ընդունեցին. ջրաղացի անալի կլօճ հացով ճմուռ էին ուտում. եզնակը մասնակցեց, կատակեց ամէնքի հետ եւ ուրախացաւ, սիրտը բացուեց:

Ապա նա վերկացաւ, դուրս գնաց ջրաղացի նաւը դիտելու. հազիւ մի քանի քայլ հեռացած նա մի անճոռնի ու ահագին քրքիջ լսեց իր յետեւից, որ ջրաղացի որոտն իսկ ծածկել չը կարողացաւ. եզնակը կանգ առաւ սպրդնած, թաթերի վրայ յետ եկաւ ու ականջը դրեց ջրաղացի դռնին.

— Վա՛յ, հալիւո՛ր, ի՛նչ թազացել է, ասաց մի ձայն:

— Ջահիլ կնիկը որ կայ, անմահական աղբիւր է, ասաց մի ուրիշը. ով խմեց կը ջահիլանայ. հալիւորը կուշտ է խմել:

Ընդհանուր հռհռոց բարձրացաւ:

— Կաքաւ Թէլլուին հարցրէք, խմե՞լ է թէ չէ, ասաց մի երրորդը. տատմէրն ասել է, թէ երեխան չէկ է:

— Ի՞նչ, ի՞նչ:

— Երեխան չէկ է, ասում են:

— Պա հօ՛, Թառլան Գոհարը առու է թռել:

Նորից ընդհանուր քրքիջ բարձրացաւ:

Եզնակը զգաց, որ ոտները ծալւում են, յետ ընկաւ, պատին յենուեց, ապա երերալով անցաւ ջրաղացի յետեւը, ու փոխանակ պատռուած նաւին նայելու, նստեց բարձր ամբարտակին ու աչքը յառեց ջրտան մէջ որոտացող ջրերին: Ջրի ալիքները շրխալով ընկնում էին փայտեայ ահագին թեւերին, վշրւում, փուչու ամպ էին կազմում, ու չարխը դառնում էր ջրերի մրրկի մէջ խելայեղ թափով:

Երկար նստած մնաց ծնկները գրկած:

Ջը գիտէր, ո՞ւր երթայ:

Նորէն յիշեց Օրդուի խօսքերը.

«Տղամարդ կա՛ց... բարձր սար ես, ճիւնդ չատ կը լինի...»

Եզնակը երբեք չէր հաւատացել, թէ կինը կարող էր իրեն դաւաճանել. այժմ էլ չէր հաւատում: Բայց ներսում, հոգու մի ծածուկ տեղում մի անորոշ վախ էր զգում. «վախի գէշն էն է, որ չես իմանում ինչի՞ց է, կրկնեց Թիւնու խօսքերը, ընկնող տերեւը առանց հովի կը դողայ»:

Հասկանում էր այժմ ամէն ինչ. հասկանում էր քրոջ առաւօտեան տագնապը:

— Հէ՛յ, աչխարհ, ինչքան չարութիւն կայ քո մէջը, մրմնջաց նա, ու կամացուկ վերկացաւ, ցած իջաւ ջրաղացի ամբարտակից ու գլուխը քաշ ճամբայ ընկաւ:

Նորից մոլորուած էր. չը գիտէր ուր գնայ, տուն չէր ուզում դառնալ, վախենում էր:

— Ախր ինչի՞ց եմ վախենում, ի՞նչ կայ. լսած զգուելի բամբասա՞նքը... աչխարհն էապէս եկել, էապէս էլ կ'երթայ, Եզնակ: Բա պատի՞ւը... փալաս է, ի՞նչ է, որ ցեխերի մէջ քաշ տան. ախր ուզում ես գլուխդ բարձր մնայ, ցեխն ինչո՞ւ են գնում գլխիդ:

Ու ցասում ունէր աչխարհի դէմ:

Եւ աչխարհը նրա աչքում այսօր հէնց այս ջրաղացն է. ա՛հ, ինչպէս կ'ուզէր հզօր լինել, ցրիւ տալ նաւերի ամբարտակը, ողջ ջրաղացը հեղեղի յորձանքների բերանը տալ, որ ներսի վայրահաչները ալիքներին կուլ գնան:

— Հէ՛յ ջահիլութիւն, ո՞ւր ես...

Ու մտամոլոր քայլում էր դէպի գիւղը. մերթ

կանգ էր առնում, ինքն իր հետ խօսում, կրկին քայլում էր:

Գիւղից դէպի դաշտ էր գնում տաս-տասներկու տարեկան մի փոքրիկ աղջիկ երկու հորթ քչելով. ու նա երգում էր անուշ եւ ուրախ. Եզնակին թուաց, որ Գոհարի անունն է երգի մէջ. նա կանգ առաւ ուշադրութիւնը լարեց.

Նոր երգ է...

Գոհարի շէկլիկ տղան,
Ապրի՛ս, ապրի՛ս Սէքօ ջան:

Սէքօ՞ն, չէկ Սէքօ՞ն... կայծակ ճայթեց Եզնակի գլխին. աչքերի առաջ մթնեց, նա ձեռքը ճակատը տարաւ գլխապտոյտը մեղմելու համար. անհնարին կսկիծից նրա դէմքը ծամածռուեց ու մնաց քարացած. աչքերը փակ՝ նա զգում էր, թէ ինչպէս ոտքի տակից հողը գնում է, ինչպէս չրջապատի ցեղերը, խոզանները, կանաչները, այգի, ծառ, թումբ, բլուր մէկէն խելագար թափով իր չուրջը դարձան. ուժգնօրէն յենուեց գաւազանին չ'ընկնելու համար:

Երգը չարունակուեց.

Խաբար տարէք Հէէօին,
Խեչանենց տունը վէրաւ, վա՛յ լէ լէ, լէ լէ...

Աղջիկը երգելով՝ հասաւ Եզնակին:

Ծերունին նայում էր. այդ փոքրիկ երեխան որ կրակ ունէր չրթունքներին ու վառեց, մոխիր դարձրեց Եզնակի կեանքը ե՛ւ այն, որ անցել է, ե՛ւ այն, որ ապրում է, եւ այն որ պիտի ապրէր:

Վերջացաւ, ծխացող աւերակ էր իր ողջ կեանքը...

Աղջիկը բոլորովին մօտ էր. անհնարին կսկիծից դէմքը ծամածռուած ու այլանդակ ժպտով եզնակը առաջացաւ դէպի երեխան ու նրա ձեռքը բռնեց.

— Դէ մէկ էլ երգես էդ երգը, բա՛լաս:

Աղջիկը կարմրեց, կծկուեց, աչքերը քաշ ձգեց:

Եզնակի աչքերից թոյն էր կաթկթում, բիբերը լայնացել էին, նա հեւում էր չնչակտուր, ու յանկարծ թափով ղէն չպրդեց երեխային:

— Կը սատկացնեմ, չա՛ն ձագ, ճչաց նա որոտալին:

Աղջիկը սարսափած ու հեծկլտալով ընկաւ գետին, ապա ոտքի ելաւ ու բոլոր ուժով վազեց, թողնելով հորթերը:

Եզնակը նայում էր յետեւից ու յանկարծ երկու ձեռքով իր գլուխը ծեծեց.

— Թաղե՛մ գլուխդ եզնա՛կ, թաղեմ գլուխդ, էս ո՞ւր հասար, ցնդուած քեաֆթառ, հեծեծում էր նա:

Էլ ո՞ւր գնալ, չը գիտէր. աշխարհը վերջացաւ. բոլոր ճամբաները փակուեցին. մի հատիկ լուճ էր մնացել հոգում, վերջին անգամ տեսնել Գոհարին, տեսնել երեխան:

«Սէթօի չէկլիկ տղան»... Սէթօի՞... հա՛, հա՛, հա՛:

Եզնակը քրքջում էր խելագարի ծիծաղով:

— Լաւ հոգեզաւակ եղաւ... ու նորէն քրքջաց:

«Տեսնե՛լ Գոհարին, տեսնե՛լ Գոհարին»...

Ու նա թափով չարժուեց դէպի տուն...

Դեւը սեղան էր կանգնել իր հոգում, կրակը վառ էր, մնում էր ողջակէզը:

«Տեսնել Գոհարի՛ն»...

Ուշ գիշեր էր, երբ նա աստիճաններով կամաց-կամուկ բարձրացաւ ու թաթերի ծայրին զգուշութեամբ մօտեցաւ իր բնակարանի լուսամուտին:

Ծնկները ծալւում էին ու չունչը բռնւում էր:

Գաղտագողի նայեց լուսամուտից:

Գոհարը դեռ չէր քնած. երեխան գիրկն առած կերակրում էր. մանուկը ծծում էր մօր ստինքը եւ միւս թաթով խաղում միւս ստինքի հետ. մայրը խանդաղատանքով նայում էր զաւակին. տեսարանը կախարդիչ էր. կանացի անարուեստ գեղը, որ լոյսի ցոլքերի հետ խաղում էր Գոհարի դէմքին, այդ հրապուրիչ անմեղութիւնը, որ կաթկթում էր աչքերից, ու այդ անուշ մայրութիւնը, որ եռում էր հրաշագեղ ստինքների մէջ, ամբողջ այդ սրտայոյզ ու սրտապարար պատկերը, սենեակի կիսաստուերի, լոյսի խաղերի մէջ մի սրբութիւն ունէր, որ եզնակի հոգին բռնեց. Գոհարը առաւօտեան սովորական կինը չէր, տանջանք ու անմեղութիւն իրար ձուլուած՝ գիշերուայ մէջ ցոլք էին արձակում:

Քանի նայում էր եզնակը, իր կատաղի հեւքն էր մեղմանում, ներսի դիւական կրակը մոխրանում, ու չը գիտես ինչ մի անծանօթ ու հանգստացուցիչ չունչ էր փչում նրա խորունկ կսկիծի վրայ:

Երեխան դադարեց ծծելուց, գլուխը թաղեց մօտ կրծքին ու մուշ-մուշ քնեց. Գոհարը կռացաւ համբուրեց, ապա մեղմ, անձայն արցունքների խոշոր կաթիլները հոսեցին նրա գեղանի աչքերից. մեղմիւ սրբում էր աչքերը, նոր կայլակներ կախուեցին կոպերից ու հոսեցին այտերով վար:

Եզնակն զգում էր, թէ ի՛նչպէս այդ արցունքները քամւում են իր հոգում, եւ կուրծքն ուռաւ, ուռաւ պայթելու չափ.

— Նահլա՛թ քեզ, չա՛ր սատանայ, հէ՛յ, զուլում աչխարհ. սուրբ բան չը կայ, որ դու չ'աղտոտես:

Ախ՛ղճ Գոհար... խեղճ ե՛ւ ես... մրմնջաց նա:

Ի՛մն է, ի՛մն է, ի՛մն է այդ երեխան, ի՛մն է այդ կինը... անմեղ՝ ինչպէս հրեշտակ, վա՛խ զուլում աչխարհ... մրմնջում էր նա:

Երկար արտասուեց Գոհարը, ապա զգուշութեամբ երեխան օրօրոց դրեց, ու ծնկները դրկած, աչքը դրանը յառած սպասում էր...

Եւ դրսում դողդողում էր Եզնակը:

Ու այնպէս հեռու էին այդ կինն ու երեխան իրենից:

«Իմն են, իմն են, ու այնպէս հեռու, մրմնջում էր նա, մէջքը պատին տուած, աչխարհն է ասում, որ իմը չեն»:

Աստծուց բացի՝ ոչ ո՛ք կը հաւատայ, որ այս երեխան ու այս կինը քոնն է. միայն Աստուած գիտէ, խեղճ Եզնակ:

Աստուած բաւական չի՞:

Ո՛չ!

Ո՞վ է Աստուած. Քեաչալ Հովէն, Կուզտիկ Սէփոն, Քեաֆուր Նաւոն, Թօփալ Ցունօն, Պօպօզ Էնդոն, Տատուց Եղոն, ահա Աստուածը, կ'ուզես տրաքի, կ'ուզես դանակը փորդ մխիր ու պատուի, Եզնա՛կ:

«Ձայն բազմաց՝ ձայն Աստուծոյ»:

Դառն ժպիտը ծամածռեց Եզնակի դէմքը:

«Լոյսդ ո՞ւր է Տէ՛ր, լո՛յսդ... խաւար է իմ չորս կողմը, հոգիների խաւարը. ձայնը բազմաց քո ձայնը չի՞ միթէ, ապա ինչո՞ւ այդքան դաժան ու անդութ. ապա ասում են դու անհուն ու արդար խիղճ ես մաս-մաս ցանուած աղամորդիների հոգու մէջ. ո՞ւր է այդ լոյսը, ինչո՞ւ մեր խաւարը չը լուսաւորես. գթութի՛ւն, գթութիւն Տէ՛ր, ախր այդ երեխան խունկ պիտի ծխի գերեզմանիս վրայ. կը խնդան ու կը հռհռան, եթէ անունս կրի, կը հռհռան. «Ձայն բազմաց ձայն Աստուծո՞յ!! ո՞ւր է ճըշմարտութիւնը, ո՞ւր է քո լոյսը Տէ՛ր... «Ձայն բազմացը» նախորի բառա՞ջ է...»

Եզնակը չէր զգում, որ վաղուց է լալիս. կամաց-կամուկ ցած իջաւ, ու քայլեց դէպի Թոնրատուն, դուռը բացեց ու ընկաւ քրոջ ոտքերի մօտ:

Հէքօն սարսափեց, վրայ պրծաւ ու եղբօր գլուխը դրկեց, սրմեց կրծքին մայրաբար.

— Վա՛յ, քօռանամ ես, ախպէր ջա՛ն, էս ի՞նչ է քո հալը:

— Լսո՞ւմ ես օձի Փչչոցը քո՛ւրիկ, ահագին օձ է դալարուել տանս չորս կողմը, գլուխը ներս կախել հերդիկից ու Թոյն է սրսկում, Թո՛յն, Թո՛յն... էն ի՞նչ լսեցի, քուրիկ, էն ի՞նչ երգ է:

— Լսեցի՞ր. ջուրն ինձ տանի, լսեցի՞ր... գեղի չար նախանձ ախպէր ջան. ցաւդ տանի դուշմանդ:

— Անցնում եմ փողոցներով, տները լեզու են ցոյց տալիս, քուրիկ, մերկացրել են ինձ, քաշ են տալիս փողոցներով, ու Թքում են վրաս, ապրիլ չի լինի... չի՛ ապրուի:

— Աչքս քօռանայ ախպէր, քեզ էսպէս չը տեսնէի. ախր ի՞նչ պատահեց, երկնքից կրա՞կ մաղուեց. հասակով մարդ ես, գեղի իշխան, բա քո պատիւը, քո տան պատիւը, բա թշնամու խօսքով մարդ ինքն իր բաղդի վրայ թքի. խօսում են՝ Թո՛ղ խօսեն, Աստուածծ լոյս է տուել քեզ, ինչի՞ ես սեւ բերում էս օջաղին:

Հէքօն չոյում էր եղբօր գլուխը, համբուրում էր ճակատը, աղերսում, լալիս, բարկանում, խրատում:

— Պի՛նդ պինդ համբուրիր ինձ, քուրի՛կ, ա՛յ, էլի սհաթ անցաւ գլխովս... կրծքիդ սղմի՛ր գլուխս, ա՛յ էսպէս... Ի՛նչ լաւ էր, որ մենակ էինք, քուրիկ:

— Էղպէս մի՛ խօսիր, ախպէր ջան, Աստծուն դուր չի գայ, ժառանգ ունես:

— Հա, հա ժառանգ ունիմ, իմն է, իմն է, գիտեմ, Աստուածծ է վկայ, որ իմն է, օձի ֆչչոցն է խեղդում ինձ քո՛ւրիկ. հարեւաններ, ծանօթ, բարեկամ, առջեւդ կանգնած՝ խօսում են, ժպտում, ու յետեւիցդ իսկոյն օձի ֆչչոց... Թո՛ղ մէկը ճակատիս ասի, է՛լի... չէ, չէ, պատիւ են տալիս, ոտքի են կանգնում, ճամբայ են բանում, մինչեւ անցնեմ, ու յետեւից մի բուռն ցեխ թիկունքիս. ուրքս ուր որ կոխում եմ, ցեխ է, ցե՛խ, ցե՛խ. յոգնել եմ քո՛ւրիկ, յոգնել եմ ցեխից...

— Ֆո արդար օջաղին կեղտ չի դպչի, ախպէ՛ր, սիրտդ լէն պահիր. հիմա գնա՛, քնի՛ր, հանգստացի՛ր, առաւօտը կ'երթաս քահանային, Թող պահպանիչ ասի գլխիդ, սուրբ բան է. էն ջահիլն էլ մեղք է ախր. սաղ օրը լաց է եղել, աչքը դրանը քե՛զ է սպասում. ջահիլ է ախպէր, կեանքը քեզ կապեց, Թող օրը սեւ չ'ըլնի. գեղ է, կը խօսեն, կը խօսեն ու կը լռեն:

— Հա՛, հա՛, լաւ ես ասում, գնամ հանգստանամ...

Եզնակը Թողեց քրոջը, դուրս եկաւ բակը, պատըշգամբի լուսամուտին նայեց, ճրագը վառ էր, Գոհարը դեռ նստած էր, նոյն դիրքով:

Սպասում էր...

Եզնակը պահ մի նայեց այդ ճրագին, ապա չարժուեց դէպի դարբասը, դուրս եկաւ փողոց ու կորաւ խաւարի մէջ:

Քայլում էր հեւիհեւ ու ինքն էլ չ'իմացաւ, Թէ ինչպէս յայտնուեց Ջուլհակ Մընօի դրանը. կանգ առաւ, ականջ դրեց. գործահօրի չխկչխկոցը լսում էր. ծերունին դեռ գործում էր:

Առանց վարանումի դուռը հրեց, ներս մտաւ. առաջացաւ մինչեւ գործի հորը, ու անթարթ նայում էր:

Ջուլհակը գործում էր առանց վեր նայելու:

— Գործածդ ի՞նչ է, ա՛խպէր Մընօ:

— Պատա՛ն, եղաւ պատասխանը:

Երկու ծերունիներն իրար նայեցին լուռ Թեամբ:

— Մեչանենց տան ճամբան էստեղից չի եզնակ:

— Գիշեր է, մոլորուած եմ:

— Ճամբան երկու է. մէկը՝ որ մեզնից է փախչում, միւսը որից մենք ենք փախչում ու չենք ապաւի. քոնը ո՞րն է եզնակ:

— Երկսի մէջտեղն եմ, ու չը գիտեմ, ո՞ւր գընամ:

— Սարից իջար պրծար ու յոգնած, ուժասպառ, ուզեցիր նորից բարձրանալ, ձմեռը վրայ հասաւ ե՛ղնակ. ձմեռնամուտի հովերը թունդ են... չարխի ֆալագը ո՞վ կը կանգնեցնի. քո ճամբան էլ ջուլհակ Մընօր դռնից չի եղնակ. դու սարն ի վեր ես զօրում, Մընօն՝ դէպի վար, տե՛ս, պատան եմ գործում:

— Մէկն էլ ինձ համար գործի՛ր:

— Հէրու կանաչ-կարմիր, էս տարի պատա՛ն:

Մընօն ծիծաղից ցաւագար կերպով:

— Մընօ ա՛խպէր... եղնակը խօսք ունէր ասելու ու ծնոտը կապուեց:

— Երբ դուրս գնաս, էն դուռը պինդ ծածկիր, ցուրտ է, ձմեռ է:

— Մընօ, ախպէ՛ր, էրնէկ քեզ:

Պատասխան չը կար, վերստին լսուեց սանրերի չխկչխկոցը, վերստին մըգուքը սլացաւ թելերի միջից.

«Մայրի՛կ, մայրի՛կ»...

Սօսիկն էր զարթել, մօրն էր կանչում:

Ծերուկ ջուլհակը գործը թողեց մօտեցաւ երեխային.

— Կը գայ մայրիկդ բա՛լա, կը գա՛յ...

— Կը գա՛յ, կը գայ, կրկնեց եղնակը ու դուրս ընկաւ:

Եղնակը վազում էր փողոցներով, շները կատաղի հոխոցով յետեւից էին ընկել:

Եղնակը վազում էր ծեր ոտների վերջին ոյժով:

Գլխաբաց, մազերը խուխու, հովը ծեծում էր նրան, ցուրտը մտրակում, նա վազում էր անընդհատ:

Ու նրան թւում էր, թէ ողջ գիւղը, մի վիթխարի հրէշ, ահաւոր ու դաժան, ծեր ու մանուկ, կին ու աղջիկ շների հետ յետեւից ընկած՝ հալածում են ու հողմերի վզվզոցի մէջ նա յստակօրէն լսում էր սարսափելի երգը՝

Ապրի՛ս, ապրիս, Սէրօ ջան:

— Սո՛ւտ է, սո՛ւտ է, մռնջաց նա. մարդակերնե՛ր... ձեր հոգին... չա՛ն հոգի...

Հասաւ ջրաղացին. մօտեցաւ ջրտանը:

Աչնան գիշերուայ կատաղի հովի տակ ուռիները տերեւաթափ ու մերկ ճիւղերով վզվզում էին, հեծկլտում, ինչպէս լքուած ու քաղցած չան ձագեր: Երամից ուշացած ու մոլորուած մի կռունկի աղեկտուր կղղոցը լսուեց խաւար երկնքում:

Եղնակը մօտեցաւ ջրտանը. սեւ խոռոչ էր, ինչպէս գերեզմանի վիհ. վեց թեւանի փառը դառնում էր չառաչելով. ալիքները ընկնում էին իրար յետեւից, վայում ու փչրւում:

Եղնակը կռացաւ, փառն էր փնտռում, որ դառնում էր թանձր խաւարի մէջ բաղդի պէս:

«Չարխի ֆալագ, չարխի ֆալագ», մրմնջաց նա:

Կռացաւ, կռացաւ, աչքերը փակեց ու թափով նետուեց ջրտան սեւ խոռոչի մէջ:

Սրտապատառ մի ճիչ խառնուեց ջրերի որոտին. փառը իր յաղթ թեւերի մէջ առաւ մարմինը. կատաղօրէն գալարեց, մռնջաց ու կանգ առաւ:

Ջրաղացի ներսում քարը յանկարծ դադարեց

պտտելուց, ու ծերուկ Ջրաղացպանը մրթմրթալէն դուրս եկաւ նայելու, թէ ի՞նչ կայ։

Լուսանում էր . . . . . .

. . . . . .

Մի օր յետոյ Թիւնին գերեզման էր փորում Պօպօզ Ենգօի հետ։

— Ջրատար հալիւորը էն անիրաւ կնկայ ամօթանքից մեռաւ, հը՛ Թիւնի, ի՞նչ կ'ասես.

— Փորի՛ր, խորը փորիր, յի՛մար, եղաւ պատասխանը։

1925

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ԳՐԱԴԱՐԱՆ
ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

ՑԱՆԿ

1· Ճամբորդը 5

2· Ղէզօի Արտը 61

3· Երբ Ձիւնն Իջնում է 109

891.99
4-42

[3п.]

A II
79018